

Մ. ՆՈՒՄ 1666, ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՄՕՈՒՄՆԱՔ
ԿԿԳՂՕՈՒՆՄԷ ՂՈՒՈՏԿԵ

ՂՈՒՈՒՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



դրկտորի գիտական աստիճան: Ատենախոսության թեման հայ մեծանուն վիպասան Ռաֆֆու աթեիստական հայացքների վերլուծությունն էր: Այդ աշխատանքում խորը վերլուծության են ենթարկվում Ռաֆֆու աթեիստական հայացքները, նրա նյութապաշտությունը, պայքարը կղերականության դեմ: Գ. Հակոբյանի կողմից հրատարակվել են մի շարք մնայուն աշխատանքներ «Հայ հեղափոխական դեմոկրատների փիլիսոփայական հոգեբանության արտացոլումը սովետահայ «Հասարակական վերափոխման արտացոլումը սովետահայ գրականության մեջ» և այլն: Տպագրության համար պատրաստ է նաև պրոֆ. Գ. Հակոբյանի լայնածավալ աշխատությունը՝ «Ցեղասպանության քննադատությունը Ռաֆֆու ստեղծագործություններում», մի խնդիր, որը դեռևս անբավարար է վերլուծել գրողին նվիրված գրականագիտական գրականության մեջ:

1990թ -ին Գ. Հակոբյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1985-ին նա աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում որպես կրոնի աշխատել է պրոֆեսոր Գ.Հակոբյանը, սերտ կապերով կապված է եղել իր ծննդավայրի հետ, նրա միտքը միշտ զբաղեցրել է Գավառում բարձրագույն ուսումնական հաստատություն բացելու խնդիրը: Նրա համառ ջանքերով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 1993 - ին Գավառ քաղաքում բացվում է պետական համալսարան որի ղեկավարը դառնում է պրոֆեսոր Գ. Հակոբյանը: Այդ պաշտոնում նա իր ողջ ուժերը, եռանդը, կազմակերպչական փորձն ու գիտելիքներն դրել է Գավառի պետական համալսարանի կայացման, ղեկավարման և զարգացման աշխատանքների մակարդակի բարձրացման և զարգացման համար: Նրան հաստատություն ձևավորելու հարեանակվել գործին:

Արտանց շնորհավորելով պրոֆեսոր Գ. Հակոբյանին ծննդյան 70 - ամյակի առթիվ՝ ցանկանում ենք նրան առողջություն, երկար տարիների կյանք և գիտական-կազմակերպչական, ստեղծագործական բեղմնավոր գործունեություն:

ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ՂԱՎԱՍՏՈՒՄԻՆԵՐԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՆ ՈՐԴԵՆ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՀԱՅԱԿՈՐԾԱՆ ԸՄՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂՎԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ Գ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

Կրոնների, դավանանքների, հավատալիքների փոփոխության հարցերն ու խնդիրները ձգվում են դեպի մարդկության պատմության ալեհեր դարերի խորքերը: Ի տարբերություն երկու համաշխարհային կրոնների՝ բուդդայականության և քրիստոնեության, մահմեդականությունը ավելի երիտասարդ կրոն է: Չնայած մեր թվարկության 7-րդ դարի սկզբներին և իր կրոնադավանաբանական հիմնական գաղափարախոսությունը վերցնելով Աստվածաշնչի Զին Կտակարանից, մասամբ՝ Ավետարաններից, բուդդայականությունից, արևելքի բազմաթիվ կրոններից ու իրենց արաբական հին հավատալիքներից՝ ձևավորվեցին «Ղուրանը», «Սուրանը», «Շարիաթը» և մահմեդական կրոնի բազմաթիվ սուրբ գրքեր: Նպատակ չունենալով քննարկել մահմեդական կրոնի նախասկզբնական շրջանում ձևավորված սուրբ գրքերի գաղափարախոսությունը՝ նշենք, որ այն ևս մարդասիրական էր, բայց ժամանակների ընթացքում այն փոխվել է և վերածվել նոր բարձրացող ազգի՝ արաբների գաղափարախոսության՝ ամբողջովին տարանջատվելով համաշխարհային երկու կրոնների ելակետային բարոյական սկզբունքներից:

Չնայած 7-րդ դարում մահմեդականությունը որպես նոր կրոն չէր կարող չունենալ իր առանձնահատկությունները: Ամենից առաջ այն արտացոլում էր արդեն վեր բարձրացող հարուստ խավերի շահերը, այդ նպատակով էլ, բնականաբար, նրա կրոնադավանաբանական ուղղվածությունը պետք է հանգեր այն գաղափարին, որ ընչազուրկ արաբ բեղվիմական ցեղերը պետք է իլու - հնազանդ կերպով հպատակվեին իշխողներին. մուսուլմանությունը հենց նշանակում է հնազանդություն: Նրանք պետք է ունենային մեկ հավատք դեպի Ալլահը, քանի որ Սուլիմանը սկզբից ևեթ հռչակեց, որ «չկա ուրիշ աստված, քան Ալլահն է, իսկ Սուլիմանը՝ նրա մարգարեն»:

Այսպիսով բացառվում էր մյուս ժողովուրդների աստվածների գոյությունը, և միակ մարդը, որ կարող էր կապ ստեղծել Ալլահի և մարդկանց միջև, Սուլիման մարգարեն է, և նրա պատգամներն

ճեղքով ժղսմս 'ճուժսգը վնջյոռւոփ քոիկոյոռւոյ ճվնսսի վյոռւոսո սյ ճրսիյոսո
մյոսննսյոռւովւյ ճնսւոյո ճրսսգյոյոսննսոռւոթ : (մնսն իսիւ) սգյոյոսննսոռւոփ
ոյվնչիսի ժղսմս 'սգյոսսիոսյոյ ոյոհոսնոի սսոյ ոյվնչիոսսգիոյոյոսի 'ոյվոսսսսսս
սյ իոնոյո ոյսս 'ճրսոոյոյ ոյոս վյոսոոոոոոնն : վյոսոոոոոնն, մյոսոոոոոնն
'իոսո ոյոննսոսգիոսսսսս վոսս
ոյոնոյոոյոսս սսս 'սվոնոյոոյոննն ճչիժոյի յճվոյ վյոսոոոոոնն, ոյ վոսսսսսսս
ոյվյոսիոիւ 668, ոգիոոյոսիոյճսզի սսոգսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսս
8 ոգիոսսսսսսսսսս ոյ իոնննզսսսն ոյվյոսիոիոսս մյոսոոոոոնն, քոոիո
ճվյոռճսռիոյոյոյոս ոյոննսոնիոսսսսս սսոսոյ - սոյոննն : մյոսոոոոոնն
ճնսսոյո ոննոյոսսս
իսլչիոսսնն ոյվյոսոոոոոնն, ճզսսսսսսսսսս

թուրքացնել, որ Թուրքիայում բացի թուրք ազգից ուրիշը չլինի, որովհետև միակ ճշմարիտ կրոնը մահմեդականությունն է, Ալլահի միակ ընտրյալ ժողովուրդը թուրքն է:

Ներկայացնելով իսլամի էությունը՝ Բաֆֆին գրում է. <<Նախապաշարմունքները մուսուլմանների մեջ, մահմեդականության չպատկանող վերաբերությամբ, հասնում էին խելագարության: Ինչ ազգ չէր հետևում իսլամին, նա համարվում էր պիղծ, գրկված թե այս աշխարհի և թե հանդերձյալ կյանքի երանություններից, որոնց պատրաստել էր Ալլահը: Այս պատճառով էլ մահմեդականները,- շարունակում է Բաֆֆին,- ոչ միայն խորը ատելությամբ էին լցված դեպի այլակրոնները, այլև մեղք են համարում սերտ հարաբերություններ ու շփում ունենալ նրանց հետ:

Մահմեդականը չէր ուտում կերակուրը, - գրում է Բաֆֆին,- որ պատրաստված է այլակրոնի ձեռքով, նա չէր հագնում հագուստը, որ գործված է այլակրոնի ձեռքով, նա իր տան մեջ չէր բանեցնում կարասիք, որոնց արհեստագործել էր այլակրոն մարդը, մի խոսքով, նա պիղծ էր համարում և այլակրոնների անձը, օրինակ, մի հայ, մի հրեա, մի ասորի անձրևային օրերում թաց հագուստով չէին կարող քսվել մահմեդականին, այս համարվում էր սրբապղծություն և անգոգույշ հանցավորը կրում էր իր պատիժը >>¹: Մահմեդականների կողմից կենցաղային նման վարքագիծը բխում էր իրենց կրոնի սկզբներից, քանի որ ամեն մի կրոն նույն հասարակության, մանավանդ իրեն դավանած ժողովրդի վրա մեծ ազդեցություն է ունենում, երբ նրանում եղած օրենքները և վարդապետություններն ընդհանուր մարդասիրական ու խորը տարբերություն է դնում իր այսինքն երբ այն խտրականություն ու խորը ժողովրդի հոգևոր պետքերը հավատացյալների ու այլ ազգերի միջև, հատկապես երբ օրենքները գտնվում էին հոգևոր դասի ձեռքում, որոնք բացի իրենց սահմանած օրենսդրական բավարարելուց գործադրում էին արդարության և պատժի սահմանողները, կարգ, որը ավանդել կարգը: Նրանք էին արդարության և պատժի սահմանողները, կարգ, որը ավանդել էր Ալլահը մուսուլմանների միջնորդությամբ: <<Ամեն գործ,- գրում է Բաֆֆին,- թե քրեական, թե քաղաքական, վճռվում էր նրանց ձեռքով >>: Այստեղ ևս

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 4, էջ 37, 1966թ.

այլադավանները գրկվում էին շատ իրավունքներից, որ վայելում էին մահմեդականները: Այսպես, եթե քրիստոնյան որևէ դատաստանական գործի մեջ էր մտնում մահմեդականի հետ, գործը քննում էր մուլլան: Քրիստոնյան իր ճշմարտությունը ապացուցելու համար չէր կարող վկաներ ներկայացնել իր հավատակիցներից, քանի որ քրիստոնյանի վկայությունը դատարանում ընդունելի էր համարվում միայն այն ժամանկ, երբ վերջինս վկայություն կտար հօգուտ մահմեդականի, իսկ ընդդեմ մահմեդականի վկայելու իրավունք չուներ: Այսպիսի դեպքերում քրիստոնյայից պահանջվում էին մահմեդական վկաներ, բայց ոչ մի մահմեդական երբեք չէր փորձի քրիստոնյայի օգտին վկայել, որովհետև այն կհամարվեր սարսափելի մեղսագործությունը: Յետևաբար բոլոր դեպքերում ճշմարտությունը պարզել հնարավոր չէր լինում: Բացի այդ, դատարաններում փաստաբաններ կարող էին ծառայել միայն մահմեդականները, իսկ վերջիններս երբեք չէին պաշտպանի այլադավանների շահերը: Այլազգին ինքը պետք է պաշտպաներ իր շահերը, այն էլ այնպիսի դատարանում, որի օրենքներին, այսինքն շառիաթին նրանք ծանոթ չէին: Արդյունքում այլադավանները դատարանում պարտվում էին: Այդ կապակցությամբ Բաֆֆին գրում է. << Մահմեդական օրենքով վկայությունը նույն ուժը և զորությունը ունի, որպես գրավոր ապացույցը: բայց ոչ մահմեդական ազգերի վկայությունը մահմեդականի վերաբերությամբ չի ընդունվում: Ահա օրենքի այս խտրության տակ կարող են ծածկել ամեն տեսակ չարագործություններ: մահմեդականը մի հայ սպանել է, մի աղջիկ բռնաբարել է, մյուսին այսինչ բանը գողացել է, և այս բոլորը պատահել են շրջանում, իհարկե վկաները նույնպես հայ կլինեն: բայց նրանց վկայությունները չեն ընդունվելով, հանցանքը մնում է անպատիժ: Ոչ մահմեդականի վկայությունը այն ժամանակ կարող է ընդունված լինել, երբ տրված կլինի մահմեդականի օգտին: Եվ այսպես, մահմեդական կրոնը գլխավոր արգելակներից մեկն է Տաճկաստանում արդարության և քաղաքացիության հավասարություն մտցնելու >>²:

Ի սկզբանե մահմեդական կրոնը իսլամ չդավանող ազգերին սկսեց գրկել նրանց բարոյական և նյութական արժեքներից՝ ստորադասելով ու ծաղրի

² Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 10, էջ 433, Երևան, 1991թ.

ենթարկելով նրանց: Անշուշտ, կրոնական խտրականության վերը բերված փաստերն ակնառու ապացույց են այն բանի, որ մահմեդականությունը իր առջև խնդիր չէր դրել հիմնավորելու, թե նոր կրոնը իր առավելությունը ուներ քրիստոնեությունից կամ մյուս կրոններից: Նպատակն այն էր, որ իսլամ ընդունած ազգերը բոլոր կողմերով պետք բարձր դասվեն այլադավաններից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերություններում իշխեն նրանց: Բացի այդ, խորամանկ շահաթը գերադասելով իր կրոնը՝ որոգայթ է լարում ուրիշ ազգությունների դեմ նրանց որսալու մահմեդականության գիրկը: Թուրքիայում որպես ընդունված կարգ այլազգիների աղջիկների գողանալն ու հափշտակելը, նրանց բռնի մահմեդական դարձնելը սովորական երևույթներ էին դարձել, մասնավոր որ մի անգամ իսլամ ընդունածը նորից իր կրոնի վերադառնալուց զրկվում է: Բայց նույն շահաթը գործադրում էր ավելի խարդախ ու խորամանկ հնարներ, որոնք գրավում էին այլադավանի հաճությունը թողնելու իր կրոնը և ընդունելու իսլամը: Այս կապակցությամբ Բաֆֆին գրում է. «Մահմեդականությունն ընդունող քրիստոնյան, բացի նրանից, որ գրավում էր նրանց հարգանքը և վրեժխնդիր էր լինում իր հին կրոնակիցներից, եթե ուներ մեկի հետ ոխ կամ թշնամություն, այլև նա տեր է լինում բոլոր թե շարժական և թե անշարժ ժառանգությանը, որը պատկանում էր նրա ազգակիցներին: Այլ խոսքով՝ երբևիցե գերդաստանից մեկը մահմեդականություն ընդունելով, իրավունք էր ստանում տիրել բոլոր կայքերին, ինչ պատկանում էր նույն գերդաստանին: Մի այսպիսի արտոնություն կարող էր գրավել շատ անբարեխիղճ քրիստոնյաների շահասիրությունը, մասնավոր երբ նրանք ընտանեկան անբավականություններ ունեին միմյանց հետ»³ :

Իսլամի խարդախությունը դրսևորվում էր նաև հոգևոր ուղորտում, մասնավոր այնպիսի խավար ու տգետ ժամանակներում, երբ ոգևորության համար բոլոր պայմաններն առկա էին: Այսպես, ըստ մահմեդականության նրա գիրկը ընդունված նոր այլադավանը հանդերձյալ աշխարհում վայելում էր մեծ արտոնություն, նրա որդիք մինչև յոթը սերունդը երկնքի դատաստանի առջև

3. Բաֆֆի, երկերի ժողովածու, հատոր 4, էջ 382-383, 1956թ.

ազատ էին մնում ամեն տեսակի պատասխանատվությունից, նրանք արդարացվում էին բոլոր կարգի այն հանցագործությունների պատժից, որոնք գործել էին կյանքում: Նրանք մահվանից հետո առանց հայտնի փորձի մտնում էին դրախտ վայելելով երկնային ամեն բախտավորություն ու բարիք:

Բացի այդ, մահմեդական կրոնի առավելությունները ցուցադրելու նպատակով իշխող ազգերի հոգևորականները մշտական սովորություն էին դարձրել այլադավանների կրոնները ծաղր ու ծանակի ենթարկելը: Երբ տեղի էր ունենում մահմեդական որևէ տոնակատարություն, հարսանիք, խնջույք կամ համոզես, ուրիշ շատ կատակերգությունների թվում բերել էին տալիս հայոց քահանաներին, ստիպում էին իրենց եկեղեցական սպասքով պատարագ մատուցել կամ ծեսեր կատարել, իսկ վերջում քահանայի սաղավարտը դնել շան գլխին կամ շուրջառը զցել կենդանիների վրա ու խնկարկել նրանց: Իսկ երբ տերտերները հրժարվում էին մնան անարգ ծիսակատարությունից, կամ սոսկալի ծեծում էին նրան, կամ սպանում:

Մահմեդականների կրոնական մոլեռանդությունները հասնում էին ծայրահեղությունների, մասնավոր պատերազմների ժամանակ, երբ տեղի էին ունենում զորքերի տեղաշարժեր. հայոց վանքերն ու եկեղեցիները վերածում էին զորանոցների, իսկ ընդարձակ սուրբ տաճարները՝ ձիերի ախոռների, միաժամանակ թալանելով եկեղեցական սպասքները: Շատ անգամ եկեղեցական շինությունները դարձնում էին ոչխարանոցներ կամ անասնագոմեր: «Ինչ հայ կարող էր ընդդիմանալ, ով կարող էր մի խոսք ասել, նրա լեզուն անմիջապես կկտրեին >>, - գրում է Բաֆֆին:

Մահմեդական լծի տակ ապրող քրիստոնյաները իրավունք չուներին վերականգնելու իրենց քանդված վանքերը, եկեղեցիները, իրենց նվիրական սուրբ օջախները, հնչեցնել եկեղեցիների զանգերը. այդ արգելված էր ամենախիստ պատժամիջոցներով:

Վերոհիշյալ բարբարոսական գործառույթներից ավելի սարսափելի էին քրիստոնյաների ընտանեկան պատվի պղծումը: Այդ կապակցությամբ Բաֆֆին գրում է. «Մահմեդականների հալածասիրությունը ոչ միայն բռնաբարում էր քրիստոնյաների կրոնական ազատությունը, ոչ միայն սրբապղծում էր ամեն ինչ, որ նրանց համար նվիրական և աստվածային էր, այլև արատավորում էր նրանց

Մատթի, երկու տարի, 1991թ. 10, էջ 435, երկու 1991թ. 468

ցուցանելու և արդյունքները համեմատելու համար հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ, որոնք ցուցաբերում են, որ հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ, որոնք ցուցաբերում են, որ հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ...

Հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ, որոնք ցուցաբերում են, որ հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ, որոնք ցուցաբերում են, որ հարկադրված ենք համարել, որ այս պահին մենք ունենում ենք միայն մի քանի փոքր օրինակներ...

վաղուց չէր ցանկանում նկատել, քանի որ ժամանակի եվրոպական թնդանոթների առջև արդեն նշանակություն չունեին կրոնական մոլեռանդությամբ զինված անկիրթ, խառնիճաղանջ անբոխի գրոհները դարերով զենքի երես չտեսած, հյու-հպատակ և արդեն վաղուց ստրուկներ դարձած քրիստոնյա ժողովուրդների վրա: Յենց այդ նպատակով էլ գրել է ներքոհիշյալ տողերը մեծ մարդասեր Բաֆֆին, որպեսզի արթնացներ եվրոպական քաղաքական գործիչների և ուզմագետների, ինչու չէ, նաև <<քաղաքակիրթ>> կոչվող ժողովուրդների քաղցած սիրտը, բայց հասկացավ եվրոպան ինչ բան է <<Սրբազան պատերազմը>>, և որքան չարիքներ քաբնված էին նրա ներքո:

Կողոպուտ, հարստահարություն և կոտորած- ահա ինչ բան է <<Սրբազան պատերազմը>>, և այդ անգթությունները նա գործ է դնում ոչ միայն թշնամու դեմ այլ ամեն անձնավորության, որ չի պատկանում իսլամին:

Այնուհետև Բաֆֆին բացահայտում է սրբազան պատերազմի նպատակադրվածությունը. նախ որքան հնարավոր է կոտորել կենդանի մարդկանց՝ բնիկներին, պարբերաբար քչացնել նրանց քանակությունը; երկրորդ՝ ահաբեկել նրանց որպեսզի թողնեն իրենց բնիկ հայրենիքը և բռնեն գաղթի ճանապարհը, արտաքսվեն երկրից; երրորդ՝ մահվան սպառնալիքով դավաճափոխ անել ոչ միայն քրիստոնյա ազգերի հատ ու կենտ գյուղորայքը, այլ հսկայական զանգվածների: Չորրորդ <<Սրբազան պատերազմը>> ամենադյուրին միջոցն էր համախմբելու մահմեդական մոլեռանդ դատարկելու կյանքից և ապրուստից, քաղաքականություն, որը քրիստոնյաներին կոտորելուց, դավաճափոխ անելուց բացի թուրքական գանձարանին բերում էր հսկայական օգուտ:

<<Իրավ, - գրում է Բաֆֆին,- շատ հաճելի բան է ավազակաբարո ազգի համար արճահեղությունը, հարստահարությունը և կողոպուտը, մանավանդ երբ դրանք սրբված են լինում կրոնի թույլտվությամբ, մանավանդ երբ նրանց գործողներն ունեն երկու տեսակ վարձատրություն՝ աշխարհային և երկնային, առաջինի մեջ նրանք գտնում են երկրային հարստություն, իսկ երկրորդի մեջ՝ դրախտի անսպառ զվարթություններ...>>⁶: Շարունակելով իր միտքը՝ Բաֆֆին նշում

⁶Նույն տեղում

է, որ Փոքր Ասիայի մեջ բնակվում են բազմաթիվ կիսավայրենի ցեղեր, որոնք իրենց ապրուստի հիմնական վաստակը ձեռք են բերում ավազակությամբ, և <<Սրբազան պատերազմը>> նրանց առջև միշտ բաց է անում խիստ ընդարձակ ասպարեզ: Այդ ցեղերին են պատկանում քրդերը, թուրքմենները, չերքեզները, արաբները, ղուրչիները, տաճիկները և այլ մահմեդական ցեղեր, և թուրքիայի կամավոր զորական ուժը հիմնականում կազմվում էր այդ ազգություններից, որոնք, նշում է Բաֆֆին <<կարծես թե կոչված են նրա համար միայն, որ կողոպտեն ու կոտորեն տեղային ու հպատակ և խաչասեր տեղային ժողովուրդը>>⁷: Եվ որպես վաստ Բաֆֆին բերում է 1877թ. մայիսի 14-ից մինչև 28-ը ընկած ժամանակահատվածում Չաղպատ Գավառի հայ բնակչության կոտորածը և ավարառությունները՝ թուրքական զորքերի կողմից, որոնք 15 օր շարունակ քալանում են Չաղպատի Գավառի 24 գյուղեր, որոնցից 19-ը հայաբնակ էին, իսկ 5-ը՝ ասորաբնակ: ըստ հեղինակի և ժամանակի պատմագետների, բնակիչներին ոչինչ չեն թողնում, թալանում են մինչև նրանց վրայի եղած հագուստները; նույնիսկ քանդում են սուրբ Բարդուղիմեոսի գերեզմանը, որպեսզի թալանեն նաև այնտեղ եղած կարծեցյալ թանկարժեք իրերը: Այս մասին Բաֆֆին գրում է, <<Սեզ դժվար է այժմ գնահատել բոլոր վնասը, դա մանրամասն քննության կարոտ է, միայն այսքանը կասենք, որ Չաղպատ գավառում, բացի վանքից, իսպառ կողոպտված են քսանչորս գյուղորայք>>: Չիշյալ գյուղերի բնակիչներն էին անասնապահները, որոնք անթիվ ոչխարների հոտեր էին դարձանում և միևնույն ժամանակ երկրագործներ ու մասամբ վաժառականներ էին: Գյուղացիների մոտ ոչինչ չեն թողնում, թե անասուն, թե տնային կայք և թե երկրագործական, բոլորը թալանում են և մինչև անգամ բնակիչներին հագուստից մերկացնում են և կոտորում>>⁸: Կենդանի մնացածներից մազապուրծ կերպով միայն 1000 ընտանիք է ազատվում յաթաղանից և փախչում Պարսկաստանի Սալմաստ գավառ հայերի մոտ պատսպարվելու: <<Իսկ մի մասը,- շարունակում է Բաֆֆին,- Բռնի մահմեդական է դարձել, մի մասը կոտորվել են, իսկ մնացյալը գերի են տարած>>⁹:

⁷Նույն տեղում, էջ 469

⁸Նույն տեղում էջ 469

⁹Նույն տեղում

Քրդերի կողմից գերի տարած հայերին, որոնց տեղավորել են պարսկական Սոմայի կոչված գավառը, Ռաֆֆին հայտնում է, թե «Կթողնեն արդյոք նրանց քրիստոնեության մեջ, հայտնի չի: Ահա սրբազան պատերազմի հետևանքը, Սուլթանի հպատակ, խաղաղասեր քրիստոնյան բարբարոս քրդերի անգթության և մոլեռանդության զոհ է դառնում»¹⁰: Նկարագրելով Հաղպատի ցավալի անցքերը, Ռաֆֆին սակայն չի բավարարվում դրանց փաստագրումով, այլ կատարում է լայն ընդհանրացում, որ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում Փոքր Ասիայի բոլոր քրիստոնյաները արդեն նույն վիճակի մեջ են: Ամեն մի գավառից լվում է հարստահարության, կայքի հափշտակության, կանանց բռնաբարության, թալանի և կոտորածի ծայներ: Քրիստոնյաների կյանքը Փոքր Ասիայում մի մագից է կախված,- նշում է Ռաֆֆին, ամեն ռուպե նրանք սպասում են տեղական մահմեդականների կողմից հարձակումների, և այս տագնապալի վիճակի մեջ են գտնվում հատկապես հայերը, և Ռաֆֆու մտավախությունը դեռևս ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին հիմնավոր էր. «Դրանք դատարկ խոսքեր չեն,- գրում է Ռաֆֆին,- այլ հիմնված են փաստերի վրա: Բայազետի հայոց սարսափելի անցքը թող երկրորդ ապացույցը համարվի: Ինչով էին մեղավոր բայազետցիք, ի՞նչ էին արել, ու՞մ դեմ զենք էին բարձրացրել >>¹¹:

Հիշյալ հողվածում Ռաֆֆին նշում է միայն Հաղպատի և Բայազետի դեպքերը, իսկ «Իսենքը» վեպում արդեն պատմաբանին հատուկ հնտությամբ և գեղագիտորեն խորապես վերլուծում է արևմատահայաստանում կատարված բոլոր դեպքերը:

«Սրբազան պատերազմների» արհավիրքները ցավոք չեն սահմանափակվել հայկական այս կամ այն գավառներով միայն, այլ այն որպես մահմեդականության ուղեկից պարբերաբար կրկնվել են ոչ միայն հայերի նկատմամբ:

¹⁰ Նույն տեղում
¹¹ Նույն տեղում, էջ 474

«Սի երկիր տիրել են, հետո խաղաղասեր ժողովրդին սրի ու կրակի մատնել,- գրում է Ռաֆֆին,- դա լինում էր շատ հին դարերում, այդ անում էին մոնղոլները: Այժմ ինչով են զանազանվում թուրքերը իրանց վայրենի նախնիներից»¹²:

Իսկապես պատմական փաստ է, որ տասնիններորդ դարում իսլամին պատկանող ոչ մի ժողովուրդ, բացի թուրքերից սրբազան պատերազմի դրոշակ չի բարձրացրել: Թուրքական սուլթանիզմն էր այն ոճրագործ տերությունը, որ ոչ մի բանի առջև կանգ չէր առնում, միայն թե կարողանար իր տերության մեջ եղած այլադավաններին ոչնչացնել: Բացի հայերից նման եղեռնագործություններից անպակաս էին այն բոլոր ազգերը, որոնք դեռևս ճակատագրի բերումով, թուրքահպատակներ էին դարձել:

Այսպես Բալկանյան երկրներին տիրելուց հետո Թուրքիան առանց երկբայելու կիրառեց այն քաղաքականությունը, ինչ Փոքր Ասիայի քրիստոնյաների նկատմամբ: Եվրոպական լուսավորյալ խոշոր բոլոր տերությունները փորձեցին չնկատել բալկաններում տեղի ունեցող թուրքական սուկալի ոճրագործությունները, բայց երբ 1877-1878թթ. պատերազմի ժամանակ սկսվեցին սուկալի կոտորածները, և երբ հանուր Եվրոպայում խոսակցություն բացվեց Բալկաններում գործված թուրքական բարբարոսությունների մասին, Եվրոպան չէր ուզում հավատալ, թե թուրքը այն աստիճան անբարոյական է, որ կարող է դիմել նման եղեռնագործությունների: «Բայց Բուլղարիայի սարսափելի անցքերը, - գրում է Ռաֆֆին,- փոքր ինչ շարժեց Եվրոպայի մարդասիրական զգացմունքը: Իսկ այժմ Հայաստանի հրդեհված խրճիթների մուխն ու բոցը, անմեղ կանանց անպատվությունը, հայերի լացն ու մայրերի հառաչանքը և թափված արյան բողբոջ՝ արդյոք կազդեն մարդասեր Եվրոպայի սրտին»¹³:

Մեծ մտածողն իր համարյա բոլոր ստեղծագործություններում, երբ վերլուծել է դավաճանների խտրականության հարցերը, խորին զայրույթով է խոսել Եվրոպական մեծ տերությունների աններելի անտարբերության մասին, որոնք բաց ու աշկարա արևի լույսին դավաճանափոխ են անում կամ թալանում ու կոտորում

¹² Նույն տեղում
¹³ Նույն տեղում

են քրիստոնյաներին: Բնութագրելով թուրքահպատակ քրիստոնյաների աղետալի վիճակը հեղինակը դիմում է առածների՝ նշելով, որ Թուրքիան այժմ նմանվում է այն երեխային, որը ձեռքին բռնած ունի մի ծիտ, և դաժանորեն չարչարում է նրան: Նրանից ավելի տարիքով մի երեխա ցանկանում է ազատել ծիտիկին, բայց առաջին երեխան երկրորդին պատասխանում է <<կխեղդեմ ու քեզ չեմ տա...>>¹⁴: Այդպես էր մտածում Թուրքիան:

Րաֆֆին պարզ ու հստակ էր տեսնում հայի ապագան ու կռահում, որ շուրջ բառասուն տարի հետո Արևմտահայաստանում այլևս հայ չի մնա: Սակայն նա ոչ միայն սոսկ փաստագրում էր դեպքերն ու եղելությունները, այլև առաջարկում էր գիտականորեն հիմնավորված իր տեսակետները, որոնք կարող էին կանխել Թուրքիայի սանձարձակ վայրենությունները: Նախ նա իր ցասումն է արտահայտում թուրքական սուլթանիզմի հասցեին, որի դարերի խորքից եկած բաղաձայն գործերը երբեք մարդկային դիմագիծ չեն ունեցել: Բացի այդ, վերլուծելով մահմեդականության էությունը, Րաֆֆին վեր է հանել թուրքական աշխարհիկ և կրոնական մարդատյաց գործելակերպը, նրանց գաղափարական սերտաճունները քրիստոնյա ազգերի ծրագրված ոչնչացման վերաբերյալ: Նա խորապես քննադատել ու անարգանքի սյունին է գամել նաև եվրոպական լուսավորյալ երկրների անտարբերությունը քրիստոնյաների հալածանքների նկատմամբ: Այսպես, սույն հոդվածում Րաֆֆին գրում է. <<Ինչով կարելի է այդ չտար Թուրքիային այդ ավազակային ձեռնարկությունը, որ կոչվում է <<Սրբազան պատերազմ>> : Դրատարակելով <<Սրբազան պատերազմը>>, հրատարակեց նա քրիստոնյաների մահվան վճիռը, թե հպատակ լինեին նրանք, և թե օտարերկրացիք: Եվրոպան կարող էր արգելել, քանի որ ռուս-տաճկական պատերազմը կրոնական ոչինչ չուներ, քանի որ ռուսները մահմեդականությունը ոչնչացնելու և քրիստոնեությունը տաճիկների մեջ մտցնելու նպատակ չուներ >>¹⁵: Գետնությունը պարզ է. Թուրքիան <<Սրբազան պատերազմ>> է

¹⁴Նույն տեղում
¹⁵Նույն տեղում, էջ 474-475

հայտարարում ոչ թե իր ազգը կամ կրոնը փրկելու նպատակով, այլ իբր իր կրոնի փրկության տակ քրիստոնյաներին ոչնչացնելու: Եվ ահա Րաֆֆին ահազանգում է ոչ միայն հայերին, այլ թուրքահպատակ բոլոր ազգերին՝ գրելով. <<Ինչ ասել է գրգռել ու վրդովել ամբողջ մահմեդական աշխարհը, կատաղեցնել նրանց կրոնական մոլեռանդությամբ: Այսպիսի դեպքերում ոչ միայն տաճկահպատակ քրիստոնյայի կյանքը վտանգից ազատ չէ այլ երկրագնդի վերա քրիստոնյան նույն վիճակի է ենթարկվում, ուր նա մահմեդականի հետ է ապրում: Ցույցերն արդեն հայտնվում են... Բայց հասկանում է եվրոպան... >>¹⁶:

Րաֆֆին իր բազմաթիվ ստեղծագործություններում անդրադառնալով քրիստոնեական և մահմեդական կրոնների համեմատական բաղդատությանը, միշտ էլ վեր է հանել իսլամի ագրեսիվ, ցայտուն կերպով դրսևորված թշնամանքը դեպի այլադավան ազգերը, միաժամանակ քննադատել է քրիստոնեության հանդուրժողականությունը, որ քրիստոսը աշխարհի գալով ժողովուրդներին պատգամեց սիրո, եղբայրության, հավասարության սկզբունքները՝ մերժելով Դին Կտակարանի <<Ակն ընդ ակն>>, <<Ատամ ընդ ատամ>> պատվիրանները: Իսկ նրանից մտ յոթը դար հետո արաբական տոթակեզ անապատներում ծնվեց մի մարդ, որը ոչ միայն ժխտեց քրիստոսի մարդասիրական, եղբայրական սիրո գաղափարները, այլև մարդկանց մեջ բորբոքեց մախնադարյան մարդու գազանային բնազդը, թե երկրագնդի ապրող մարդիկ, որոնք իսլամադավան չեն, պետք է ոչնչացվեն կամ ընդունեն իր իսկ կողմից սահմանված շարիաթի օրենքները, թե՛ ով քո հավատից չէ, քո թշնամին է, ուստի վարվիր նրա հետ այնպես, ինչպես կամքը կթելադրի, և քո կրոնը, բռնի թե համոզմամբ տարածիր աշխարհի ժողովուրդների վրա: Այս մասին Րաֆֆին գրում է. <<Թե ինչպես է կլանում մահմեդականությունը քրիստոնյա ժողովուրդներին, բավական է աչքի առաջ ունենալ այն բազմաթիվ մահմեդականացված հարյուրավոր գյուղորայքը, որ այժմ կարելի է տեսնել Փոքր Ասիայի ամեն կողմերում>>:

Չայերի դավանափոխության գործոնը ավելի ահավոր ու աղետալի չափերի է հասնում նաև այն պատճառով, որ կրոնամոլությունը մոլեգնում է ոչ միայն շարքային տոգետ ամբոխի մեջ, այլ ընդգրկում է կառավարական լայն շրջանակներ:

¹⁶Նույն տեղում

պատճառներով չէր կարողանում իրագործել ժամանակավոր կառավարությունը: Իրականացված փաստի դժբախտությունը կայանում է նրանում, որ Բուլձևիկյան նոր իշխանությունը հաստատվեց ժողովրդին օտար կոմունիստական գաղափարների համար: Պետության գլուխ կանգնեց մի ուժ, որը անխաթար, ֆանատիկ հավատացած էր, որ միայն ինքը կարող է իրականացնել պատմական օրինաչափությունը ստեղծել առանց շահագործողների հասարակություն, ապացուցելու համար իր իրավասությունը այդ նոր միսիան իրագործելու:

Ռուսական պետականության դրաման կայանում է նրանում, որ կոմունիստները եկան իշխանության այն ժամանակ, երբ կապիտալիզմը սկսեց իր առաջընթաց զարգացումը, որին պետք է տոն արվեր, թափ հաղորդվեր, ամրապնդվեր, այլ ոչ քանդվեր: Ռուսաստանին պետք էին այրեր, որոնք կարող էին հետևողական, նպատակասլաց իրագործել երկրի դեմոկրատական զարգացումը, այլ ոչ ֆանատիկներ, որոնք ուժով, առանց առարկայական հիմքի ներդնեին իրենց սոցիալիստական ծրագրերը, առաջնորդվելով փորձը փորձանք չէ կարգախոսով: պետք է նշել, որ այդպիսի իրադրության հնարավորությունը կանխատեսել էր էնգելսը դեռևս 1850թ. նա գրում էր, որ եղածից ամենավատագույնը այն է, որ հեղափոխական կուսակցությունը ստիպված անհրաժեշտաբար տեր է դառնում իշխանության այն ժամանակ, երբ սոցիալ-տնտեսական իրադրությունը դեռևս պատրաստ չէ այն դասակարգերի իշխանությանը, որոնք իրենց միջոցներով են գալիս այդ իշխանությանը: Այս դեպքում իշխանությունը կներկայանար կուսակցությամբ, այլ ոչ դասակարգով: Կա նաև իրադրության հասունացման այլ ընթացք, երբ արթնացած պրոլետարական մասսան սեփական ծրագրերով ու ղեկարացիաներով շղթայված կուսակցությունը ստիպված են կատարել «կոմունիստական փորձեր ու թռիչքներ»: այդ դեպքում կոմունիստներին սպասվում է ոչ միայն ֆիզիկական բնաջնջում, որը գլխավորը չէ, այլ հետագա պատմական զնահատականը կլինի բացարձակ բացասական, մեզ կհամարեն ոչ միայն այլակերպվածներ, որը սովորական կլինի, այլև դատարկամիտներ, որը մշանակալի չափով առավել վատ է: Հատկանշական է, որ նման փայլուն կանխատեսման մեջ հայտնվեցին Բուլձևիկները, թայց արդեն պրակտիկայում: Սակայն ի տարբերություն հակադրության էնգելսի, որը շատ քաղաքավարի զգուշացնում էր խուսափել

ժամանակից շուտ քաղաքական իշխանության տիրանալու, այլապես այն սպառնում էր ոչ մայն կոմունիստական ծրագրերի խորտակում, այլ կոմունիստական ամբողջ շարժման հեղինակազրկում, Լենինը նպատակագրված գնում էր իշխանության գրավման, նախապես իր իշխանամետությունը բացատրելով, որ փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված իրադրության մեջ միայն Բուլձևիկների կուսակցությունը կարող էր մինչև վերջ իրագործել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները և այնուհետև արշավել կոմունիստական ապագա:

Ետհոկտեմբերյան առաջին ամիսներին Բուլձևիկները ձեռնարկեցին մի շարք համադեմոկրատական միջոցառումներ՝ վերացվեցին դասային արտոնություններն ու չինները, եկեղեցին առանձնացվեց պետությունից: Ընդունվեց քաղաքացիական ամուսնության դեկրետ: Բուլձևիկները փորձ կատարեցին բարելավել իրենց սոցիալական հիմքի բանվորների դրությունը: Ընդունվեց 8-ժամյա աշխատանքային դեկրետ, աշխատանք չունեցողների համար սահմանվեց ապահովագրական միջոցառումներ, հիվանդության նպաստներ: Սակայն հասունացող տնտեսական ետհոկտեմբերյան ճգնաժամը և երկրի քաղաքական ծանր վիճակը, կամա թե ակամա, ձեռնարկված դեմոկրատական միջոցառումները հավասարեցնում էին զրոի: Կառավարության ներքին մեղծ քաղաքականությունը և մասսաների հեղափոխական ստեղծագործական ակտիվության վրա հենվելը բացատրվում էր ամենից առաջ իշխանության թուլությամբ, պետական իշխանության նոր ապարատի բացակայությամբ: Այս դեպքում բացի հեղափոխական բանվորների, զինվորների ու նավաստիների վրա հենվելուց, Բուլձևիկները ուրիշ հենարան չունեին, և որոնց միջոցով էլ տեղերում աստիճանաբար ստեղծում էին իրենց իշխանությունները: Բրեստով սկսած «հեղափոխական ռոմանտիզմից» դեպի գոյության պայքար, իր արտահայտությունը գտավ ներքին քաղաքականության մեջ: Սովետական իշխանության տնտեսական քաղաքականության ընդհանուր սկզբունքները, անցումն էր համընդհանուր դեմոկրատական միջոցառումներից դեպի քաղաքականություն, որը չէր համապատասխանում ժողովրդի շահերին, սակայն հետապնդում էր մի նպատակ՝ պահպանել իշխանությունը: Ավելին այդ շրջադարձի նպատակահարմարությունը հիմնավորվում էր մարքսիստական գաղափարախոսությամբ: Նման քաղաքականությունը ստացավ «Ռազմական կոմունիզմ» անվանումը, որով Բուլձևիկները մասսաների հեղափոխական ակտիվ

ստրատեգիական կուրսը առաջ տանելու համար. բավարար կապիտալ միջոցների բացակայությունը անհնար դարձրին ծանր ու թեթև արդյունաբերության և ինդուստրիալ գյուղացիական տնտեսությունների շուկայական ձևի կապը: Պատահական չէր, որ հենց այս պատճառով 1929թ. կուսակցության ԿԿ նոյեմբերյան պլենումում: Բուխարինը և նրա կողմնակիցները հայտարարեցին կուսակցության ներսում տարակարծությունների վերացման մասին: 1930 թ. փետրվարին Բուխարինը առաջ քաշեց գյուղատնտեսության կոլեկտիվացման նոր կոնցեպցիա այն անվանելով լենինյան կուրսի կոնկրետացում: Բուխարինյան խմբի պարտությունը ոչ միայն հետևանք էր Ստալինի քաղաքական կամքի և հաջող ինտրիիգների, այլև ուներ իր օբյեկտիվ պատճառները այդ պարտությունը նշանակում էր ինդուստրացման կուրսի արագացում, երկրում վարչահրամայական ռեժիմի ձևավորման առջև եղած արգելքների վերացում: Ինդուստրացման անցման յուրաքանչյուր ձև իրագործվում է հիվանդագին, քանի որ այն ուղեկցվում է կուտակման ֆոնդի աճով՝ այն ֆոնդի, որից մաս է հանվում արտադրության ընդլայնման և պահեստային ֆոնդ ունենալու համար և այն կազմում է յուրաքանչյուր երկրի ազգային եկամտի 10-20 տոկոսը: Նշենք, որ հենց սկզբից էլ ԽՍՀՄ –ում այս հիվանդությունը, «ընթանում էր բարդություններով»: Նախ եթե մի շարք երկրների հաջողվեց խնդիրը լուծել ուրիշներին թալանելու, կամ էլ օտարերկրյա կապիտալի ներհոսի, կամ էլ երկուսի համատեղ օգտագործման հաշվին, ապա ԽՍՀՄ-ը չունեւր նման հնարավորություններից և ոչ մեկը: Այնուհանդերձ առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ –ում կուտակման ֆոնդը կազմեց ազգային եկամտի 10-ից 14 տոկոսը, հետագա տարիներին 25-ից 30 տոկոսը: Երկրորդ ինդուստրացման սովետական մոդելում հենակետը դրվում էր ոչ թե արտասահմանից նորագույն սարքավորումների ներմուծման և նոր արտադրությունների կազմակերպման վրա՝ հանգամանք, որը պահանջելու էր ինտեգրացվել համաշխարհային առաջավոր կապիտալիստական էկոնոմիկայի հետ, որը երկար ժամանակ և քաղաքական բարդություններ էր իրենից բերում, այլ երկրում ժամանակի ամենաառաջավոր բնագավառների՝ ենթագետիկայի, մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, մեքենաշինության զարգացման վրա: Ավելին, Ստալինի ճնշման ներքո ընտրվեց ինդուստրացման մաքսիմալ արագ տեմպ: Խնդրի լայն մասշտաբը, և նյութական – ֆինանսական վիճակի ծայրագույն սղությունը նպաստեցին կենտրոնացված պլանավորման ուժեղացմանը: Նպատակը մեկն էր՝

արդյունաբերության մեջ համակենտրոնացնել մաքսիմում ուժ և միջոցներ առանց հաշվի առնելու տրանսպորտային սուր կարողությունները, ռեսուրսների բավականաչափ պակասը, և աճող քաղաքային բնակչության սպասարկման հնարավորությունները: Այս խնդիրների լուծման ծանապարհին երևաց գյուղատնտեսության բնագավառում եղած շուկայական հարաբերությունների և ինդուստրացման արագ իրագործման անհամաձայնությունը: Այստեղ էր, որ գյուղատնտեսությունը դեռևս պատրաստ չէր պլանավորված ձևով ինդուստրացմանը ապահովել համապատասխան հումքով և պարենով: Նշենք, որ չնայած գյուղում շուկայական հարաբերությունները ընդլայնվում էին, այնուհանդերձ պետության կողմից ադիմիսիստրատիվ մեթոդներ օգտագործվում էին միայն պարեն ձեռք բերելու, այլ ոչ նրա արտադրությունը խթանելու համար: Այդ էր պատճառը, որ աստիճանաբար պակասում էր պարենի և հացի արտադրությունը: Խնդիրը լուծվեց պարենի կենտրոնացված ձեռքբերման օգտին: 1929-30թթ. վերցվեց երկրի գյուղատնտեսության համատարած բռնի կոլեկտիվացման կուրս: Կոլեկտիվացումը ժամանակի կուսակցական-պետական փաստաթղթերում մեկնաբանում էին որպես գյուղում «սոցիալիստական» վերափոխությունների իրականացում: Սակայն այդպիսի մեկնաբանությունը չի բացատրում և առավել ևս չի արդարացնում կոլեկտիվացման իրականացման բարբարոսական մեթոդներն ու ընտրված նեղ ժամկետների պատճառները: Կեղեկտիվացման ձևը, մեթոդները, կարճ ժամկետները, ինքնին ապացույց էին կոլեկտիվացման երկրորդ նպատակի իրականացմանը: Նպատակ, որի մասին սովետական պատմագրությունը հարկ էր համարում լռել: Այն էր՝ ամեն գնով ապահովել ինդուստրացման ֆինանսավորումը, և արագ աճող քաղաքների պարենով սպասարկումը: Խնդրի լուծումը պահանջում էր հացի համեմատաբար ցածր գների պահպանում և պարենի դեպի քաղաք և արտասահման հոսքի քանակի ավելացում: Արդյունքում սկսվում էր գյուղի նկատմամբ տնտեսական հզոր ճնշումը, որը բերեց սովետական գյուղատնտեսության անկում, գյուղացու ունեցվածքի ամերևակայելի կորուստ, կուլակաթափություն, գյուղացու որոշակի մասի օտարումը հողից: Բարբարոսական համընդհանուր կոլեկտիվացումը և քաղաքային բնակչության նկատմամբ ճնշման գործադրումը թույլ տվեց ստեղծել ստիպողական աշխատանքի հսկայական մի սիստեմ, որը դարձավ Ստալինյան տնտեսության օրգանական կարևորագույն մասը: Այսպիսով, համընդհանուր կոլեկտիվացման միջոցով

հաջողվեց ագրարային սեկտորից դեպի ինդուստրիալ սեկտոր և տնտեսության այլ բնագավառներ ներդնել նյութական, ֆինանսական հսկայական միջոցներ և ապահովել ինդուստրիայի բնագավառում հսկայական բռնիքը:

Ինդուստրացման արագացված տեմպերն ու գյուղատնտեսության կոլեկտիվացման մեթոդները բերեցին տնտեսության ղեկավարման հրամայական մեթոդների արմատավորում և բյուրոկրատացում, որով երկրում արդեն 30-ական թվականներին ձևավորվեց ժողտնտեսության ղեկավարման ամբողջական վարչա-հրամայական ապարատ, որը հսկում էր տնտեսության բոլոր ճյուղերը: Վարչա-հրամայական ապարատը՝ ինչպես պետական, այնպես էլ հասարակական կազմակերպությունների արտակարգ կառույց էր, որը պատասխանատու էր արտակարգ իրադրությունների համար, որոնք հաճախ ինքն էր ստեղծում:

Այս իսկ պատճառով 30-ական թթ. վերջերին կառավարման ամբողջ գործունեության ծանրության կենտրոնը տեղափոխվեց կուսակցական կառույցները, որոնք և ստեղծեցին իրենց ձեռնտու ղեկավարման և պատժիչ մի շարք օրգաններ: Միաժամանակ նրանք ևս վերափոխվեցին ադիմիստրատիվ, վարչահրամայական մեթոդներով առաջնորդվելու և միանձնյա առաջնորդի հրամանների ենթարկվող օրգանների: Թվաքանակով աճող մոնոլիտ կուսակցությունը իր ամբողջատիրական հսկողությանն էր ենթարկում ամբողջ հասարակարգը, իրեն օգնող երիտասարդական և արհմիութենական կազմակերպությունների հետ միասին: Քաղաքական ռեալ իշխանությունը կենտրոնացվեց կուսակցական կոմիտեների ձեռքը, իսկ Սովետները փաստորեն դարձան երկրորդական իշխանություն իրականացնող կազմակերպություններ: Այսպիսով 30-ական թ.թ. վերջերին վերը նշված գաղափարները ամբողջովին իրագործվեցին: Երկրում ձևավորվեց ամբողջական ռեժիմ:

Ստալինը դարձավ երկրի միակ կառավարիչը, նա տնտեսական, քաղաքական, գաղափարական, ինչպես միջազգային կոմունիստական շարժման առաջնորդ՝ հանգամանք, որը իր բացասական հետևանքներ թողեց երկրի հետագա պատմության վրա: Միանգամայն հասկանալի է, որ սոցիալիստական հասարակության կառուցումը սովետական ժողովրդի գործն էր, նրա էնտոլոգիազմի արդյունքը: Հենց այստեղից հարց է առաջանում, թե ինչպես իսկա կուսակցական- պետական

ղեկավարությամբ տասնամյակներ շարունակ հաջողվեց պահպանել սովետական ժողովրդի գերակշռող մասի աշխատանքային էնտոլոգիազմը, նրան պահել մշտապես պատրաստի մոբիլիզացիոն, ոգևորված վիճակում: Երևի թե խնդրո արձատական փաստարկը գաղափարական հզոր աշխատանք էր, որը հասարակության մեծ մասի մեջ արմատավորում էր սեփական երկրի տերը լինելու գաղափարը, որը արդարև պետք է նշել սովետական երկրու այնքան էլ հեռու չէր իրականությունից: Բազմապատկված հեղափոխական տրադիցիաներով՝ Ռուսական հայրենասիրությունը ժողովրդին մղում էր գրկանքների՝ հզոր ինդուստրիալ պայծառ ապագայի համար: Որպեսզի պատկերացում ունենանք սովետական ժողովրդի սոցիալ-հոգեբանական վիճակի մասին, դիմենք գերմանական գրող Լ. Ֆեխտֆանգերին, որը 1937թ. հունվարին Մոսկվայում եղած ժամանակ գրել է, որ սովետական ժողովրդի մի շարք տարիներ տարել է անասելի գրկանքներ: Այժմ իրավիճակը փոխվել է, նրանք շատ բաների տեր են; Կարևորն այն է, որ միլիոնավոր հասարակ մարդիկ ստանալով կրթություն, կամ էլ մտնելով հասարակական-քաղաքական ակտիվ կյանքի մեջ բարձրացել են իրենց սոցիալական ստատուսը, դարձել են որակյալ բանվորներ, տեխնիկներ, ինժեներներ, գյուղատնտեսական մասնագետներ, զինվորներ, ծառայողներ: Այս պատճառով էլ նրանցից շատերը զգացել են, որ դա իրենց իշխանությունն է:¹⁸

Իրավմամբ՝ սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական ֆենոմենը, որի ձևավորման գործում հսկայական դեր կատարեց, ստալինյան պրոպագանդան, գերազանցեց իրեն անհնարինը հնարավոր դարձնելով, հետամնաց Ռուսաստանում և ավելի հետամնաց ազգային ծայրամասերում սոցիալիզմ կառուցելով: Այսպիսով իսՄՅՍ-ում 1936թ. ձևավորվեց միասնական հասարակական կառույց՝ Սոցիալիզմ: Այն կարելի է նշել, որ այդ սոցիալիզմը պետական էր, քանի որ հանրայնացումը ռեալ չէր, այլ թվացյալ: Սեփականության տիրելու ֆունկցիան և քաղաքական իշխանությունը օտարվեցին հասարակության անդամների մեծամասնությունից և տնօրինվում էին Ստալինի և Կուսակցական պետական ապարատի կողմից: Ինչպես ցույց տվեց պատմական փորձը՝ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՍՈՑԻԱԼԻՉՄ՝ պետականմ գորանոցային, և այլ ձևի

¹⁸ Մեքերումը տես. История России, Учебное пособие. том 2, Москва Владос' 1995г. ст. 252

չեն կարող լինել, կամ էլ եղած երկար գոյատևել: Սոցիալիզմը ունի օրինաչափություններ, որոնք պետք է պահպանվեն:

Յթեկտիվ և պատմական գլխավոր խնդիրը, որը հսկայական զոհերի հնով լուծվեց Ռուսաստանում՝ սոցիալիզմի կառուցման ընթացքում, եղավ այն արագացված ավարտական թռիչքը, որը ռուսական ագրարային հասարակությունը դարձրեց ինդուստրիալ: Մի շարք ուսումնասիրողների տերմիններով այդ սխտեմը կարելի է որակել ինչպես <<Չափս տոտալտար>> ռեժիմ:

Տեսնենք թե ինչ հարաբերությունների մեջ էր գտնվում տվյալ հասարակությունը Մարքսի և Էնգելսի կողմից մշակված սոցիալիզմի մոդելի հետ, հանդիսանում էր այն սոցիալիստական գաղափարների դեֆորմացում, թե սոցիալիզմի իրականացման տրամաբանական հետևանք էր: Պետք է համոզված նշել, որ սովետական հասարակությունը 30-ական թ.-ին իր հիմքով հանդիսանում էր Մարքսի-Լենինի հեղափոխական պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով իրագործվող ոչ ապրանքային սոցիալիզմի գաղափարների իրականացման օրինաչափ արդյունք: Սակայն մարքսիզմի դասականները կանխագծել էին ապրանքային արտադրության վերացումը, սոցիալիզմի ժամանակ շուկայական հարաբերությունների անտեսումը, պառլամենտական դեմոկրատիայի, իրավական պետության բացառումը, որը պրակտիկայում չէր կարող չբերել հասարակության անդամների տնտեսական ու քաղաքական ազատությունների նեղացում, նույնիսկ գրկում և ամբողջատիրական ռեժիմի հաստատում, ինչը որ տեղի ունեցավ սովետական երկրում և որի հետևանքով սկսված բռնությունների մասշտաբը պայմանավորված էր ներկուսակցական պայքարով, որն ավարտվեց Ստալինի հաղթանակով, իր վրա կրելով նրա անձի կնիքը: Հասարակացրած կլինենք եթե հս30 30-ական թ-ի հասարակության կառուցվածքը բնութագրենք, որպես <<նյութականացված գաղափարախոսական>> . այլ ոչ սոցիալիստական: Պատմական լայն կոնտեքստով դիտելով հս30-ում ձևավորված տեղի ունեցող սոցիալիզմի>> կառուցվածքը նշենք, որ այն համընկավ աշխարհում տեղի ունեցող հիվանդագին ճգնաժամային երևույթներին և գլոբալ կառուցվածքային վերափոխություններին, կարգավորվող շուկայական հարաբերությունների անցմանը, և իրենից ներկայացնում էր հասարակության զարգացման ծայրահեղ ձևերից մեկը՝ հենց ուլտրաձախը՝ ի տարբերություն ուլտրաջի ֆաշիստականի և հակադրություն

նեոլիբերալ- ցեմտրիստականի՝ հյուսիսի ամերիկյանի և արևմտաեվրոպականի, որը ժամանակի առաջադեմ ձևն էր: Ռուսաստանի համար այդ ձևի ընտրությունը կանխորոշվեց ոչ միայն երկրի և աշխարհի 20-30-ական թ.-ի կոնկրետ իրադրությամբ, իրադրություն, որը պայմանավորվում էր երկրի տնտեսա-տեխնոլոգիական նորացման անհրաժեշտությամբ, հետևաբար և պետության, որպես զարգացման փաստարկի դերի աճով, ինչպես նաև հավասար, կոլեկտիվիստական ձգտումների աճով, բացառելու համար Բազմադարյան ռուսական պետության բռնատիրական ձևը, որում միշտ էլ գերակշռող տեղ ունեն հակալիբերալիզմը:

Իրավմամբ՝ զարգացման նոր ետապում հս30-ում Ստալինի մեղքով վերարտադրվեցին <<ինքնակալական- պետական, ճորտատիրական>> ֆեոդալիզմին բնութագիր գծեր, դեսպոտ իշխանությամբ, որը հենվում էր հասարակական հարաբերությունների մեջ պետության դերը որոշող բյուրոկրատիայի վրա, մարքսիստական գաղափարախոսության լրիվ տիրապետության պայմաններում, որը փաստորեն հոգեկան բնագավառում եկել էր փոխարինելու կրոնին:

տնտեսական ու քաղաքական կյանքի վրա,¹ քանի Անդրկովկասը կարևոր նշանակություն ուներ բրիտանական կայսրության շահերի և, մասնավորապես Յնդկաստանի համար:²

Գաղտնիք չէ, որ Անդրկովկասում անգլիական գաղութարարներն իրենց գավթողական այլանների իրականացման գործում մուսաֆաթական Ադրբեջանին մեծ դեր էին հատկացնում: Բրիտանական նվաճողների այդպիսի դիրքորոշումը, ինքնին հասկանալի է. նրանց նպատակն էր մուսուլմանական Ադրբեջանին, որը տարածաշրջանում աչքի էր ընկնում իր ընդգծված հակառուսական և հակաբոլշևիկյան կեցվածքով, դարձնել բոլշևիզմի դեմ պայքարի ամուր հենարան, տիրանալ Բաքվի նավթին, ապա ձեռնամուխ լինել ազդեցության ոլորտների տարածմանը ամբողջ Անդրկովկասի, հետագայում նաև Մերձավոր և Միջին Արևելքի վրա:

Ինչ վերաբերում է Հայաստանի խնդրին, ապա Հարավարևելյան Ռուսաստանի և Անդրկովկասի մասին 1919թ. նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին կազմված մի տեսության մեջ ուղղակի ընդգծվում է, որ ի դեմս անկախ Հայաստանի անգլիացիները տեսնում են ռուսական ֆորպատը (առաջավոր ամրակետը), որը ճանապարհ է բացում դեպի Միջերկրական ծովի ափերը, և այդ պատճառով ամեն կերպ խանգարում են նրա զարգացմանն ու ծաղկմանը:³ Հայաստանի աշխարհագրական դիրքին ու ռազմավարական Անրադառնալով Հայաստանի աշխարհագրական դիրքին ու ռազմավարական առանձնահատուկ նշանակությանը, Ռոհրբախը նշում էր, որ երբեք չպետք է թույլ տալ, որ այն ընկնի Ռուսաստանի ազդեցության տակ: Չի կարելի պատկերացնել ուրիշ որևէ դիրք, որն ավելին ահեղ լինի ողջ Արևմտյան Ասիայի նկատմամբ, քան Հայաստանի, Անդրկովկասի և Հյուսիսային Պարսկաստանի միավորումը Ռուսաստանի ձեռքում:⁴ Գերմանիան երբեք չի հաշտվի նման վիճակի

1 Անգլիացիներն առաջին անգամ մտան Բաքու 19918 թ. ամռանը, բայց չհաստատվեցին այնտեղ:
2 Գ.Գալոյան, Պատմության քառուղիներում: Եր., 1982 թ., էջ 252
3 ЦГАОР СССР, ф. 446, оп.2, д. 113, л. 69.
4 Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане.

րետ, քանի որ Հայաստանի վրայով թուրքական սահմանից ռուսական զորքերի մեցումը վտանգի տակ կդնի եվրոպական խաղաղությունը, գրում էր Ռոհրբախը:¹

Հայ-ադրբեջանական հարաբերություններին նոր սրություն հաղորդեց Ադրբեջանի խորհրդայնացումը:

Լեռնային Ղարաբաղին ու Ջանգեզուրին բռնությամբ տիրելու մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունը շարունակեց բոլշևիկյան Ադրբեջանը խորհրդային Ղուսաստանի և քեմալական Թուրքիայի հետ համագործակցած: Խորհրդային Ադրբեջանը և բոլշևիկյան Ռուսաստանը ձգտում էին դեպի Թուրքիա, որն իբր դարձել էր Արևելքի հեղափոխության կենտրոնը:

Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը նրանց պետք էր Թուրքիայի րետ անմիջական կապ ստեղծելու համար: Այս գաղափարի իրականացմանը չոհաբերվեցին հայ ժողովրդի ազգային քաղաղաքական ու սոցիալական շահերը՝ նաև այն բանից հետո, երբ Հայաստանը դարձավ խորհրդային: Խորհրդային Ղուսաստանը, ընդառաջելով բոլշևիկյան Ադրբեջանի և քեմալական Թուրքիայի ռայատյաց ցանկություններին, ավելի քան երեք տարիներին (1918 – 1921թթ.) անհավասար գոյամարտում իր ազատությունն ու անկախությունը պաշտպանած Լեռնային Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին:

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրով նախիջևանի մարզը րպես ինքնավար տարածք դրվեց Ադրբեջանի խնամակալության տակ:

¹ Стру П. Ровбах. Война и германская политика. М. 1925. с. 63.
² Լույն տեղում:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՐԿ
Ա.Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սևանա լճի մասին հանգույն վկայությունները վերագրում են Պտղոմեոսին, որից հետո հայ ու օտար պատմիչները բազմիցս անդրադարձել են լճի նկարագրությանը: Այն հայտնի է Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով, Գեղարքունի լիճ և այլ անուններով: Սևանա լիճն իր տնտեսական դերի շնորհիվ գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Հատկապես 19-րդ դարի առաջին քառորդից սկսած լճի ուսումնասիրությունը դառնում է ինչպես պնիստ անձանց, այնպես էլ զանազան արշավախմբերի հետազոտման վայր: Լճի առաջին գիտական հետազոտությունը սկսվում է 1926թ. ճանապարհորդ Էյխվալդի կողմից: Դրանից հետո, ըստ Ի.Խոջիատովսկու սկսվում է, «Մեծ լճերից ամենից բարձրի և բարձրերից ամենից մեծի» ուսումնասիրությունը, որը շարունակվում է շուրջ մեկ ու կես դար:

Բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ի.Շոպենի ուսումնասիրությունը, որտեղ ձկնորսական ձկների, ձկան առատության ու տեսակների հետ մեկտեղ, առաջին անգամ ուշադրություն դարձվեց այն բանի վրա, որ լճի մակարդակի իջնելը կարելի է նկատել Չանգու գետի ջրերի քանակությունից: 1830թ. լճի մակարդակն ընկավ և Չանգուն այն աստիճան ցամաքեց, որ Սևանի վանքի վանականները ստիպված էին քանդել գետի վրա եղած ջրաղացը: Հետագա տարիներին, երբ լճի մակարդակը բարձրացավ, ջրաղացը նորից սկսեց գործել: Լճի ջրի բարձրացումը շարունակվեց մինչև 1855թ., որից հետո այն սկսեց իջնել: Առաջինը Ի.Շոպենի կողմից նկատված այս երևույթը հաստատվեց հետագա ուսումնասիրությունների ժամանակ:

1855թ. ձեռնարկվում է Սևանա լճի առաջին արշավախմբային ուսումնասիրությունը, որը ղեկավարում էր ակադեմիկոս Կ.Բերը: Արշավախումբը փորձեց ճշտել լճի արդեն կատարված չափումները, նկարագրել ձկների տեսակները, լճի շահագործման առավել օգտակար եղանակները, սամարանների կառուցման անհրաժեշտությունը և այլ հարցեր: Կ. Բերը գրում է, որ Սևանա լճում ձկների առատությունը և որսի պարզունակ եղանակները գերազանցեցին իմ բոլոր սպասելիքները: Չուկն այնքան առատ էր, որ մինչև իսկ կապալառները չէին գանգատվում ձկների պակասից:

¹ Աշխատանքը գրված է Հայաստանի Հանրապետության ԳԳԿԱ-ի 130, 133 և ՆԳԳԿԱ-ի 60, 113, 123, 130 ֆունդիի ցուցերի հիման վրա:

1862թ. Սևանա լիճ եկավ իտալացի ճանապարհորդ Ֆիլիպեո Ֆիլիպին, որը Պարսկաստան մեկնող իտալական խմբի կազմում էր: Նա մանրամասնորեն ուսումնասիրեց լիճը, հատկապես ձկան կողակ տեսակը, ջրի քափանցելիությունը: Այդ շրջանում ձկնորսությունը բավական զարգացած էր լճում, տարեկան որսը կազմում էր 100 հազար փութ: Միաժամանակ փորում էին առուներ, լճի ջուրը ոռոգման նպատակներով օգտագործելու համար: Ֆիլիպեոյի գործունեությունը Սևանա լճում համարում են առաջին գիտական քայլը լճի հետազոտման բնագավառում:

1875թ. Սևանա լիճ եկավ Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆ. Կ.Կեսսլերը: Նա Պետական ունեցվածքի նախարարության անդամ էր, գործուղվել էր ուսումնասիրելու Սևանա լճի ձկնորսության վիճակը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ձկնորսության զարգացման համար: Կ.Կեսսլերը ծանոթանալով լճին, գտնում էր, որ ձկան որսի արգելված տարիներ մտցնելը ավելորդ է, ձկների պակաս չի զգացվում, կարելի է ձկների ձվադրության շրջանում, շարաքվա մեջ երկու գր արգելել ձկան որսը, որպեսզի ծուկը լճից անցնի գետեկը: Լճում ձկան որսը կարելի է արգելել, բանի որ ձկները ձվադրում են քարքարոտ տեղերում, որտեղ նույն օգել հնարավոր չէ: Կ.Կեսսլերն առաջինը տվեց իշխանի նկարագրությունը: Ըստ նրա, Սևանա լճում առկա են երկու տեսակի իշխան՝ իշխանն ու բեղլուն /այժմյան տերմինով՝ ձմեռային իշխանը և գեղարքունին: Հասկանալի է, որ Կ.Կեսսլերը վեց օրվա ընթացքում հիմնովին չէր կարող ծանոթանալ լճին, այնտեղ կիրճավոր որսածներին և նրա նկարագրությունները բուռնի կրոնյր են կրում:

Կ.Կեսսլերից մի քանի տարի հետո Յակովլևը նկարագրեց իշխանի երրորդ տեսակը՝ բոջակը, որով էլ կախում էին, թե Սևանում բազմանում է երեք տեսակի իշխան: Սակայն հետագայում Կ.Կավրայսկու և հատկապես Մ.Ֆորտունատովի կողմից ճշտվեց, որ լճում ապրում է միայն մեկ տեսակի իշխան, որը բաժանվում է չորս ցեղերի:

Կ.Կեսսլերից հետո լիճ եկավ Ա.Բրանդտը, որը իր նախորդների ուսումնասիրությունների վրա, ըստ էության, նոր բան չավելացրեց: 1855թ. Սևանա լիճ է գալիս երկու արշավախումբ, մեկը լճի ուսումնասիրությունը կատարում էր գոտ տնտեսական նպատակներով /Դանիլսկի/, իսկ մյուսը՝ կենսաբանական /Նատոնով/: Սակայն նրանց դիտարկումները լիարժեք ու անբողջական ձևով չիրատարակվեցին: Դանիլսկին հանգեց այն հետևության, որ ձկան որսի կապալի ծավկետը կարելի է հասցնել վեց ստարվա, երբ հնարավոր կլինի՝ նոր տեխնիկա ներդնել և տեղափաստելը տալ ցանկացած մարդկանց, ովքեր ավելի կվճարեն: Նա առաջարկում է լիճը բաժանել վեց ձկնորսական տեղամասերի, իսկ գետերը՝ երեք: Լճային տեղամասերում հինգ

Վարդանանց Պատերազմը և Քրիստոնեական Աշխարհը

Ս.Յ. ՈՒՇԵՂՅԱՆ

Հայաստանի պատմությունը խիզախության, կորույծի և տառապանքի պատմություն է
Գուստավ Ելունգերսթե

Հայոց պատմությունը ընթերցելիս հաճախ հարց է ծագում, թե ի՞նչ հոսանքներ ու աշխարհայացքներ են ազդել նրա վրա և ինչո՞ւ են դեպքերը դասավորվել ոչ այն կերպ: Ինչն ավելի բնականոն կարող էր երևալ: Արդյոք ժողովուրդն ինքն է իր ճակատագիրը տնօրինում, թե կան այլ գործոններ, որոնք կարող են ազդել, փոխել նրա ընթացքը, հաճախ ի վնաս այդ ժողովրդի:

Այս տեսակետից ուսանելի է 451թ. հայ-պարսկական մեծ ընդհարման պատմությունը, որ հայտնի է Վարդանանց պատերազմ անունով: Այն հայոց պատմության ամենահայտնի, ամենասրբացված և ազգային տեսակետից ամենանվիրական փաստն է: Վարդանանց շարժումը, ինչպես նշել է Լեոն, պարզ սկիզբ, զարգացում և վախճան է ունեցել, թեև անսպահման մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա: Վարդանն ու իր զինակիցները եկեղեցու համար դիտվել են որպես նահատակված սրբեր: Ժողովրդական ավանդությունները պատերազմական գործողությունները դարձրել են առասպելական, իսկ Վարդանին՝ սրբերի շարքը դասել:

Վարդանանց պատերազմի խորհրդավորությունը նրա մեջ է, որ մեր ժողովրդի բազմադարյան պատմության մեջ տեղի ունեցած բազում ճակատամարտերն այն դերն ու նշանակությունը չունեցան, ինչ Ավարայրինը: Դրանում դժվար չէ համոզվել, եթե ուշադրություն դարձնենք այդ պատերազմի ծագման և ավարտի պատմության վրա: Այն մեզ պարզորոշ ցույց է տալիս, թե ինչ ձգտումներ ուներ հայ ժողովուրդը և ինչը խանգարեց դրանց իրականացման ընթացքին: Շատ կարևոր է իմանալ նաև, թե Վարդանանց պատերազմն ինչ անդրադարձներ ունեցավ տարածաշրջանի պատմության ընթացքի վրա: Ո՞ր մենք չենք ընկալի, եթե չկարողանանք ըմբռնել Հայաստանի դերը արևմուտքի և արևելքի պատմության և մշակույթների միջև:

¹ Լեո, երկերի ժողովածու, II, 2, էջ 47

Շատ վաղ ժամանակներից Հայաստան երկրի վրա իրար են բախվել, սուր պայքարի մեջ են եղել արևմուտքի և արևելքի, իսկ ավելի ճիշտ՝ հելլենական և իրանական մշակույթները:

Հայտնի է, որ պատմության թատերաբեմից Ուրարտական պետության անհետանալուց (մ.թ.ա. 590թ.) մինչև Աքեմենյան կայսրության երևան գալը Հայաստան երկրում տեղի են ունեցել շատ իրադարձություններ և փոփոխություններ: Այդ ընթացքում ավելի է մեծանում իրանական մշակույթի ազդեցությունը Հայաստանում, միմյանց միջև ավելի են սերտանում կրոնական և պետական հարաբերությունները, Հայաստան են ներթափանցում իրանական պաշտամունքները, կատարվում են փոխառություններ իրանական լեզվից ու բարբերից: Դարհիի ու Ջսերքսեսի արձանագրություններից պարզվում է, որ հայերն էլ էին արիաց աշխարհին պատկանում: Նրանք ընդունում էին «Ալեքստայի» շատ աստվածություններ՝ Ահուրմազդան, Միհրը և այլն, և երկրպագում էին նրանց:

Երբ Ալեքսանդր Մեծը կործանում է Աքեմենյան կայսրությունը (մ.թ.ա. 331թ.), գրադաշտական կրոնը զգալիորեն մոռոցության էր տրվել: Ալեքսանդրից հետո նրա գորավարները, բաժանելով տերությունը միմյանց միջև, այնտեղ արմատավորեցին հելլենական մշակույթը: Այդ մշակույթը տարածվեց նաև Հայաստանում և շուրջ երեք հարյուր տարի խոր արմատներ ձգեց այնտեղ:

Այդ քաղաքակրթության ազդեցությունն այնքան խորն էր, որ ապագայում էլ Հայաստանն իր դեմքը դեպի արևմուտք էր դարձնում: Սելևկյան շրջանից մինչև Տիգրան Մեծը հայ արքունիքի պաշտոնական լեզուն ասորերենի հետ նաև հունարենն էր: Հայ, պարթև, սելևկյան դրամների վրա հունարեն տառերով ու լեզվով են գրված թագավորների անունները: Տիգրան Մեծը Հունաստանից Հայաստան բերեց հույն աստվածությունները՝ իրենց պաշտամունքին ծառայող քրմերի հետ: «Իբրև առաջին գործ,- գրում է Ս. Խորենացին,- նա կամեցավ մեհյաններ շինել: Իսկ քրմերը, որ եկել էին Հունաստանից, մտածելով, որ իրենց Հայաստանի խորքերը չքշեն, սուտ գուշակություններ հնարեցին, իբր թե աստվածները հենց նույն տեղում կամենում էին բնակվել: Տիգրանն այս բանին համաձայնելով Ոլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Ամիուն, Աթենասինը՝ Թիլուն, Արտեմիդի մյուս արձանը՝ Երիզայուն և

Չեփեստոսինը՝ Բագայաոիժում...», իսկ Ստրաբոնը վկայում է, որ Եկեղյաց տաճարների մեջ հայոց պաշտամունքը նման էր հելլենների պաշտամունքին:

Արտաշիր I-ը ոչնչացրեց հին հայոց և հելլեններից Հայաստան բերված ու հայացված աստվածների արձանները: Դրանք փոխարինվեցին զրադաշտական աստվածություններով:

Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն դառնալուց հետո մահացու պայքար սկսվեց մյուս բոլոր կրոնների և աստվածությունների դեմ: Հակառակ սրա, առանձին նախարարական տներում և գավառներում տակավին պաշտում էին հայոց հին կրոնը:

Ահա այս Հայաստան երկրում էր, որ զրադաշտությունը, Սասանյան Պարսկաստանի պետական կրոնը դառնալուց հետո, պայքարի էր ելել քրիստոնեական կրոնի դեմ, որն իր կարգին Բյուզանդիայի կրոնն էր դարձել: Երկու անհոկայությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև ծագած աշխարհաքաղաքական պայքարը փոխվել էր նաև գաղափարական պայքարի: Եվ ահա այս միանգամայն պարզ իրավիճակում հայ ժողովրդի առջև դրվել էր նրա գոյապահպանման խնդիրը՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ մեկ կամ մյուս կողմին հարելու: Հայերի առջև ծառայել էր նաև հարցը, որն անհապաղ լուծում էր պահանջում:

Այս պայքարի փուլերից մեկն էլ դարձավ Վարդանանց պատերազմը: Արքայից արքայի քաղաքական ծրագիրը պարզ էր՝ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը մագղեական կրոնով կապել Պարսկաստանին: Ինչպես հայտնի է, այն ծախողվեց հայոց ընդդիմության պատճառով: Թե ինչ հետևանքներ ունեցավ հայոց ընդդիմությունը ազգային տեսակետից, մեզ ծանոթ է, իսկ այժմ փորձենք տեսնել, թե ինչպիսիք էին այդ հետևանքները Առաջավոր Ասիայի տարածաշրջանում:

5-րդ դարի կեսերին Հայաստանում տեղի ունեցած դեպքերն ըմբռնելու համար կարևոր է իմանալ պատմական անցքերի այն պատկերը, որի շրջանակի մեջ կատարվել էր Վարդանանց ապստամբությունը: Այս տեսակետից մեզ բավարար նյութ է տալիս ամենարածանա հավատարմորդը՝ Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը»:

* Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գլ. Բ, ԺԳ, Երևան 1961թ.

Բյուզանդա-պարսկական հարաբերությունները քննելիս ինքնաբերաբար հարցեր են ծագում. ո՞րն է Հայաստանի դերը այս կապակցության մեջ, ի՞նչ քաղաքական հեռանկարներ ունեին Բյուզանդիան և Պարսկաստանը միմյանց և Հայաստանի հանդեպ և, վերջապես, նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ քաղաքական մտահոգություն ուներ:

Երբ Արտաշիր I-ը վերհաստատեց իր նախահայրերի կրոնը մագղեականությունը, սա Պարսկաստանի համար ոչ միայն մշակութային վերագարթոնք էր, այլև՝ քաղաքական: Երբ Կոստանդին Սեծը քրիստոնեությունը կայսրության պետական կրոնը դարձրեց, ինչպես հայտնի է, դա պարզ հավատքի գործ չէր, այլ քաղաքական արարք: Կայսրը մինչև Զոդակաստանի սահմանները տարածվող քրիստոնեությունը կայսրության մեջուկը դարձրեց: Կայսրությունը քրիստոնեության անվան տակ սկսեց օտար երկրների գործերին միջամտելու քաղաքականությունը: Կոստանդինը Շապուհին հորդորում էր լավ վերաբերմունք ցույց տալ քրիստոնեության հանդեպ: Սա ճիշտ հակառակ արդյունքն էր տալիս: Այն ժամանակվանից, երբ կայսրերն սկսեցին քրիստոնեությունը հովանավորելու քաղաքականություն վարել, այդ ժամանակներից էլ ծայր առան հավածանքները:

Շապուհը նախ ծանր հարկեր դրեց քրիստոնյաների վրա, իսկ երբ Ալեկյայի Սիմեոն եպիսկոպոսն այս առիթով գանգատվեց արքային, վերջինս նրան սպանել տվեց, փակեց եկեղեցիները՝ խլելով դրանց կալվածքները: Եթե բուն Պարսկաստանի քրիստոնյաները այդ երկրին վտանգ էին ներկայացնում, ապա ավելի վտանգավոր էին Հայաստանը, Վարստանը և Աղվանքը: Բնական է, որ Պարսկաստանը ձգտում էր վերջ տալ այս երկրների կրոններին և նրանց համակրանքով կապել իր պետությանը:

Հաճախ ակամա հարց է առաջանում, թե այդ ինչպե՞ս եղավ, որ ահեղ Պարսկաստանը չկարողացավ իրագործել Հայաստանի կրոնափոխության ծրագիրը: Վարդանն ընկավ Ավարայրի ճակատամարտում: Պարսկաստանը կարող է շարունակել հավածանքները: Բայց արքայից արքաների քաղաքականության նպատակը դա չէր՝ ջնջել բնակչությանը: Նրանց քաղաքականությունը հպատակ ժողովուրդներին իրենց երկրի շահերի հետ կապելն էր: Եթե նկատի առնենք, որ Հայաստանն իր նախարարական այրուծիով կարևոր ռազմական ուժ էր արիաց արքայի բանակի համար, ապա հեշտ է ըմբռնել, թե ինչու Պարսկաստանի ծրագրին չէր համապատասխանում հայերին թշնամացնելը: Ընդհակառակը, հայերի նկատմամբ

մեղմ քաղաքականություն վարելը կարող էր նպաստել Բյուզանդիայի հետ կապված նրանց վաղեմի ծրագրին: Այն բխում էր Պարսկական պետության շահերից: Եվ ինչպես իրավացիորեն գրում է Ղազար Փարպեցին, արքունիքի ամենամեծ պաշտոնյան Միհրներսեհը, մտնելով Չազկերտի մոտ, իրավունք ուներ նրան ասելու, որ «... եթե հայերին ընտելացնենք մեր օրենքներին... ապա կսիրեն ձեզ ու Արյաց աշխարհը և կլքեն-կհեռանան կայսրից, նրա հավատից ու աշխարհից: Եվ նրանից հետո այդ աշխարհը մեզ հետ կլինի սերտ ու միաբանությամբ: Իսկ երբ Յայթը սերտորեն մերը լինի, Վիրքն ու Աղվանքը կլինեն ամպայման»^{***}: Միհրներսեհի ծրագիրը գործադրվում էր այն ժամանակ, երբ Յոռնն անկում էր ապրում, իսկ Բյուզանդիան նվաստացուցիչ պայմաններով ժամանակավոր խաղաղություն էր աղերսում իրեն սպառնացող հարևաններից: Ուստի և պարզից էլ պարզ է, որ եթե Յայաստանը տեղի տար Պարսկաստանի այս ծրագրին, ապա Բյուզանդական կայսրության գոյությունը խնդրո առարկա պիտի դառնար: Յայաստանի ժողովուրդը, սակայն, ընդդիմացավ այս ծրագրին և, ռամիկը քրիստոնյա երեցներին առաջնորդությամբ, բանդեց ատրուշանը, Յայաստանից վնդեց մոզերին՝ նախարարներին ստիպելով ապստամբության դրոշմ պարզել արքայից արքայի դեմ:

Երբ հեղաշրջումը կատարվում է վերևից, այն գաղափարական է: Այդպես էր Տրդատ Թագավորի կողմից քրիստոնեության ընդունման փաստը: Այն հավատափոխություն էր, այլ գաղափարի նվաճում: Այստեղ, սակայն, զանգվածն էր, ամբոխի տարերային շարժումը, որ ոչ ասաց, հավատարիմ մնալով քրիստոնեությանը, որի մեջ մարմնավորվում էր արևմուտքի, այն է՝ Բյուզանդիայի մշակույթը: Յայությունը որոշում էր իր դիրքը արևմուտքի և արևելքի մեծ պայքարի մեջ, որ դարձել էր աշխարհայացքային ըմբռնում, այլ խոսքով՝ երկու կրոնների, երկու աշխարհների համդիպում: Այդ պայքարի դաշտը եղավ Ավարայրը, և եթե այստեղ հայ զենքը հաջողություն չունեցավ, գաղափարն, ի վերջո, հաղթանակեց: Գաղափարական այդ հաղթանակի պտուղներից մեծապես օգտվեց երրորդ կողմը՝ Բյուզանդիան, որը հայ ժողովրդի բախտի համար երբեք էլ չի անհանգստացել:

Յայ ժողովուրդը, քրիստոնեությանը հավատարիմ մնալով, ապահովում էր Բյուզանդիայի արևելյան սահմանները: Այդպես եղավ նաև Կիլիկիայի պարագայում.

^{***} Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն», Երևան, 1982թ., էջ 95-97

հայ նախարարական տները, մինչև իրենց վերջնական կործանումը, արգելք եղան արաբական ցեղերի ներխուժմանը բյուզանդական երկրներ:

Բյուզանդիան, մինչդեռ, այլ կերպ վարձահատույց եղավ: Նրա հակահայ քաղաքականության հետևանքով էր, որ իր բաժինը համդիսացող Յայաստանում դադարեցին հայ կյանքը, հայ նախարարական տների գործունեությունը: Յայաստանը (Արևմտյան) դարձել էր կայսության մեկ նահանգը: Ավելին, Բյուզանդիան չէր էլ մտածում ազատագրել պասկաբաժին Յայաստանը, նկատելով, որ վերջինիս ազատագրումը կարող է նպաստել բյուզանդական բաժնի անջատմանը: Եթե այստեղ դարձյալ դեր խաղաց հայ ժողովրդի պատմական բախտը, ապա այդ նույն պատմությունն այս անգամ խստորեն պատժեց Բյուզանդիային՝ նրա երկրի մի ու ամոթալի կեցվածքի համար: Այսպես, երբ հայտնվեցին սելջուկ-բուրքերը և երբ այլևս չկային հայոց նախարարական գնդերը, երբ Յայաստանը վերածվել էր բյուզանդական նահանգների, Բյուզանդիան Մանազկերտի մոտ կրեց այն ահավոր պարտությունը (1071թ.), որը նրան կործանման եզրին կանգնեցրեց:

451թ. տեղի ունեցավ Զաղկեդոնի հայտնի ժողովը, որին հայերը չկարողացան մասնակցել՝ զբաղված լինելով Վարդանանց պատերազմով: Ժողովի որոշումները հայ եկեղեցին մերժեց, դրանով ձեռքազատվելով բյուզանդական եկեղեցուց, ինչը գոհունակությամբ ընդունվեց Պարսկաստանի կողմից: Պարսիկ Խոսրոավ II Թագավորը նույնիսկ հովանավորեց Տիգրանի նշանավոր եկեղեցական ժողովը (614թ.), որը Պարսկաստանի քրիստոնյաներին հայոց կաթողիկոսին ենթարկվելու հնարավորություն տվեց: Յայաստանի քրիստոնեությունն այլևս վտանգ չէր ներկայացնում Պարսկաստանի համար: Պարսկաստանը հպատակ քրիստոնյաներին համակրությամբ էր կապում գահին: Այս քաղաքականությունը շարունակվեց Խոսրովի և իր որդի Որմիզդի օրոք: Յետաքրքիր է, որ երբ մոզերը ցանկացան արքայի մոտ քրիստոնյաներին կասկածելի ցույց տալ, վերջինս պատասխանում է, «Ինչպես, որ մեր գահը չի կարող կանգուն մնալ հետսակողմի երկու ոտքերին, այնպես էլ մեր պետությունը չի կարող ապիով լինել, եթե քրիստոնյաներին մեր դեմ գրգռենք»^{****}: Այսպիսով վերջ է տրվում քրիստոնյաների համդեպ այն անվստահությանը, որ տևել է

^{****} Տե՛ս «Չվարթնոց», Տարեգիրք գրականության և արվեստների, Փարիզ, 1943թ., էջ 163

դարեր և հաճախ արյունահեղ պատերազմների պատճառ դարձել պետությունների միջև:

Քանի որ բյուզանդիայի և Պարսկաստանի միջև թագավորում էին անվստահությունն ու հավիտենական թշնամանքը, խաղաղ ժամանակ նրանք հարաբերվում էին պատգամավորների միջոցով, մնալուն դեսպաններ չէին նշանակում, վախենում էին լրտեսությունից: Առերես նրանց հարաբերությունները, սակայն, ջերմ էին:

Մի կարևոր հանգամանք ևս: Հայտնի է, որ Խոսրով I-ը ջանում էր գրավել Լազիստանը (549-554) և Սև ծովի եզերքից հասնել միջև Կ.Պոլիս: Հայաստանի նման լազերը նույնպես հարկադրված մերթ մեկ, մերթ մյուս կողմին էին հարում: Երբ նրանք քրիստոնեություն ընդունեցին, կայսրին համարում էին իրեց պաշտպան, բայց Հուստինիանոսի ժամանակ սկսեցին հարել Պարսկաստանին, որովհետև կայսրը նրանց գրկել էր մի շարք ազատություններից: Բայց շուտով, հիասթափվելով պարսիկներից, նորից դիմեցին Բյուզանդիային և այստեղից էլ ծագեց Լազիկայի պատերազմը (549-556): Լազիկան ենթարկվեց Բյուզանդիային: Ահա թե ինչու արքայից արքաները, Հայաստանը վերջնականապես կորցնելու վախից, զգոյշ էին հայոց հանդեպ: Երկու կողմորի միջև Հայաստանը ծանրության կենտրոնն էր: Ոչ մեկը չէր ուզում զիջել այն: Հայաստանի սառաջին ավարտվեցին: Բյուզանդիան, սակայն, միշտ նրա պատճառով հարուցված վեճերն ավարտվեցին: Բյուզանդիան (387) թվում էր, թե ջանում էր տիրանալ պարսկաբաժին Հայաստանին, իսկ Պարսկաստանը չէր հետաքրքրվում Բյուզանդական Հայաստանի հայ հպատակների վիճակով:

Այստեղ նշենք, որ Բյուզանդիայի համար քաղաքական լուրջ սխալ էր Հայաստանի բաժանման ծրագիրը և նրա թուլացումը: Մեր հայրենիքի մի կարևոր մասի վրա Պարսկաստանի հաստատվելը մշտական սպառնալիք էր Բյուզանդիայի համար: Ուսկարող էր ճակատագրական լինել կայսրության համար, եթե պարսկաստանին հաջողվեր կրոնափոխել Հայաստանը:

Վարդանանց պատերազմը, որ միաժամանակ պատերազմ էր երկու գաղափարների, պատերազմ էր քրիստոնեության և զրադաշտականության միջև, պարտության դեպքում կարող էր կործանարար լինել հայերի համար: Վարդանանց պատերազմը տարածաշրջանային որոշ խնդիրներ լուծելու առումով կարող է նաև անկարևոր դեպք նկատվել, բայց իրականում այն ի դերև

հանեց Պարսկաստանի փայփայած ծրագրերը, դարձավ անխորտակելի պատվար, որին զարնվելով փշրվեցին նրա վերջին վարդագույն երազները:

Հայոց գրերի գյուտից հետո սա հայ ժողովրդի ամենամեծ հաղթանակն էր, որի նշանակությունը դուրս է գալիս ազգային պատմության սահմաններից:

Վարդանանց պատերազմի ելքը Բյուզանդիայի հետ միասին անխուսափելի վտանգից փրկեց նաև արևմուտքի քաղաքակրթությունը: Այս պատերազմում քրիստոնեությունը մրցման էր ելել զրադաշտական կրոնի հետ՝ մահվան գուպարում հաղթելով նրան: Իսկ վերջինս, որն ավելի վերացական էր, տեղիք տվեց Հիսուսի վարդապետության առջև:

ԼԵՋՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ՖՐ. ՇԻԼԵՐԸ
Բ. ՄԻՍՅԱՆ

«Օ՛, դու Շիլլե՛ր, Շիլլե՛ր բարձր ես ճախրել,
Սակայն չես ճողացել տանջվող ժողովրդին երբեք,
Սատաղ մարգարե ես մարդկանց համար եղել,
Խրոխտ առաջ տարել դրոշմ ազատության»:

ԿԱՐԼ ԲԵԿ

Համաշխարհային պատմության մեջ կան երջանիկ դեմքեր, որոնց բախտ է վիճակվել բացելու նոր դարագլուխ, դառնալու շրջադարձային ժամանակամիջոցի մտավոր կյանքի դրոշակակիրներ, նոր հոսանքի, նոր ուղղության սկզբնավորողներ: Այդպիսի դեմքերին բնորոշ է մեծ կիրքն ու մեծ էներգիան, որոնք կանգնած լինելով հին ու նոր էպոխաների սահմանագծում ժխտում են հինը և հաստատում նորը, առաջադիմականը, կործանում հետադիմականը, պահպանողականը և ստեղծում առաջավորը: Այդպիսի մեծերի ու անմահների թիվը այնքան էլ մեծ չէ, անմահներ, որոնք կյանքի երկրային մասն ապրում են կարճ, բայց փոթորկալից ու բուռն պայքարի մեջ, իսկ հետո ... դառնում հավերժական ճանփորդներ: Այդօրինակ քչերի թվին է պատկանում մեծ Շիլլերը, որը, Վ. Գ. Բելինսկու բառերով ասած, «Իր անընդգրկելի հանճարի մի կողմով պատկանում է համայն մարդկությանը, իսկ մյուս կողմով գերմանական ժողովրդին»¹⁹: Հայ իրականության մեջ մի այդպիսի դեմք էր մեր նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանը, որին վիճակված էր դառնալու հայ ժողովրդի քաղաքական ու կուլտուրական վերածննդի դրոշակակիրը:

Համայն մարդկության վեհ գաղափարների զանգահար, անարդարացի կարգերի դեմ պարզվող դրոշների երգիչ, ազատության գաղափարների ու մարդասիրության սերմնացան, դեմոկրատիզմի, հայրենասիրության ու ժողովուրդների բարեկամության քարոզող Շիլլերը հայ նոր մշակույթի ռահվիրա, հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքների խտացում հանդիսացող Խ. Աբովյանի

¹⁹ В. Г. Белинский, полн. собр. соч., т. 7, М., 1955 г. стр. 164.

համար եղավ այն ուղենշող «Ալեքսանդրիայի փարոսը», որով նա առաջնորդվեց իր ողջ ստեղծագործական բուռն կյանքում ու մինչև վերջ այրվեց մեծ ուսուցչից փոխառնված պրոմեթեոսյան ու սեփական սրտի շիկացած կրակից:

Խ. Աբովյանի կյանքն անցավ անհավասար պայքարի բուռն ու փոթորկալից հողմերի տարափի մեջ, պայքար, որն ավարտվեց մեծ նահատակի բարոյական հաղթանակով:

Աբովյանն իր պայքարի զենքն ուղղելով առաջին հերթին խավարի ու սոցիալական միջնաբերդի՝ եկեղեցու ու նրա սպասավորների դեմ, հայ ժողովրդի ազատագրության հույսը առաջին հերթին կապում էր լուսավորության գաղափարների լայն տարածման հետ: Նա պայքարում էր ընդդեմ ռեակցիայի բոլոր ուժերի, հնից հեռանալու և նոր գաղափարների լուսավոր ուղիները հարթելու համար: Նա պայքարում էր համուն նոր լեզվի, նոր քեմատիկայի՝ գրականության մեջ, պայքարում էր համուն նոր մանկավարժության և առաջավոր գիտության, կյանքի նոր ձևերի, նոր մտածելակերպի և ապրելակերպի: Աբովյանը, հաղթանակով դուրս գալով իր պայքարի լայն մարտադաշտերից, դարձավ 19-րդ դարի մեր ողջ կուլտուրական շարժման դրոշակակիրը, նրա սկզբնավորողն ու նահապետը:

Խ. Աբովյանը հայ իրականության մեջ առաջին մեծ լուսավորիչն էր, որ դեռևս 19-րդ դ. առաջին կեսին Շիլլերի վեհ հոգին որդեգրեց որպես իր ապագա կյանքի իր ստեղծագործական ճանապարհի ուղենշող ու «հոգու պահապան»: Եվ իրոք, Աբովյանի խոստովանությամբ, Շիլլերը եվրոպական առաջավոր մտածողների շարքում առաջինն էր, որ հայ մեծ լուսավորիչին ոգեշնչեց իր համամարդկային գաղափարներով ու սովորեցրեց նրան հայ ժողովրդի լավագույն կյանքի «ոսկեդարը» փնտրել ոչ թե մշուշապատ անցյալի, այլ տխուր ներկայի ու անորոշ ապագայի մեջ:

Քանի որ մեծ լուսավորիչի ապրած ժամանակներում դարերով տառապած ու խոշտանգված հայ ժողովրդի ներկան ողբալի էր ու թշվառական, ուստի նա սեփական ազգի վերքերի բուժման սպեղանին առայժմ փնտրում էր ազգը եվրոպական առաջավոր գաղափարներով դաստիարակելու և լուսավորելու ասպարեզում: Այդ էր պատճառը, որ նա դորպատյան ուսումնառության հենց առաջին ամիսներից սկսած գերմաներեն լեզվի ուսումնասիրման ու յուրացման հետ միասին, բուռն սիրով ու հախուռն ոգևորությամբ մետվեց Յոնեթուսի, Վիրգիլիուսի, Դանթեի, Ռուսոյի, Լեսինգի, Չերդերի, Գյոթեի ու Շիլլերի վեհ գաղափարների ծովածավալ տարողության մեջ ու նրանց բարերար ազդեցության տակ նախագծեց սեփական ուսումնառության

Հ. Ա. Արմատ, Երկրաչափական, Երևան, 1955 թ., հատ. 6, էջ 190-191:

Մասին խոսում են հատկապես պիտուրաբազիլները, որոնք գտնվում են հատկապես հարյուրավորների և հազարավորների խմբերում, որոնք զբաղվում են կազմակերպմամբ և կազմակերպության օրգանիզմի ստեղծմամբ, որոնք կազմակերպում են հարյուրավորների և հազարավորների խմբերում, որոնք զբաղվում են կազմակերպմամբ և կազմակերպության օրգանիզմի ստեղծմամբ...

Հ. Ա. Արմատ, Երկրաչափական, 1961 թ., հատ. 10, էջ 204-205:

«Արմատի հասցի»-ն, որը գտնվում է Երևանի քաղաքում, հարյուրավորների և հազարավորների խմբերում, որոնք զբաղվում են կազմակերպմամբ և կազմակերպության օրգանիզմի ստեղծմամբ...

Սոռացի՛ր, վեհ հպարտությամբ վանած բախտո,
ճշմարտության առաջ բաց, ազատաշունչ հոգին,
փորձություններին իրազեկ արիությունը
կարեկցությամբ լի ազնվագարմ սիրտը
Տոգորված գեղեցկությամբ և վեհությամբ,
Մարդուն ուրախացնում է ամեն մի դեպքում
Եվ մեծացնում նրան ամեն վիճակում:
Նրա համար հայրենիք դարձնում ամեն մի դաշտ»:

Կին նորա:

«Մարդիկ միասին չեն, երբ միատեղ են. հանգուցյալը,
մեզանից բաժանվածն էլ շարունակում է ապրել:

Լուսե Շիլլեր, ծնված Լենգեֆելդ:
Ենա, 14 մարտի, 1791»:¹

Մենք, չհավակնելով մեր կարծիքի վերջնական ու սալտիչ լինելուն,
այնուհանդերձ, հանձնված ենք, որ Աբովյանի նշած «բանկարժեք նվերն» ու
«կրկնակի կողոպուտը» կամ Գուստավ Ադլերսկրոնի ծոցատետրն է, կամ այլ
ծոցատետրից պոկված համապատասխան էջը, որը մինչև հիմա չի հայտնաբերված

Փաստորեն, մեծ Շիլլերը, իր անժամանակ մահվանից ընդամենը քառորդ դար
հետո, Աբովյանի միջոցով հայցվում է, և մեծ շվաբացին, Բայրոնի բառերով ասած, իր
ողջ ձայնով սկսում է խոսել «Նոյան լեզվով»,- ասել է թե հայերենով:

Իս. Աբովյանը Անդրկովկասյան մտավորականության մեջ ոչ միայն Շիլլերի
առաջին բարգմանիչն էր, այլև նրա տաղանդի բարձր գնահատողն ու վեհ
գաղափարների առաջին պրոպագանդողն ու տարածողը: Այս համգամանքն է նկատի
ունեցել անհայտ ֆրանսիացի ճանապարհորդ գիտնականը, երբ «Արևմուտք»
պարբերականի խմբագիր Ստեփան Ոսկանին գրած նամակում, դեռևս 1859 թ. ասել է.
«Աբովյանի հետ տեսնվեցա և իրավամբ զարմացա նրա հմտության վրա:
Գերմանական փիլիսոփայության և գրականության հայացքները նրան այնպես

¹ Իս. Աբովյան, Երկ. լիակ. ժողովածու, Երևան, հատ. 6, էջ 190-191:

ծանոթ են , որ նույնիսկ եվրոպացին կարող է օգուտ ստանալ նրա կարծիքներից:
Շիլլերին անգիր գիտե, Լեսինգի և Լայբնիցի գաղափարները հրաշալի կերպով
յուրացրել է և իր ասիական երևակայությամբ նրանց նոր գույն է տվել: Գերմաներեն
խոսում է որպես գերմանացի. անտարակույս, այս մարդը պատիվ պիտի բերի հայ
գրականությանը: Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության. հայի բերանն
արձագանքում է այնպիսի գաղափարների, որոնք մեր մեջ դեռ նոր են տարածվում:
Շիլլերի, Լեսինգի գրությունները հաստատվում և լսելի են դառնում Կովկասի
լեռներում, երբ դեռ եվրոպայում ժողովուրդ կա, որ այս հեղինակների անունն անգամ
չի լսել: Ջարմանալի բան պիտի լինի, եթե Ասիայի լուսավորությունը Կովկասից: սկսի,
և «Պրոմեթեոսի ժայռը տեսնի իր չարչարանքի արդյունքը»:¹ Չնայած եվրոպացիների
և կողմից Աբովյանի մասին հայտնված կարծիքների մեջ սա եզակի չէ, այսուհանդերձ,
լիակատարն ու սպառնիչն է: Այս կարծիքի մեջ մի քանի նախադասությամբ, սեղմ ու
կենդանի կերպով կարծեք թե գծագրվում է մի հսկա անհատի պորտրե, որին
վիճակված է դիցաբանական Պրոմեթեոսի նման իր ժողովուրդի համար հրաշքներ
գործելու սուրբ առաքելություն:

Իս. Աբովյանի շիլլերյան կողմնորոշման մասին կան բազմաթիվ վկայություններ
ու կարծիքներ, որոնց մեջ իր հարցադրման առումով արժեքավոր է նաև Մորից
Վագների թողած կարծիքը: 1843 թ. գարնանը գիտական ճամփորդությամբ
Անդրկովկաս է գալիս գերմանացի նշանավոր ճանապարհորդ, բնագետ ,
աշխարհագրագետ ու երկրաբան Մորից Վագները, որի խնդրանքով, Անդրկովկասի
կառավարչապետի թույլտվությամբ, «Աբովյանը դառնում է նրա գիտական
շրջագայությունների և հետազոտությունների մասնակիցը»: Վագների ընտրությունը
պատահական չէր: Նա հանձին Աբովյանի գիտեր մի լուսավորյալ Ասիացու, որի
լեզվական գիտելիքները, թե՛ եվրոպական, և թե՛ տեղական առումով բացառիկ
երևույթ էին Անդրկովկասի խայտաբղետ պայմաններում: Գիտնական մի հայ, որը ոչ
միայն գիտեր իր հայրենի երկրի անցյալը, ներկան, նրա պատմությունն ու
աշխարհագրությունը, այլ գերազանց գիտեր եվրոպան ու Ասիան, Անդրկովկասը՝
մասնավորապես: Թիֆլիսում եղած ժամանակ, 1843թ. մայիսին, ծանոթանալով
Աբովյանի հետ, Վագները մեծ հետաքրքրություն է ցուցաբերում ոչ միայն Աբովյանի

¹ «Արևմուտք» , 1895 թ N 6:

ախոսայ զերմանիայ ընդ մահ նորա և պատուէ գլխատակ նորա, ցուցանեն յետագա բանքս արտագրեալք ի ժամանակագրութենէ Պետերբուրգ, համար 73-74. 1832. 27 մարտի»: Մահախոսականից բերում ենք մի փոքր հատված, որ տեղադրված է Աբովյանի օրագրության մեջ. «Ի միևնույն աուր կանուխ դիցին փառօք երկրաւոր նշխարք նորա ի մատոհ գերեզմանատան մեծ հերցոզին, անդ, ուր և Շիլլերի հանգչի: Յայսմ աուր բացցի նոյնպէս բատրոն տեղույս, որ փակվեցաւ ի պատճառս այսր (խոսքը զՊետերի 1871թ. գրած «Տորկվատտո Տաստ» ողբերգության բեմադրության մասին է)²:

Ղեռևս դորպատյան ուսումնառության տարիներին, Խ. Աբովյանը մեծ սիրով ու երկյուղանքով բարգմանել կամ փորձել է թարգմանել Շիլլերի մի շարք բանաստեղծություններն ու բալլադները, որոնց մի մասը պահպանվել են հայ մեծ լուսավորչի թողոններում, իսկ մյուս մասն էլ նրա սեփական բանաստեղծությունների ու փոխադրությունների մեջ:

Աբովյանի Շիլլերից թարգմանած բանաստեղծությունների թվին են պատկանում «Իդեալներ», «Լատուրային», «Առ էմմա կայ», «Երաշխիք» և «Ասպետ Թոգենբորգոյ» բալլադները, «Ձանգակի երգ» հիասքանչ պոեմը և այլն: Աբովյանը դորպատյան ուսումնառության տարիներին գրել է նաև ինքնուրույն բանաստեղծություններ, որոնց մեծ մասը կամ Շիլլերի բանաստեղծությունների սերտ նմանությամբ, կամ էլ պարզապես փոխադրաբար: Այդ օրինակ բանաստեղծություններից են «Ետո՞ւր զվերջին համբույր հրաժարման», «Բաղձանք երիտասարդի», «Էմմա կայ», «Օրիորդն ֆոն Շվեբս ի վերայ երգեհոնի», «Յերեկոյ» և այլն: Շիլլերի ազդեցությամբ է գրված նաև «Սեր, բարեկամություն» բանաստեղծությունը, որը Շիլլերի «Երաշխիք» բալլադի պարզապես հայկական (Աբովյանական) տարբերակն է, ուր փոխված են միայն հատուկ անուններն ու մի քանի տողով ավելացված բանաստեղծության բովանդակությունը:

Շիլլերյան զգալի ազդեցություններ մենք նկատում ենք նաև Աբովյանի գլուխգործոցի «Վերջի» վրա, որի չափածո, առաջին տարբերակը գրված է եղել Շիլլերի «Ավագակների» նմանությամբ և ոգով: Մանրամասն ուսումնասիրության

² Նույն տեղ, էջ 175-176:

դեպքում մենք նկատում ենք նմանության շատ ընդհանուր գծեր՝ Աղասու, Մոսիի, Կարլ Մորի, Վիլհելմ Թելի, Մաքս Պիքոլոմինիի և նույնիսկ Յովհաննա դ'Արկի միջև: Մանավանդ նմանության շունչը մեծ ու ակնառու է Աղասու և Կարլ Մորի միջև, որին ենգելսն անվանել է «Բոհեմյան անտառների առաջին սոցիալիստ»: Ենչված Ժողովուրդներին սատար կանգնելու, հարուստների նկատմամբ արհամարհանքի և առաջին աստիճանի հոգևորականության ու բռնակալության ներկայացուցիչների նկատմամբ Կարլ Մորի հայացքներն ու գաղափարները մենք պարզ կերպով նկատում ենք հայ առաջին պատմավեպի հերոս՝ «Աւլան բալասի Աղասու» կերպարի մեջ: Աղասին, այդ անտառների սոցիալիստ» Կարլ Մորը, որը դիմելով Պատերին, ասում է. «Գնա, ասա մահու և կենաց վճիռ սահմանող գերիմաստ դատարանին, որ ես գիշերվա խավարի ու քնի հետ դավակցող և հեռվից պռոտացող ավագակ չեմ... Ասա նրանց իմ արհեստը՝ հատուցումն է, և պաշտոնս՝ վրեժ ու ոխ»:

Եթե մեծ Շիլլերը խոստովանել է, թե «Ավագակները» գրել է առաջին սիրո ուժգնությամբ, ապա նրա աշակերտ ու հետևորդ Աբովյանը վառ կերպով տվել է այդ ուժգնության գեղարվեստական պատկերը: Ա. Տերտերյանը հայտնում է հետևյալ կարծիքը. «Աբովյանը «Վերջը» գրելիս ապրել է մի ուժեղ, չտեսնված, անախընթաց հուզմունք, որ կարելի է համեմատել միայն այն հոգեվիճակին, որ ունեցել է Շիլլերը իր «Ավագակները» գրելիս, բայց դրա հետ միասին երկու հեղինակներն էլ տվել են ոչ թե միայն հուզական արվեստի նմուշներ, այլև պլաստիկական, պատկերացման արվեստի կոթողներ, դրամա և վեպ, որոնք ավելի շատ աշխարհ, քան հեղինակների անձնական բնութագիր են տալիս: Իր անդրանիկ դրաման «Ավագակները», հեղինակելուց առաջ իր տրամադրությունը Շիլլերը արտահայտել է հետևյալ խոսույն բառերով. «Գրելու կիրքը իմ մեջ ուժեղ էր և կրակոտ, ինչպես առաջին սերը»: Առաջին սիրո այդ ուժգնությունը երևում է ոչ միայն «Վերջի» հռչակավոր առաջաբանի, այլև ողջ վեպի վրա, սկզբից մինչև վերջ»:¹

¹ Ա. Տերտերյան, «Խ. Աբովյանի ստեղծագործությունը», Երևան, 1941թ., էջ 109:

բանաստեղծն է, որ թոթովախոս աշխարհաբարը կարողացավ դարձնել բարձր արվեստի արտահայտության միջոց: Առարկելով հակաաբովյանական տրամադրություններ ունեցող հայ լիբերալ բնադատներից ոմանց, Տերտերյանը գուգահեռ է անցկացնում մեծ Գյոթեի ու Աբովյանի միջև.

«Սիւնչդեռ վերաբերյալ: Սիւնչդեռ ուրիշները քրտինք են թափում մի հասուն բաաաան ստեղծելու համար, Գյոթեին մնում էր մի թեթև թափահարել իր ստեղծագործության ծառը և ահա հասուն և սիրուն պտուղները մեկը մյուսի հետևից, կամ բոլորը միասին ընկնում են: Հայ հասարակությունը, - շարունակում է Ա. Տերտերյանը,- որ գրեթե հարյուր տարվա ընթացքում անվերջ ստանում է Աբովյանի ստեղծագործական ծառի պտուղները, անշուշտ, զգացել և զգում է, որ քրտինքի հոտ չէ գալիս այդ ստեղծագործությունից և ցայսօր ձեռագիր մնացած մի շարք էջեր, ասես գրվել են երեկ: Դա նշանակում է, որ Աբովյանը շատ ուժեղ թափով ապրել է իր ժամանակի համար և ընդգրկել նրա առաջատար պատմական պրոցեսը, գեղարվեստորեն ամենտ արժեքներ ստեղծելով»:¹

Ա. Տերտերյանը առաջին Աբովյանագետներից է, որ չնայած թուուցիկ, բայց որոշակի կերպով տվել է Շիլլեր-Աբովյան գրական պրոբլեմի ճիշտ մեկնաբանությունը: «Բնության նկարագրության մեջ, - գրում է Ա. Տերտերյանը, - փայլել է Աբովյանի տաղանդը իր երկկողմանի առանձնահատկությամբ. նախ ժուժկալ իրատես դիտողություն, հիպերբոլա, շիլլերյան չափազանցություն»:² Շիլլերը իր «Լուրդոդ» բանաստեղծության մեջ տալիս է այնպիսի մի գեղեցիկ գույների կուտակում, հիպերբոլա, շիլլերյան չափազանցություն է Տերտերյանի մատմանշած հիպերբոլայի գեղարվեստական կատարյալ արտահայտությունը:

«Ծփում է, եռում, փրփրում, շառաչում,

¹ Ա. Տերտերյան, նույն տեղ, էջ 226:
² Ա. Տերտերյան, նույն տեղ, էջ 169:
³ Փորձ, 1876, նո. 2, էջ 300-304. Գ. Բարխուդարյանի թարգմանությամբ:

Կարծես հուր և ջուր միախառնվում են,
Փրփուրը մինչև երկինք է թռչում,
Ալիքներն անվերջ իրար ճնշում են:
Եվ չի վերջանում, և չի դադարում,
Կարծես ծովն էլի նոր ծով է ծնում»:³

Մեծ Գյոթեն այս տողերից հիացած Շիլլերին գրել է, որ ինքը Հռենոսի ջրվեժի մոտ կանգնած տեսել ու դիտել է այդ բնական երևույթը ու այդ տողերի ճիշտ պատկերացումով սքանչացել: Ի գարմանս մեծ Գյոթեի, Շիլլերը իր պատասխան նամակում հայտնել է, որ ինքը այդ բնական երևույթը երբեք չի տեսել, որ բացի ջրաղացի ջրի հոսանքից ընդհանրապես ոչինչ չի տեսել և այդ տողերը գրել է Հոմերոսի «Ոդիսականում» նկարագրված Խարիբդայի տեսարանի ազդեցության տակ:

Ա. Տերտերյանի նկատած շիլլերյան հիպերբոլան առկա է Աբովյանի համարյա բոլոր այն ստեղծագործություններում, ուր նկարագրված է բնության տարերքը և նրա ուժը: «Կայծակը, որ չէր դաժշում սարերի գլխին, ուզում էին թե հազար գագ խորը գնան: Ամպը որ չէր թովիլի բերանը բաց անում, գետինն ուզում էր հազար կտոր ըլի, հոգին տա»: Մի այլ տեղ գրում է. «Երկինքն ամպակալած՝ ուզումա, որ սար ու ձոր ոտնատակ տա, Ալագյազա, Մասսա ու մյուս սարերի գլխին բամբաչի, պոկի, նրանց գետնի խցկի, որ համարձակում են իրենց գագաթը էնպես բարձր վեր ջաշել, որ բոլոր ամպերը վերևը ուր բռնելու տեղ չունենալով, իրենց երկինք մորիցը խռոված, վեր են գալիս ու նրանց գլխին թուլա թուլա դիպվում ու էնպես իրար վրա նստում, որ շատը տեղ չունենալով՝ մյուսներին քոչի ա տալիս, բռթբռթում, դուս ա քցում ու նրանց տեղը բռնում»: «Այստեղից մինչև Աբովյանի ռոմանտիզմը մի քայլ է», - գրում է Ա. Տերտերյանը: «Աբովյանի ստեղծագործության մեջ հատուկ շիլլերականություն կա, որ ցույց է տալիս, թե մեր լուսավորական-դեմոկրատը ռեալիզմի հետ միասին բանեցրել է նաև ռոմանտիզմի մի քանի գծեր, թերևս ավելի շատ, քան բուն շեքսպիրկանությունը»:¹

¹ Ա. Տերտերյան, նույն տեղ, էջ 170

։Ամբողջութեան հետ մտնելով նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։
Սակայն ։Ամբողջութեան հետ մտնելով նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։

։Սակայն ։Ամբողջութեան հետ մտնելով նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։

։Ամբողջութեան հետ մտնելով նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։

։Ամբողջութեան հետ մտնելով նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։

ՎՈՅՏՈՒՆ Է Մ

ՎՈՒՄ ԿԳԳՐՈՒՄ ԿՐԹ ԿՈՒՄՑՈՒՄԻՆԵՐԴ

«Գոյնի մասին ասելու արժեքը չէ ։ Երբ մտնում ես նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։»

«Գոյնի մասին ասելու արժեքը չէ ։ Երբ մտնում ես նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։»

«Գոյնի մասին ասելու արժեքը չէ ։ Երբ մտնում ես նորմալ ճիւղի մէջ անհրաժեշտ է ընդհատել անհարմար վիճակները ։»

6. Ոչ թե պետք է ասել կամ գրել՝ ուղում եմ, սառում եմ, սառչեցի, այլ ուռչում եմ, սառչում եմ, սառալ:

7. Ոչ թե պետք է ասել կամ գրել՝ իսկականից եմ ասում, մի հատ արի մեր տուն, կանգ առնել հյուրանոցում, ստից ես ասում, ներկա գտնվել, անհարձար վիճակ ստացվեց, հեռախոսը վերցրու, լավ կինո տեսա, ամաչելու փոխարեն, անկախության գաղափարը իր մեջ ներառում է, հնչի ներդաշար, ինչի ես եկել, պատճե, բարձր հագ, այլ ճիշտ եմ ասում, մի արի մեր տուն, իջևանել հյուրանոցում, սուտ ես ասում, ներկա լինել անհարձար վիճակ ստեղծվեց, սափողո /խոսափողո/ վերցրու, լավ կինոնկար տեսա, փոխարեն ամաչի, անկախության գաղափարը ներառում է /ամփոփում է, պարփակում է/, հնչու ներդաշար, հնչու ես եկել, պատճեն, բարձր հագ:

8. Կապերի, կապական բառերի, շաղկապների սխալ կիրառություններ, համաձայնության, հոլովառության սխալներ: Այսպես՝ Սիտք ծագեց Հասմիկի մոտ, Ներկայացիր տնօրենի մոտ, Տունը գտնվում է Արմավյան փողոցի վրա, Բողոքում էին բերությունների մասին, Կատակը Արսենի համար տհաճ չէր, որևէ շինարարական աշխատանքների կատարում, ամեն բարեմասնություններով օժտված, Նա պարապում է աղմուկի տակ, Ցանկանում եմ, որպեսզի դու լավ լինես, Նա մտածում էր այն մասին, որպեսզի պատերազմը շուտ վերջանա, Դեմ եմ դուրս գալու նրա ասածի դեմ, Հագվաղեպ եմ այն դեպքերը, երբ բազմամուսնի են բազմաթիվ կենդանիներ, Սիրտը տաք չէ իր հողի վրա, Երջանն ունենա բարածիտի հանքեր ու չկարողանա այն շահագործել, Վրիպումներ ունի, սխալ է անում, Իր ճարպկության պատճառով ազատվեց վթարից, Հիվանդության շնորհիվ վատացավ Վահանը ինչ-որ ափսոսում էր, Ակնոցներս կորան, արձակուրդները վերջացան, երանակները վատ են և այլն: Ընդգծվածները պետք է լինեն Հասմիկի մեջ, տնօրենին, փողոցում, բերություններից, Արսենին տհաճ չէր, որևէ շինարարական աշխատանքի, ամեն տեսակի աղմուկի մեջ, գանկանում եմ, որ, մտածում եմ այն մասին, որ, Դեմ եմ դուրս գալու նրա ասածին, Հագվագուտ եմ այն դեպքերը, երբ բազմամուսնի են շատ կենդանիներ, Սիրտը տաք չէ իր հողին /հողի նկատմամբ/, ունենա հանքեր ու չկարողանա դրանք շահագործել, Վրիպումներ ունի, սխալներ է անում, Իր ճարպկության շնորհիվ ազատվեց վթարից, Հիվանդության պատճառով վատացավ Վահանը ասես /կարծես/ ափսոսում էր, Ակնոցս կորավ, Արձակուրդը վերջացավ, եղանակը վատ է:

9. Սխալ են կիրառվում գրաբարյան որոշ բառաձևեր, կապակցություններ. օրինակ հանձնիս ընթերցողի, ի գարձանս, անպատրաստից ելույթ ունենալ, ուտնկայս դիմավորել, ծայն բարբառի անպատի և այլն: Պետք է գրել և ասել՝ հանձին ընթերցողի /հոգնակիի դեպքում՝ հանձինս ընթերցողների/, ի գարձանս կամ ի գարձանք, հանպատրաստից ելույթ ունենալ, հոտնկայս դիմավորել, ծայն բարբառ հանապատի:

10. Անչափ շատ են բառերի անտեղի կիրառություններն ու կրկնությունները՝ ուրեմն, բան, պետք է ասել, այսպես ասած, մի խոսքով, այսինքն և այլն: Սեկնության, բացատրության, ամփոփման, եզրակացության դեպքում կարելի է կիրառել ուրեմն, մի խոսքով, այսինքն բառերը:

Գրավոր և բանավոր խոսքում դրսևորվում են և այլ կարգի սխալներ, շեղումներ, լեզվավիճական անհարկի կիրառություններ, որոնց տեղի սղության պատճառով չենք անդրադառնում: Հայոց գրական լեզվի օրինաչափությունների պահպանումը պետք է լինի ամեն մի գրագետ հայի սրբազան պարտականությունը:

ՖԻՐՊՈՒՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ՋՈՐՎԱԱՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Ն. Հովասափյան

10-րդ դարի իրանական մեծ բանաստեղծ Ֆիրդուսին Շահնամեում պատկերելով իր հայրենիքի հերոսական անցյալը, հաճախ է անդրադարձել ինչպես հարևան այլ երկրների, այնպես էլ հայ-պարսկական փոխհարաբերություններին:

Շրջանցելով դավանանքի հարցը, պարսիկ բանաստեղծը իր այդ երկում դրվատանքով է խոսել Հայաստանի մասին, նրա զավակներին պատկերել շատ համակրելի գծերով, ընդգծել մեր ժողովրդի խաղաղատենչ և աշխատասեր լինելը, իսկ Մուշեղ Մամիկոնյանին նվիրել է ջերմ ու սրտաբուխ տողեր:

Լինելով հարևան ժողովուրդներ, հայերն ու պարսիկները միշտ էլ եղել են հոգևոր և մտավոր կապերի մեջ, որոնք հարատևել են դարեր շարունակ ու չեն ընդհատվել հառնալով տխուր հարաբերությունների դուռ է բացել երկու երկրների միջև:

Լինելով հարևան ժողովուրդներ, հայերն ու պարսիկները միշտ էլ եղել են հոգևոր և մտավոր կապերի մեջ, որոնք հարատևել են դարեր շարունակ ու չեն ընդհատվել հառնալով տխուր հարաբերությունների դուռ է բացել երկու երկրների միջև:

Եվ չնայած հայ և պարսիկ հոգևոր դասի ստեղծած պաշտոնական գրականության մեջ չեն հայտնվում հարաբերությունների դուռ է բացել երկու երկրների միջև:

Մյուս կողմից, նրանք իրարամերժ ոգուն, երկու ժողովուրդների բանավոր և գրավոր աշխատավորական խավերի հոգուն և ապա արտացոլվել նույն այդ պաշտոնական գրականության մեջ:

Այդ են վկայում 5-րդ և հետագա դարերի մեր պատմիչների երկերում պահպանված շատ արժեքավոր տեղեկությունները, Ազաթանգեղոսի, Բյուզանդի, Խորենացու, Մեբեոսի աշխատություններում իրանական ծագում ունեցող վիպական գրույցների անկայությունը:

Բավական է հիշել, որ, կանխելով պարսկական գրավոր աղբյուրները, պատմահայր Խորենացին առաջին անգամ իր "Պատմություն հայոցի" մեջ հիշատակում է "հարյուր քսան փոլոց" ու ժ ունեցող, արևելյան ամենասիրված հերոս Ռուստամ Ջալի անունը, էլ չենք խոսում Բյուրասայ Ածղահակի և իրանական ծագում ունեցող ժողովրդական այլ գրույցների ու վիպական մոտիվների մասին, որոնք նմանվում են Մ. Խորենացու և մյուս պատմիչների գործերում եղածներին:

Եթե սահմանախախտման օրենքով Հայաստան են թափանցել պարսկական ժողովրդական ստեղծագործությունները, ապա նույն օրենքով էլ հարևան երկիրն է

տարածվել հայկականը: Դրանով պե՞րք է բացատրել իրանական ժողովրդական անգիր գրույցների հիման վրա ստեղծված, 5--6-րդ դարերի խմբագրված Յատկարի Ջարի-րան (Ջարիի հիշատակը) և Կար նամակ Արտաշիի պապականը (Արտաշիի պապականի գործերի մատյան) հայտնի մատյանները և Մ. Խորենացու, Ազանթագեղոսի ու Բյուզանդի երկերի վիպական մոտիվների նմանությունները: Այդ մատյաններից առաջինը պատմում էր զրադաշտականության հաղթանակի մասին, իսկ իսկ երկրորդը փառաբանում էր Սասանյան հարստությունը և նրա հիմնադիր Արտաշիին, այսինքն այն դարաշրջանը, երբ քաղաքական ու տնտեսական կյանքով բուռն վերելք ապրող Պարսկաստանը երկարատև զինաբախումների մեջ էր քրիստոնյա Հայաստանի հետ: Եվ քանի որ այդ մատյանները, բանավոր գրույցների հետ միասին, հանդիսանում են "Շահնամեի" աղբյուրները, ուստի տարակույս չի կարող լինել, որ հենց այդ ճանապարհներով էլ 4-րդ դարի իրադարձությունները, ինչպես նաև զորավար Մուշեղ Մամիկոնյանի անունն ու գործը հասել են Ֆիրդուսին և արտացոլվել նրա "Շահնամեում":

Եվ հետաքրքրականն այն է, որ պարսիկ բանաստեղծը հայ զորավարին պատկերել է նույնպիսի վեհ գործերով ու ազնիվ բնավորությամբ, ինչպես որ նա կա հայ պատմագրության և գեղարվեստական գրականության մեջ. օրինակ "Շահնամեի" այն գլուխը, որը կրում է "Հայերն օգնում են իրանցիներին" խորագիրը: Այդ հատվածում Ֆիրդուսին պատկերում է պարսկական "վեհաշուք" արքաներից մեկի, Խոսրով Փարվիզի կյանքի այն դրվագը, երբ նա հոր գահը ժառանգելու ժամանակ անհավասար ու արյունալի մարտեր է մղում ապստամբ զորավար Բահրամ Չուբինի դեմ: Ահա պատմական այդ իրադարձությունները վերարտադրող գլխում երևում է երկու հարևան ժողովուրդների բարեկամության և փոխադարձ օգնության ոգին:

Երբ Խոսրով Փարվիզը, զգալով թշնամու գերազանց ուժը, խույս է տալիս ճակատամարտից և փախչում Հունաստան, նրա զորավար Բենդույը նեղ վիճակի մեջ ընկնելով դիմում է դեպի հայոց երկիրը, որտեղ և, հանդիպելով Մուշեղ Մամիկոնյանին՝ արժանանում է նրա ջերմ վարմունքին և սրտաբաց ընդունելությանը:

Տեսավ Խվիած Մուշեղ քաջի վրանները բազմաբյուր,
Զաջ Բենդույը այնտեղ գտավ թե ուտելիք և թե ջուր:
Նա մոտեցավ ու Մուշեղին ողջագուրեց սիրաջերմ,

Այնուհետև ասաց սրտում ինչ որ ուզի և ինչ չեն:

Ուշագրավն այն է, որ Բենդույի և Մուշեղ Մամիկոնյանի մտերմիկ, սակայն ռազմական նպատակ հետապնդող այդ գրույցի ժամանակ դիրքի առավելությունը Ֆիրդուսին տվել է հայ սպարապետին: Նա է, որ փորձված զինվորականի իր խորհուրդներով պատերազմական բավական բարդ իրադրության մեջ կողմնորոշում է պարսիկ զորավարին: Վերջինս Մուշեղ Մամիկոնյանին "ուշիմ" և "անվարան" լսելուց հետո է, որ ընդհանուր թշնամու դեմ ռազմական աճուր ու միասնական բռունցք ստեղծելու նպատակով պարսկական զինված ուժերը մոտեցնում է հայոց զորքերին, բերել է տալիս նոր ուժեր, հոգում է նրանց ռազմական հզորության մասին:

Տեղին է նշել, որ հայ-ինանական փոխհարաբերությունների բազմադարյան պատմության մեջ, հատկապես Սասանյանների և Արշակունիների սիրապետությունների շրջանում, եղել են տխուր էջեր, զինված ընդհարումների երկարատև ու նույն տարիներ, եղել է Ավարայր... Սակայն իրանական վերածննդի մեծ արտահայտիչը շրջանցել է այդ բոլորը և մարդասիրական խոր գաղափարներով տոգորված իր երկրում հարևան ժողովուրդների փոխհարաբերությունները ներկայացրել է լուսավոր կողմերով անաղարտ պահելով հայ սպարապետի դիմանկարը: Նրա նկատմամբ ջերմ ու հարգալից վերաբերմունք ունեն ոչ միայն "Շահնամեի" փառաբանված զորավարները, այլև ինքը արքայից արքան: Երբ վերջինս հարյուր հազարանոց հունական զորքի գլուխն անցած վերադառնում է, նրան դիմավորում են Բենդույը և Մուշեղ Մամիկոնյանը: Ահա այս հանդիպման ժամանակ է, որ խոսքով արքան Բենդույից իմանալով հայ սպարապետի հավատարմության մասին՝ ջերմ սիրո և մեծարանքի խոսքեր է ուղղում նրան.

Խոսքով արքան Մուշեղ ջաջին շատ սիրալիր խոսք ասաց.
Թե՛ Մուսրովը չի մոռանա նեղությունը քո ջաշած :
Ես կջանամ, որ ասպագատ լինի պայծառ, լուսահուն,
Զայցիքի մեջ, որ ունենաս մեծերից էլ լավ անուն:

Իսկ երբ վրա է հասնում ճակատամարտի վճռական պահը, երբ պարսկահայկական համատեղ ուժերը պետք է դուրս գան թշնամու դեմ, պարսից արքան "հայկազուն Մուշեղ առաջին" է վստահում երեք գլխավոր մասերի բաժանած բանակներից մեկը, որի գրոհը Ֆիրդուսին համեմատում է "խենթ հողմի" հետ:

Մուշեղ Մամիկոնյանի նկատմամբ խոսքով արքայի ջերմ վերաբերմունքը զգացվում է ամենուրեք, նույնիսկ կռվի ամենաթեժ պահին: Երբ նա նկատում է հայ սպարապետի գլխավորությամբ կռվող քաջերի թշնամու գերազանց ուժերի առաջ "հողմածեծ" լինելը, իսկույն բանազնաց է ուղարկում զորավար Շապուհի մոտ և հայոց բանակին "օգնական նոր գնդեր" պահանջում՝ ասելով.

Պատերազմենք ավարառու թուրքերի դեմ այդ վայրագ,
Որ ձեր գլխին միշտ շողշողա հաղթանակի ոսկե թագ.

Որքան բուռն է բանաստեղծի սերը հայրենիքի հանդեպ, այնքան էլ մեծ է նրա ատելությունը բոլոր նվաճողների և հատկապես իր ժողովրդի ազատությանը սպառնացող թուրանական նվաճողների նկատմամբ, որոնց հայրենասեր բանաստեղծը որակում է "նենգ", "չարամիտ", "քինախնդիր", "վայրագ" և բազմաթիվ նման արտահայտություններով:

Ծառանալով ընդդեմ ամեն տեսակ բռնակալների, պարսիկ մեծ բանաստեղծը սիրով ու խոր համակրանքով է խոսում աշխատավոր ու խաղաղասեր ժողովրդների հինավուրց մասին և մի առանձին ջերմությամբ է արտահայտվում իրանցիների հինավուրց հարևան հայերի նկատմամբ: Այդ են վկայում ոչ միայն Հայաստանի ու հայերի վերաբերյալ տարբեր առիթներով ասված դրվատանքի խոսքերը, այլև "Բիժան և Մանիժե" պոեմի բավական ծավալուն այն հատվածը, որը կրում է "Իրանցիները օգնում են հայերին" վերնագիրը:

Հիշյալ հատվածում Ֆիրդուսին ջերմ ու սրտաբուխ տողերով է երգել "լեռնակուտակ Հայաստանի" բնակիչներին, գեղարվեստական խոսքի ուժով պատկերել հայ ժողովրդի խաղաղասեր և աշխարհաշեն բնավորությունը և, որ ամենակարևորն է ցույց է տվել սեփական հայրենիքով գոհ և երջանիկ լինելու նրա բացառիկ հատկությունը.

Մենք ապրում ենք Հայաստանում մշտախաղաղ ու հանգիստ,
Մեր գյուղերը քարակոփ են ամառիկ ու վեհամիստ,
Մ եր լեռները կանաչել են, ինչպես պարտեզ մի ծաղկանց,
Իսկ բերքատու ճոխ արտերը մեզ տալիս են առատ հաց:

Ահա այս երկրի մարդիկ են դիմում Զեյ-Խոսրով արքային այն օրհասական
պահին, երբ ժողովրդի անդորրը խռովել է կատաղի մոլուցքով հայրենիք ներխուժած
օտար բշնամին, որին Ֆիրդուսին ներկայացրել է աշխահակործան
հատկություններով հանեմատելով նրանց "վայրի" ու "ժանիքավոր" փղերի հետ.

Նրանք փղի ժանիք ունեն ու գեր մարմին սարի պես,
Մեր երկիրը կմոխրանա, եթե շահը չօգնի մեզ:

Այս և բազմաթիվ այլ "թախտահեծ" լուրերը լսելով պատգամավորներից,
պարսիկ արքան լցվում է հարևան ժողովրդին օգնելու վճռականությամբ: Նա ոչ միայն
"սրտահաճո" խոսքեր է ասում նրա պատվիրակներին, այլև առանց հապաղելու բերել
է տալիս "ոսկեսանծ" ու "հրասմբակ մժույզներ", բացում է իր անբավ գանձարանի
դռները և արքայական գահ խոստանում այն քաջին

Ով որ հայոց երկիր գնա վարազների դեմ կռվի,
Արջունական գանձատունը նրա առաջ կփռվի,
Մեծապատիվ այդ հերոսին ես տեսնելով կխնդամ,
Եվ պատվաբեր գործի համար արքայական գահ կտամ:

Արքայի այս կոչին արձագանքում է "Շահնամեի" նշանավոր հերոսներից մեկը,
զորավար Բիժանը, որին բանաստեղծը, ինչպես առիասարակ, այնպես էլ այս դեպքում
օժտել է անհուն վճռականությամբ, դեպի հայրենիքն ու հարևան խաղաղասեր
Չայերին օգնելու՝ իր զորավարի պատրաստակամությունը տեսնելով, Խոսրով
արքան դրվատանքի խոսքեր է ասում նրա հասցեին՝ որակելով նրան "մեծաշուք",
"քաջերի քաջ", "միակ նեցուկ", "հույսերի վահան" և նման այլ բառերով ու
արտահայտություններով.

Ապա շահը մեր Սիլադի քաջ Գուրգենին ճառ ասաց
"Հայոց երկիր տանող ճամփան դու լավ գիտես անկասկած
Թանքիր բուրր մժույզները, գորք հավաքիր արժանի
Եվ գինաշող ընկեր եղիր, և ուղեկից Բիժանի":

Հազարամյակ է անցել այն ժամանակներից, երբ ստեղծվեց մարդկային մտքի
այս հրաշալիքը "Շահնամեն":

Լուսավորելով ժամանակի թանձր խավարը, նա հեղինակի համար բացեց բիրտ
հալածանքների դուռ, սակայն միաժամանակ հարբեց մի ճանապարհ, որը տանում էր
դեպի աշխարհի ժողովուրդների սրտերը, ուր պիտի անմահանար պարսիկ
հանճարը: Նա իր անմահությունը գտավ նաև հայ ժողովրդի սրտում, ոչ միայն
համամարդկային իր գաղափարների ու թովիչ արվեստի շնորհիվ, այլև "Շահնամեի"
էջերը զարդարող ջերմ ու հոգեբուխ այն տողերի համար, որոնք նվիրված են
Հայաստանին և հայ զորավարին:

АКАДЕМИК Н.И.ТОЛСТОЙ И ЭТНОЛИНГВИСТИКА

Э.А.ГРИГОРЯН

Один из крупнейших русских языковедов нашего времени акад. Никита Ильич Толстой всю свою творческую жизнь посвятил изучению и познанию славянского Слова. Это был корифей Славистики, предметом исследования которой является целостный славянский мир в его многообразии и богатстве, в его истоках, генезисе и истории, в его разносторонних внутренних связях. Уже первые работы Н.И.Толстого 50-х годов - яркое свидетельство широкой образованности автора в области языков, культуры и науки южнославянских стран. Они поражают обширностью познаний автора в разных сферах древнеславянской культуры, обилием редких источников на разных языках и, главное, постановкой вопросов, далеко выходящих за рамки лингвистической программы. Работы 60-х годов посвящены древне-славянскому литературному языку и его истории, славянским диалектам и диалектным словарям, лингвистической географии, топонимике, семантике слов, праславянской фразеологии. Разработанная им на славянском материале теория семантических полей оставила заметный след в современной славянской лексикологии и семасиологии. В научных трудах Н.И.Толстого этих лет уже прослеживается переищение внимания ученого от чисто лингвистических проблем к проблемам культуры, как она преломляется и воплощается в языке и его формах и истории. В статье "О лингвистическом изучении Полесья" (1968) впервые раскрылись перспективы единого лингвистического, этнографического и археологического исследования этой области, ориентированного на разрешение проблем восточнославянского этногенеза и славянской прародины.

В 1974-1975 гг. Н.И.Толстой ставит вопрос о необходимости единении диалектологии и этнографии, о едином лингво- и этнографическом подходе к таким сферам духовной культуры, как верования, представления и обрядность, убежденно считает, что "самый нужный путь дальнейшего исследования

славянской демонологии - путь диалектного лингво- и этногенетического анализа обрядов, поверий и связанных с ними демонологических персонажей и терминов"[1,с.32] В целом ряде статей, очерков, этюдов и заметок Н.И.Толстой дал блестящие образцы следования этому пути и показал его эффективность соблюдая и развивая обязательные методологические принципы: во-первых, привлечение по возможности исчерпывающего фонда соответствующих фактов, сведений, свидетельств и, во-вторых, непременный учет географического распределения фактов, ареальная классификация материала и выводы, имеющие непосредственное отношение к межареальным взаимосвязям и к истории представлений мотивов, образов.

Свои теоретические положения, методологические принципы и конкретные результаты исследований в области язычества и мифологии славян акад.Толстой обобщил в книге "Язык и народная культура. Очерки по славянской мифологии и этнолингвистике" (М., 1995), тем самым внося неоценимый вклад в изучение славянского язычества и мифологии. Н.И.Толстой, по существу, заложил основы для их научной реконструкции. Он подчеркивает важность единства методов реконструкции, к которым обращаются лингвистика и археология, этнография и фольклористика и которые "способствуют цельности, полноте и научной убедительности конечных результатов"[2,с.60]. С проблемами реконструкции связана толстовская концепция диалектной природы и диалектного характера традиционной культуры во всем ее объеме. "Диалектен не только язык, но и народная культура, и фольклор, и эти два последних явления существуют и функционируют исключительно в диалектной форме, в форме местных, узко локальных вариантов"[3,с.13]. Изучение комплекса славянских духовных древностей, многолетние полевые наблюдения, разработка методологии единого исследования явлений традиционной культуры славян в итоге привели Н.И.Толстого к выработке своего, отличного от господствовавшего долгое время определения фольклора: "К фольклору следует подходить как к определенной системе мировоззрения и народных представлений, системе

жанров и изобразительных средств, системе ритуальных функций и текстов, имеющих определенное содержание, установившееся традицией" [2, с. 48]. Такое понимание не противоречит известной дефиниции, а выдвигает на первый план свойственные фольклору по самой его природе и сущности признаки.

Н.И.Толстой, рассматривая мифологические мотивы и образы, "запрятанные" в фольклорных текстах, находит к ним параллели в славянских верованиях и обрядовых сюжетах, раскрывает их глубинную семантику и обнаруживает древние, праславянские, а то и индоевропейские корни. Опыты Н.И.Толстого показывают, как много еще скрыто "славянских древностей" в известном нам устном поэтическом материале. Его привлекали тексты, в которых вербальный элемент составлял органическую часть обрядов и анализ которых мог послужить не только целям более полного и надежного раскрытия их семантики, но и задачам исторической реконструкции их прасостояния.

Н.И.Толстой проявлял постоянный интерес к диалектной фразеологии и народной "полуфразеологии". Опираясь на работы А.А.Потебни, он выделяет два противоположно направленных процесса, базирующиеся на соотношении этнографического (или фольклорного) и лингвистического материала: "Первый процесс — это превращение обряда или обрядового текста (как вербального, так и акционального) в слово (словосочетание, предложение), равно как и превращение народного словесного произведения или фольклорного превращения текста в слово (словосочетание, предложение), второй — вербального текста в обрядовый текст, в обряд (ритуал, верование, представление), равно как и слова в вербальный текст, небольшое фольклорное произведение" [2, с. 375-376]. При таком подходе исследователь обязан подходить к фразеологизмам и "полуфразеологизмам" в единстве лингвистического, этнографического (место в ритуале или в в другом необрядовом контексте) и фольклористического (структура, поэтика, символика, сюжетика) аспектов. Именно так и поступает Н.И.Толстой в ряде

своих этюдов [2, V и VI отделы].

С именем Н.И.Толстого, с деятельностью его школы связано в современной науке второе рождение этнолингвистики. Вспомним, что на Западе, и особенно в США, этнолингвистика понималась довольно узко, как наука, занимающаяся прежде всего или предпочтительно проблемами современного, синхронного порядка, как правило, без сопутствующей исторической перспективы, и ассоциировалась с работами и гипотезами Ф.Боаса, Э.Сепира, Б.Уорфа [4, с.397-398; 5, с.183-185]. Развивая традиции и воздавая должное своим предшественникам, Н.И.Толстой стал создателем и ярким представителем современной этнолингвистики. Исходное ее положение: "Этнолингвистика есть раздел языкознания или — шире — направление в языкознании, ориентирующее исследователя на рассмотрение соотношения и связи языка и духовной культуры, языка и народного менталитета, языка и народного творчества, их взаимозависимости и разных видов их корреспонденции" [2, с.27]. Признавая законным "узкое" понимание этнолингвистики как "раздела лингвистики, объектом которого является язык в его отношении к культуре народа", Н.И.Толстой тут же предлагает и иное понимание ее — "как комплексной дисциплины, предметом изучения которой является "план содержания" культуры, народной психологии и мифологии независимо от средств и способов их формального воплощения (слово, предмет, обряд, изображение и т.п.)", причем такое изучение "в наше время может вестись преимущественно или исключительно лингвистическими методами". Являя собой пример "экспансии" в этнографию, этнолингвистика "не конкурирует с лингвистикой и этнографией, с фольклористикой и культурологией", но выступает в роли "комплексной пограничной науки" [2, с.39-40].

В 1995 году увидел свет первый из пяти объявленных томов этнолингвистического словаря "Славянские древности", проспект которого издавался в 1984 г. Н.И.Толстой был инициатором, научным руководителем и главным редактором этого издания, а также автором несколько десятков

статей. Этот словарь является плодом многолетних исследований, ведущихся в России и других славянских странах, в том числе и собственных послевоенных исследований в рамках знаменитой Голесской экспедиции А.И.Толстого и руководимого им научного коллектива. Читатель получил в свои руки фундаментальный труд, который сразу вписывается в историю славяноведческой науки и становится важным вкладом в синтез знаний о духовной культуре славян. Синтетическое представление славянской духовной культуры во всей полноте основывается на данных языкознания, фольклористики и этнографии.

Итак, глубокий интерес акад. Н.И.Толстого к таким проблемам, как язык и культура, слово в контексте культуры, привел его не только к выдающимся личным результатам в той области, за которой в последнее время прочно закрепилось наименование "этнолингвистика", но и к созданию им уже широко известной, успешно и плодотворно работающей московской этнолингвистической школы, оказывающей сильное влияние на развитие этнолингвистики в других лингвистических центрах России и далеко за ее пределами.

Литература:

1. Материалы Всесоюзного симпозиума по вторичным моделирующим системам. Тарту, 1974, 1(5), с. 27-32
2. Н.И.Толстой. Язык и народная культура. Очерки по славянской мифологии и этнолингвистике. М., 1995
3. Славянский и балканский фольклор: Этнолингвистическое изучение Полесья. М., 1995
4. Н.И.Толстой. Некоторые проблемы и перспективы славянской и общей этнолингвистики. - "Известия" АН СССР. Серия литературы и языка. Т. 41, N5, 1982, с. 397-405
5. Н.И.Толстой. О предмете этнолингвистики и ее роли в изучении языка и этноса. - "Ареальные исследования в языкознании и этнографии (Язык и Этнос)". Л., 1983, с. 181-190.

О ФОРМЕ СЛОВА КАК МИНИМАЛЬНОЙ СИНТАКСИЧЕСКОЙ ЕДИНИЦЕ В.В.Мкрян

Одним из достижений современной синтаксической науки является понятие первичной синтаксической единицы. Синтаксис - учение о словосочетании и предложении. Но, будучи объектом изучения синтаксической науки, словосочетание и предложение являются качественно различными категориями.

Предложение - коммуникативная единица. Словосочетание - номинативная единица ("средство расчлененного обозначения предметов, явлений, процессов")²⁰ и в качестве таковой представляет строгий материал для предложения.

Высказывалось мнение, что предложение состоит из слов и словосочетаний. Однако признанию словосочетания первичной синтаксической единицей противоречит само понятие словосочетания, которое представляет производную конструкцию. Первичная же единица синтаксиса должна быть непродуваемой. Кроме того, в составе предложения могут быть словоформы, которые распространяют предикативную основу, или относятся ко всему составу предложения, т. е. не входят в словосочетательные связи ни с одним словом в предложении.

Например: От страшной картины свихнулся разум (Вл. Маяк.).
Вследствие долгой тяжбы он потерял большую часть своего имени (Лерм.).

И, наконец, имеются в языке предложения, в которых вообще нет словосочетаний.

Например: От воды туман и сырость (С.Ес.).
Слово, как неразложимый далее элемент, также не может считаться единицей синтаксиса: приравнивая понятие первичной синтаксической единицы к понятию слова, мы допускаем смешение плана синтаксиса и плана лексики.

1 Г.А.Зелотова. Очерк функционального синтаксиса русского языка. М., 1973, с.63.

Еще В.В. Виноградов обратил внимание на то, что предложение строится не на основе соединения слов, а на основе сочетания определенных форм слова, "выступающих как носители частных и общих грамматических значений"¹.

Организующей предложение единицей не могут быть признаны и части речи, потому что разные формы одной и той же части речи различаются синтаксическими возможностями (сравни личные и неличные формы глагола, полные и краткие формы прилагательных).

Не являются формирующим предложением элементом также члены предложения: не предложение строится из членов предложения, а "слова... вошедшие в предложение, подводятся под роль того или иного члена"². Длительные поиски в этом направлении привели к разработке понятия синтаксической формы слова как минимальной единицы, которая формирует предложение и является "носителем элементарных смыслов и вместе с тем дифференциальных синтаксических признаков"³.

В разработке этого понятия важную роль сыграли труды Г.А. Золотовой и Н.Ю. Шведовой, которые представляют две концепции синтаксической формы слова.

Обе концепции признают синтаксическую форму слова как первичную единицу синтаксиса и свидетельствуют о плодотворности этого понятия для синтаксической науки в целом.

Однако точка зрения Н.Ю. Шведовой на первичную синтаксическую единицу отличается от общепринятой, восходящей к теории Г.А. Золотовой, признанием синтаксической потенции "собственно формы"⁴ в морфологическом смысле.

¹ В.В. Виноградов. О преодолении культа личности в современном языкознании. ИАН СЛЯ, вып. 4, с. 284.

² Г.А. Золотова. Синтаксическая форма слова. М., 1969, с. 59.

³ Г.А. Золотова. Очерк функционального синтаксиса русского языка. М., 1973, с. 19.

Թույլատրվում է էջմիածնի թեմերում բացելու մեկական հոգևոր սեմինարիա (թեմական դպրոց), իսկ եկեղեցիներին կից՝ ժխական դպրոցներ: Դպրոցներ են բացվում նաև նոր Նախիջևանում, Շուշիում և այլուր: Հայ մանկավարժական մտքի զարգացմանը տոն էին տալիս ակամավոր շատ մանկավարժներ: Դրանց թվում էին Հարություն Ալամդարյանը, Մեսրոպ Թաղիադյանը, հաչատուր Աբովյանը և ուրիշներ:

Հայ դպրոցի վերելքը շարունակվում է նաև 19-րդ դարի երկրորդ կեսում, երբ նորովի են հրապարակ իջնում դպրոցի նպատակի, խնդիրների և ուսուցման բովանդակության վերաբերյալ հարցերը: Առանձնապես պետք է ընդգծել էջմիածնի գևորգյան ճեմարանի մասին, որը անուրանալի դեր է խաղացել հայագիտության զարգացման գործում: Ճեմարանը (1874-1818 թթ.) իրականացնում էր միջնակարգ և բարձրագույն կրթություն, ուր դասավանդում էին անվանի շատ հայագետներ: Այն, որպես գիտական մտքի խոշոր կենտրոն, իր համբավը ուներ ողջ հայության մեջ:

Գործող դպրոցները հիմնականում տարրական կրթություն էին իրականացնում, իսկ բաղաբային շատ դպրոցները՝ մանկավարժական կրթության բովանդակության մեջ Կարինի «Անասարյան վարժարանը», Վանի «Երեմյան դպրոցը», Պոլսի «Կենտրոնական վարժարանը» և այլն): Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը հայ դպրոցի կրթության բովանդակության մեջ որպես կառուցող ժողովուրդ՝ ուր էլ բնակություն են հաստատել հայերը, նրանց առաջին գործը եղել է եկեղեցի, իսկ նրա կողքին՝ դպրոց կառուցելը: Հայտնի է, որ 10-

15-րդ դարերում հայկական դպրոցները ավանդել են ոչ միայն ընդհանուր գիտություններ, գրչության, նկարչության ու մանրանկարչության հիմունքներ, այլև պատրաստել են արհեստավոր մասնագետներ, որոնք զբաղվել են կազմարարությամբ, մագաղաթի, թղթի, թանաքի, զանազան գրենական պիտույքների ստեղծմամբ: Գրչության արվեստն ու մանրանկարչությունը դարձել էին արհեստներ, գործում էին արտագրողների արտելներ (2, էջ 11) : Առանձնապես փայլել է Տաթևի վանքը, ուր գործել են գրչության արվեստի նշանավոր վարպետներ, թուրք ու մագաղաթ կոկողներ, թանաք ու գույներ պատրաստողներ, շնորհալի կազմարարներ, նուրբ փորագրողներ ու ոսկերիչներ: Այսինքն, աշխատանքային դաստիարակությունը ունեցել է գործնական բնույթ: Հայտնի է, որ արհեստներ են սովորեցրել իրենց անձնակազմի անդամներին մահ Գ. Տաթևացին ու Հ. Որոտնեցին: Պրոֆեսոր Հ. Աճառյանը իր «Հայոց անձնակազմի բառարանում» նշել է, որ հեղինակ Ա. խ. Մովսիսյանը հաշվել է 70-ից ավել թուրք կոկողների, որոնցից մի քանիսը այդ արհեստը սովորել են Տաթևի դպրոցում:

Գ. Տաթևացին կարևոր է համարել երեխաներին փոքր հասակից գյուղատնտեսության ու արհեստների մեջ վարժեցնելը, նա գողություն անելու վատ, սովորույթը դիտել է իբրև չաշխատելու հետևանք: Որպես գիրք կազմողներ, փորագրողներ ու քանդակողներ, աչքի են ընկել նաև Գլածորի համալսարանի աշակերտները: Չի կարելի կարծել, թե այս հարցում Տաթևի ու Գլածորի դպրոցները աշակերտներն են կազմել: Մենք հակված ենք հարգել Ա. խ. Մովսիսյանի այն ուշագրավ հետևությունը, որ միջնադարյան հայ դպրոցներում ուսուցանվող առարկաներից մեկը, սկսած 7-րդ դարից, եղել է ճարտարապետությունը կամ կառուցման արհեստը (3, էջ 243):

Ավելի ուշագրավ է այդ ուսումնասիրության 249-րդ էջի եզրահանգումը «Իսկ ինչ վերաբերվում է Անիին, ապա մի շարք փաստեր ասում են, որ այնտեղ եղել է առանձին ճարտարապետական, կառուցողական գիտելիքներ ուսուցանող դպրոցական տիպ»:

Պետք է ենթադրել, որ Հայաստանում զարգացած է եղել կառքաշինության արհեստը: Արձանագրված է, որ դեռևս 1108-1080 թթ. շրջանում (մ.թ.ա.) օտար նվաճողներից մեկը Նաիրիի դաշտում ջարդել է նրանց պատկանող 120 ռազմակառք (նույն տեղում, էջ 491):

Աշխատանքային դաստիարակության հիմնահարցը իր պատշաճ տեղն է ունեցել ժամանակաշրջանի լուսավոր դեմքերի հայացքներում:

Այսպես, ըստ Գ. Ա. Նազինյանի, Յ. Վանանդեցին (1772-1840 թթ.) կրթության հիմքում առաջադրել է երեք գաղափար՝ գիտություն, հայրենասիրություն և հասարակության համար պիտանի արհեստներ (4, էջ 28):

1847թ-ից մանկավարժ Ն. Զորայանը հողվածներ է գրել տնտեսագիտության և առևտրի հարցերի վերաբերյալ, որոնք լույս են տեսել «Քազմավեպում» (5): Նա գրում է, որ ոմն Սերվիլիեի նախաձեռնությամբ Պոլսի Ազգային հիվանդանոցին կից հիմնվել է երկրագործական դասարան: Նշվում է, որ 1847թ. Ազգային ժողովի 27 անդամներից 14-ը արհեստավորներ էին: Վաճուռ երեխաները գրել-կարդալ են սովորել արհեստանոցներում: Շատ արհեստավորների խանութներ միաժամանակ ծառայել են իբրև դասարաններ և սովորողները ուսումնառության ընթացքում միաժամանակ աշխատել են, կատարել բազմաթիվ անվճար ծառայություններ ի նպաստ դպրոցի:

Այլ փաստեր: Անդրկովկասյան ուսումնարանների 1835թ. կանոնադրությամբ գավառական ուսումնարանները ունեին երեք դասարան, որտեղ անհրաժեշտության դեպքում թույլատրվում էին ավանդել նաև գյուղատնտեսական, կամ առևտրական գիտելիքներ: Նման դեպքում ավելացվել է 4-րդ դասարանը (6, էջ 67): Իսկ Կովկասյան ուսումնական օկրուգի 1848թ. կանոնադրությամբ թույլատրվել է գիմնագիտություն և ազնվական դասի երեխաների համար ավանդել գյուղատնտեսության և ճարտարապետության, իսկ առևտրական դասի երեխաներին՝ թվաբանության, ճարտարապետության, ասրանքագիտության և առևտրական իրավունքի հիմունքներ: Այս հաշվապահության, ավաստում է Մ. Սանթրոսյանը (էջ 70): Նա նշում է, որ Խ. Աբովյանը գավառական ուսումնարանի փոքրիկ պարտեզում ու Սարդարի այգում աշակերտներին վարժեցնում էր երկրագործական ու այգեգործական աշխատանքներ կատարել (էջ 76): Ըստ նույն աղբյուրի, 1843թ. Լազարյան ճեմարանի սաները ուսումնասիրել են առևտրական գիտելիքների հատուկ դասընթաց, իսկ 1847թ. նաև տնտեսագիտական գիտելիքներ և այլն (էջ 356):

Անվանի հայագետ Ա. Առաքելյանը գրել է, որ 1831թ. Յայոց կաթողիկոսի կարգադրությամբ Թելավի քաղաքում բացվել է դպրոց 60 աշակերտներով, որից 40-ը հայ էին, 20-ը՝ վրացի. դասավանդվել է նաև հաշվապահություն (7, էջ 456): Յեղիմակը միաժամանակ տեղեկացնում է, որ 1814թ. Գ. Խուբյանը Ղզլարում բացել է մասնավոր

դպրոց 100 աշակերտով, ուր դասավանդվել է նաև առևտրական հաշվապահություն (էջ 462):

Այս և այլ փաստեր հաստատում են, որ հայ դպրոցում սովորողների աշխատանքային դաստիարակության հարցը կազմել է ուսման բովանդակության անբաժան մասը. որը նպաստել է արհեստների ու արվեստների զարգացմանը: Իհարկե, չպետք է բացառել մարդկային ինքնագործունեության մեծ դերը: Առաքելյանը նշում է, որ հայ իրականության մեջ ծաղկուն արհեստների գոյությունը հաստատել է նաև Ղ. Ինճիճյանը իր «Հնախոսութիւն աշխարհագրական հայաստանեայց աշխարհի» (1835թ.) աշխատության երրորդ հատորում «438 (ՆԼԸ) Հայաստանեայց աշխարհի» (1835թ.) աշխատության երրորդ հատորում «438 (ՆԼԸ) թվականին Բյուզանդիոնի հռչակավոր ս. Սոֆիա տաճարը երկրաշարժից ճեղքվածք է քակվանիս Բյուզանդիոնի հռչակավոր ս. Սոֆիա տաճարը ճեղքվածք է քակվանիս և ստանում, և Տրդատ ճարտարապետը իմաստուն հանճարով նորոգում է այն և դարձնում ավելի գեղեցիկ, քան առաջ է եղել... Մանվել ճարտարապետն է կառուցել Արթամարի վանքը. իմաստությամբ լեցուն և իր գործին հմուտ մի մարդ, որը իրաշակերտում է եկեղեցին զարմանագործ արհեստով»: Նշվում է, որ Մանվել ճարտարապետը եկեղեցու ճարտարապետական կերտվածքը հարստացնում է թռչունների, խոզերի, առյուծների, ցուլերի, արջառների և այլ կենդանիների քանդակներով... Ինճիճյանը իր աշխատության մեջ տեղեկացնում է նաև կանանց «ուստայնանկության մասին», որոնք այժի կոշտ մազը կակղեցնում և դարձնում էին շալ (7, էջ 490-491):

Աշխատանքային դաստիարակություն իրականացվել է ոչ միայն դպրոցների, այլև գրականության, մանուկի միջոցով: Որպես շրջիկ դպրոցներ վերջիններս մեծ դեր են խաղացել ժողովրդական լայն զանգվածների լուսավորության գործում: Այսպես օրինակ, Ասար Սեբաստացին դեռ 16-րդ դարում «Գիրք բժշկական արհեստի» աշխատության ներածականում ընդգծել է, որ բոլոր մարդիկ պետք է իմանան բժշկության մասին: Առաքելյանը նշում է, որ բժշկության վերաբերյալ աշխատություններում ու ձեռագրերում բացի հիվանդությունների և դրանց բուժման նկարագրություններից, տրվել են նաև տեղեկություններ դեղաբույսերի, բանջարեղենի, մրգերի, խմիչքների և այլ սննդամթերքների օգտագործման առանձնահատկությունների, օրգանիզմի համար դրանց ունեցած դերի ու նշանակության մասին: Սեբաստացին աշխատության մեջ նշել է այն 7 ձեռագրերի մասին, որոնք բովանդակել են պտուղներից (նուռ, սերկևիլ, խնձոր, խաղող, ընկույզ,

թութ և այլն) շարապներ և շարքաթներ (օշականներ) պատրաստելու եղանակները: Տրվել է նաև բացատրություն, թե ինչ նյութերից պետք է պատրաստել դեղերը և ինչ եղանակներով (7, էջ 413):

Այսպիսով, այս և այլ փաստեր անառարկելիորեն հաստատում են, որ հայ դպրոցում մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, մեծ տեղ է տրվել աշխատանքային դաստիարակության հիմնահարցին, ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Այդ են հաստատում նյութական ու հոգևոր կուլտուրայի այն բազում ժառանգությունները, որ սփռված են աշխարհով մեկ:

Օգտագործված գրականություն

1. Շավարշյան Ա. Մ. «Հայ մանկավարժներ», Գիրք Ա, 1958
2. Լեոնյան Գ. Զ. «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Ե, 1946.
3. Սովսիսյան Ա. խ. Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատ. Ե, 1958
4. Նազիկյան Գ. Ա «Արևմտահայ մանկավարժական միտքը և դպրոցը», Ե, 1969
5. «Բազմավեպ» (հանդես), Վենետիկ
6. Սանթրոսյան Մ. Գ «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին», Ե, 1964
7. Առաքելյան Ա. Գ «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» հ. 3, Ե, 1964

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵԼԱՎԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎՏԱՆՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՍԵԼԱՎՆԵՐԻ ԴԵՍ ՉԵՌՆԱՐԿՎԵԼԻՔ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԸ Է.Ա. ԲՎՂՇԵՑՅԱՆ, Խ.Ե.ՆԱԶԱՐՅԱՆ

Երկրի մակերևույթը վերափոխող արտաքին ուժերի շարքում զգալի տեղ ունեն բեկորային նյութերով խիտ հագեցված /մինչև ընդհանուր ծավալի 50-60, անգամ 70%-ը/, ահեղ, մեծ քայքայիչ ուժի, հանկարծահաս, կարճատև սելավները, որոնք մակերևույթի ողողման և հեղմահարված նյութի տեղատարման գործում վիթխարի դեր են կատարում: Մոլորաբար մեկ սելավի դեպքում, ընդամենը մի քանի ժամում, այնքան նյութ կարող է գետավազանից դուրս բերվել, որքան նորմալ էրոզիայի միջոցով տասնյակ տարիների ընթացքում:

Սելավները լայն տարածում ունեն երկրագնդի արևոյ և սեմաշխի կլիմայական պայմաններ ունեցող լեռնային երկրներում: Սելավներ հաճախակի են ձևավորվում Տյան-Շանում, Ռամիրա-Ալայան լեռնային համակարգում, Իրանական բարձրավանդակում, Ամատոլական սարահարթում, Պիրենեյան, Ալպեյնյան, Բալկանյան քերալդոզիներում, Հյուսիսային Ամերիկայի արևմտյան լեռնային շրջաններում և այլուր: Սելավները բնորոշ են նաև Հայկական լեռնաշխարհին: Վերջինիս հյուսիսարևելյան մասում գտնվող Հայաստանի Հանրապետության տարածքի 55-60%-ը սելավաբեր է:

Սելավային հասքերը գետավազաններից դուրս են բերում մեծ քանակությամբ ջաշեր, խիճ, ալվազ, տիղմ, մանրահող, կոճող, գերան, ինչ որ հանդիպի ճանապարհին:

Մեր շահ սելավների դուրս բերած բեկորային նյութի ծավալը հասնում է տասնյակ հազարավոր խորանարդ մետրերի: Այդպես՝ Կապանի 1960թ. հուլիսի 20-ի սելավի մոտ այն կազմել է 50 հազ. խոր. մետր, Փամբակի /Մևանի ավազան/ 1954թ. հուլիսի 12-ի սելավի մոտ՝ 75 հազ. խոր. մետր, Գետառ 1946թ. մայիսի 25-ի սելավի մոտ՝ 495 հազ. խոր. մետր, Մաստարայի 1957թ. հուլիսի 12-ի սելավի մոտ՝ 1.650 հազ. խոր. մետր:

Սելավային հոսքերը մեծ վնաս են հասցնում ժողովրդական տնտեսությանը: Նրանք մի կողմից՝ ողողում են բարձրադիր լեռնալանջերին տեղադրված հողահանդակները, իսկ մյուս կողմից՝ ցեխաքարային նյութերով ծածկում են ցանքատարածություններ, ոչնչացնում են այգիներ, ավերում՝ ճանապարհներ, կաճուրջներ, զանազան հիդրոտեխնիկային

կառույցներ, բնակավայրեր, պատճառում մարդկային զոհեր:

Այսպես՝ 1946թ. մայիսի 25-ին և 1950թ. մայիսի 12-ին սելավներից խտրորեն տուժեց Երևանը, 1947թ. հուլիսի 11-ին՝ Մեղրի, 1956թ. օգոստոսի 26-ից և 1960թ. հուլիսի 20-ին՝ Կապանը, 1954թ. օգոստոսի 12-ին՝ Փամբակ և Ջիլ բնակավայրերը, 1927թ. հունիսի 20-ին, 1958թ. հուլիսի 27-ին, 1960թ. մայիսի 19-ին, 1970թ. օգոստոսի 16-ին և 22-ին՝ Երևան-Թրիպիսի երկաթգծի Արջուտ-Այրուս հատվածի մի շարք տեղամասերը, Ալավերդի քաղաքը, 1957թ. հուլիսի 12-ին՝ Արմավիր քաղաքը և այլն:

Վերջին տարիներին սելավներից տուժեցին Ծիրակի, Գեղարքունիքի, Մյուսիքի, Վայոց ձորի, Աղստև գետի ավազանի մի շարք բնակավայրեր և հարյուրավոր հեկտար ցանքատարածություններ:

Հաշվի առնելով հանրապետության տարածքի սելավային հոսքերը սելավաբնորոշման աստիճանը, մասշտաբները, գործելու հաճախականությունը, սելավային զանգվածի պինդ վտախ քաղաղորդի քանակն ու բնույթը, նրանց կարելի է խմբավորել շրջը կարգում:

Առաջին կարգի վտանգավոր, որոնք բնորոշվում են ուժեղ կամ միջին սելավաբնորոշմամբ, մեծ մասշտաբներով, բարձր հաճախականությամբ մայրուղի, խոշոր հիդրոտեխնիկական կառույցներ, կամուրջներ և այլն) նկատմամբ լուրջ սպառնալիքով: Մակայն այն հոսքերը, որոնք ունեն մեծ մասշտաբի սելավաբնորոշում բարձր հաճախականություն և իրենց ենթակայության տարածքներում դեռևս չունեն ժողովրդատնտեսական օբյեկտներ, նույնպես դիտվում են առաջին կարգի սելավատնտեսական օբյեկտներ: Առաջին կարգի վտանգավոր սելավային հոսքերից են՝ Գետառչ, Մաստառան, Գյումրիգետը, Մեղրիգետը, Գեղամուշը, Կավարտը, Վաչագանը, Արծվամիկը, Ալավերդի սելավային հոսքերը և այլն:

Երկրորդ կարգի վտանգավոր, հատկանշական են միջին մասշտաբի սելավաբնորոշմամբ, չափավոր հաճախականությամբ (մինչև 10 տարվա կարրերաշրջանով) և սպառնում են բնակելի առանձին շենքերի, երկրորդ կարգի խճուղային ճամբարների, խեղագլուխ խոշոր ջրամբարների ու կառույցների: Այդպիսիներից են՝ Երաշխատուր (Չաքմա), Նորաշենիկի, Ագարակաձորի, Ելիկի, Արածոգետի, Ջաջուտի, Բաբաջանի, Գարայի և մյուս շատ սելավային հոսքեր:

Յուրրորդ կարգի վտանգավոր, այս սելավային հոսքերը հաճախ են գալիս սելավաբնորոշման փոքր մասշտաբով և բույլ հաճախականությամբ: Մրանք սպառնում են տեղական նշանակություն ունեցող ճամբարների, գյուղատնտեսական ցանքատարածությունների, ամտանների, արտավայրերի, ռոզգի ջրանցքների և ժամանակավոր կառույցների: Այս կարգի են՝ Արմրկի, Մարապատի, Վարդանաճուռի, Մալիտակաբի, Մարցագետի և մի քանի տասնյակ այլ սելավային հոսքերը:

Սելավային երևույթների ներգործությունը ՀՀ բնական լանդշաֆտների վրա սպառնալից կերպով մեծանում է: Սելավները վնասագեթցման, իսկ հնարավորությամբ դեպքում մահ կամ ծանր վնասատակով անհրաժեշտ են հակասելավային համալիր միջոցառումներ: Այդպիսիք կարող են լինել սելավային հոսքերի ավազաններում տարափակարգավորիչ-սելավաորս ջրամբարների կառուցումը, սելավային հուններում ընդլայնական դարավանդների ստեղծումը, հունների առանձին հատվածների ուղղումը, ավամբարացումը, լանջերում ֆիտոմելիորացիոն աշխատանքների իրականացումը, արտավայրերի խելացի օգտագործումը, ագրոտեխնիկական կանոնների լիարժեք կիրառումը:

Տարափակարգավորիչ-սելավաորս ջրամբարների կառուցմամբ ցախ՝ հնարավորություն կստեղծվի վնասագեթծել սելավները և ապա՝ հազարավոր հեկտար անջրդի հողեր ոռոգելի դարձնել, որն զգալիորեն կնպաստի հողերի կառուցվածքի բարելավմանը և սելավների ու առհասարակ տեղատարման երևույթների ճանդեպ գեղիմների կայունացմանը: Ոռոգվելի հողատարածությունները էարդը են ծածկվել խաղաղի այգիներով, պտղատու ծառերով և արժեքավոր տեխնիկական կուլտուրաների ցանքատարածություններով:

Մակերևույթի մեծ քեթությունների պայմաններում ձմեռային և անձրևային ջրերը ոչ միայն լվանում, քայքայում ու աստիճանաբար հողը զրկում են հանքային նյութերով հարուստ տարրերից, այլև՝ կորչում են ամօգուտ: Հանրապետության տնտեսությունը, մանավանդ ամսան ամիսներին, ջրի սուր կարիք է զգում: Բավական է նշել, որ մեր բոլոր գետերը՝ ստեղծման հոսանքներում ամբողջ ամսանը և աշման սկզբին լինում են միանգամայն ջրագուր: դրան զուգընթաց, տնտեսության/գարգացող/պահանջները ջրի նկատմամբ, գնալով ավելանում են: Նշանակում է, ամեն միջոց պետք է ձեռնարկել մեր ջրային ռեսուրսները խելացի օգտագործելու համար:

Ձմեռային, անձրևների, մանավանդ սելավների ջրերի պատնեշումը և կուտակված ջրերի օգտագործումը մեր հանրապետության համար կարևորագույն նշանակություն ունեցող հարց է: Այս կարգի միջոցառումների՝ տարափակարգավորիչ-սելավաորս ջրամբարների կառուցման անհրաժեշտություն և տեղագրական-ձևաբանական ու ինժեներական ներկրաբանական նպաստավոր պայմաններ կամ Արագածի ու Գեղամա լանջերի լանջերին, Հրազդան, Ագար, Վեդի, Արածոգետ, Ողջի, Մեղրիգետ, Ոսկեպատ, Արփա, Չորագետ և այլ գետերի հովիտներում:

Սակայն նկատենք, որ Հայաստանի Հանրապետության բարդ ու լինելի պայմաններում, զգալի թվով սելավաբեր ավազաններում տարափակարգավորիչ-սելավաորս ջրամբարների ստեղծման համար նպաստավոր տեղաձևարանված պայմաններ չկան, չա՛մ միայն տարափակարգավորիչ ջրամբարների ստեղծումը չի կարող հանդիսանալ սելավային

երևույթների վնասագործման, առավել կանխման բավարար պայման: Այդպիսիք են պայմանները Ձանգեզուրի, Վայքի, Ուրծի, Երանոսի, Երիվանի, Վիրահայրաց ծալքաբեկորավոր և մասամբ նաև Վարդենիսի, Ջավախքի հրաբխաբերական լեռներից սկսվող գետավազաններում, Աղստև, Դեբեդ, Ախուրյան գետերի մի շարք սելավաբեր վտակների և Արեգունի ու Սևանի լեռնաշղթաների հարավարևմտյան լանջերից դեպի Սևանա լիճը հոսող գետակների հովիտներում:

Այդ վայրերում որպես առաջնահերթ հակասելավային միջոցառում անհրաժեշտ է ստեղծել ճյունակտուակ բմբեր, լեռնային ջրահեռացման առուներ, քարային պատնեշներ, իրականացնել ձորակների լանջերի բուսապատման, լանջերի դարավանդավորման և բուսապատման եղանակով փխրուն ու անկայուն տեղամասերի ամրացման աշխատանքներ: Սելավային զանգվածի հարվածի ուժը թուլացնելու նպատակով Մեղրիգետ, Ողջի, Արփա, Փամբակ, Աղստեֆ, Դեբեդ գետերի մի շարք սելավաբեր վտակները հուններում աբդուլմուհամեդ կլինի ընդլայնական դարավանդների (բառածների) ստեղծումը:

Անհրաժեշտ է ավիամրցման կարգի միջոցառումներ ձեռնարկել Արաքս, ինչպես նաև Ազատ, Վեդի, Արփա, Դեբեդ, Աղստեֆ գետերի որոշ հատվածներում:

Հանրապետության տարածքի մի շարք սելավաբեր հունների առանձին մասերում՝ Ուրծի, Երիվանի, Երանոսի, Արեգունու, Սևանի լեռնաշղթաների հարավային լանջերի նախալեռներում, հույժ անհրաժեշտ է ստեղծել ուղիղ կամ շատիճանակերպ ջրանցումներ, բետոնե սելավաթողներ և այլ ջրատեխնիկական կառույցներ: Այդպիսի կլիմային պայմաններում լանդշաֆտների խոցելիությունը կանխելու նպատակով անհրաժեշտ են հանրապետության բոլոր հողահանդակներում գյուղատնտեսական ագրոկանոնների անբերի կիրառում, արտավայրերի պլանավորված օգտագործում, ճանապարհային և խոլագայիտի էրոզիայի կանխման միջոցառումների ձեռնարկում, Երիվանի, Փամբակի, Երանոսի, Ուրծի, Վայքի, Բարգուշաղի, Մեղրու լեռնաշղթաների լանջերին՝ ֆիտոմեխորացիան աշխատանքները իրականացում:

Չհասել
Էմմա Արաչի Բախչեցյան
Խաչիկ Ենոքի Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵԼԱՎԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ Խ. Ե. ՆԱԶԱՐՅԱՆ

Սելավները լայն տարածում ունեն երկրագնդի արիղ և սեմիարիղ կլիմայական պայմաններ ունեցող լեռնային երկրներում: Նկատենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 60%-ը հայտնի է սելավային երևույթներով: Սելավները հիմնականում տարածված են Մեղրիգետ, Ողջի, Արփա, Արածոգետ, Վեդի, Երախաջուր (Չաթմա), Մաստարա, Փամբակ, Չորագետ, Դեբեդ, Աղստև գետերի ավազաններում, Արեգունի և Սևանի լեռնաշղթաների հարավային լանջերին, ինչպես նաև Հրազդան, Քասաղ, Ազատ, Որոտան, Ախուրյան գետերի մի քանի վտակներին մոտ:

Մեր կողմից հետազոտվել են ՀՀ տարածքի շուրջ 400 սելավային հոսք: Որոշել ու հաշվարկել ենք նրանց մի շարք պարամետրեր, յուրաքանչյուր սելավային հոսքի ջրհավաք տարածքի սելավագոյացմանը ակտիվ մասնակցող մակերեսները ($F_{akt} = F_{akt} / F\%$), ջրհավաք ավազաններում բափվող տեղումների ինտենսիվությունը (մմ/րոպ), առավելագույն հեղուկ ավազաններում սելավային սելավային զանգվածի հագեծվածության աստիճանը, հոսքը, բեկորային նյութերով սելավային զանգվածի հագեծվածության աստիճանը, սելավային զանգվածի տեսակարար կշիռը, սելավային առավելագույն հոսքը, սելավագոյացման ակտիվ մակերեսի յուրաքանչյուր 1 կմ² - ուց սահմանվող բեկորային նյութի ծավալը:

Ձեռքի տակ ունենալով հարուստ փաստական նյութ կատարել ենք ՀՀ սելավային ավազանների շրջանացում:

Իբրև շրջանացման միավորներ ընդունել ենք. մարզը, ենթամարզը, շրջանը, ենթաշրջանը: Սակայն անհրաժեշտության դեպքում ենթաշրջաններում կարելի է առանձնացնել՝ տեղամասեր, և ենթատեղամասեր:

Մարզերն առանձնացվում են համեմատաբար խոշոր ջրային համակարգերի պատկանելիության սկզբունքով: Օրինակ՝

1. Արաքս գետի ավազանի մարզ
 2. Կուր գետի ավազանի մարզ
- Ենթամարզերն առանձնացվում են հաշվի առնելով բնական պայմանների /լանդշաֆտային տարբեր կարգի միավորների/ ակնբախ տարբերությունները: Օրինակ՝ Արաքս գետի ավազանի մարզը բաժանվում է.

ա. Միջինարարային ենթամարզի , որը բնութագրվում է հիմնականում միջին թեքություններով, չորային կլիմայով, ֆրիգանային, լեռնատափաստանային, անտառազբյուրե տարածքներով:

բ. Զանգեզուրի ենթամարզի, որն հանդես է գալիս մեծ թեքություններով, համեմատաբար խոնավ կլիմայով, լեռնատափաստանային և անտառային լանդշաֆտներով:

Երջանները գառվում են միջին չափի գետավազանների պատկանելության և բնական պայմանների ու դրանց պայմանավորող բաղադրիչների միջոցառելության սկզբունքով:

Մելավագոյացման գեոմորֆոլոգիական պրոցեսների, սելավավեր ավազանների սելավային պարամետրերի ընդհանրության հատկանիշներով, շրջանները ստորաբաժանվում են ենթաշրջանների:

Երջանների և ենթաշրջանների օրինակները կարելի է տեսնել Հայաստանի Հանրապետության տարածքի սելավային ավազանների շրջանացման հետևյալ սխեմայում:

Մարզ	Երկրամարզ	Երջան	Ենթաշրջան
Արարս գետի ավազան	I. Միջինարարային	1. Մխուրյան գետի ավազան	ա/Շիրակի լեռնաշղթայի բ/Արթիկի (Կարկաչանի) գ/Ամասիայի
		2. Մեջուր-Ձասաշ գետի ավազան	ա/Մաստարայի բ/Ամբերդի գ/Վերին Ձասախի (Ապարանի)
		3. Ծաղկունյաց	ա/Մաշտարիկի բ/Արզականի
		4. Սևանի	ա/Արեգունու բ/Արտանիշ-Քարաջանի գ/Շրամոս-Վարդենիկի
		5. Երանոս - Ռիբծի (Ագատ-Վեդու)	ա/Կոտայքի (Գեղառի) բ/Մազազի (Ագատի) գ/Շրախաջրի (Չաթնայի) դ/Վեդու ե/Արածուգետի

1	2	3	4
	II. Զանգեզուրի	6. Վայքի (Արփա գետի)	ա/Արփա-Շղեզիսի բ/Վայքի լեռնաշղթայի հյուսիսային լանջի (Գնդիշիկ- Ագատեկի) գ/Նոճորուտի
		1. Որոտամի	ա/Բարուշատի բ/Գորիսի
		2. Ողջի - Ծավի	ա/Քաջարաբ-Գեղու բ/Կապանի դ/Նորաշենիկ-Շղվարդի դ/Շիկահողի
Կուր գետի ավազան		3. Մեղրու	ա/Մեղրիգետ -Ագարակի բ/Շվանիձոր -Նյուվադու
		Գուգարքի (Դեբեդի ավազան)	ա/Փամբուկի բ/Չորագետի գ/Մոռուձորի
		Աղստև - Տավուշի	ա/Աղստևի բ/Գետիկի գ/Նուկեպար-Կողքի դ/Տավուշի

Մելավագոյացման պայմանների գեոմորֆոլոգիական ներքին տարբերություններով ենթաշրջաններում, գտնում ենք անհրաժեշտ առանձնացնել նաև շրջանացման ավելի փոքր միավորներ՝ տեղամասեր, ենթատեղամասեր:

Այսպես, որպես օրինակ վերցնենք Արարս գետի ավազանի մարզի Միջինարարային ենթամարզի Երանոս - Ռիբծի շրջանի Վեդու և նույն մարզի Զանգեզուրի ենթամարզի Ողջու շրջանի Կապանի ենթաշրջանները և նրանցում առանձնացնենք տեղամասեր ու ենթատեղամասեր:

Ենթաշրջան	Տեղամաս	Ենթատեղամաս	Մեկավագոյացման հիմնական գերմորֆոլոգիական ազդակները	
1	2	3	4	
Վերու	Ջերմանիսի	Յրդուտի	Ջարափային քաղաքներ, Էլվածքներ, սողաճրճեր, սոլիֆյուկցիա	
		Խոարովագետի	Մեծ բեքոթյուններ՝ դեյուվիում, փլվածքներ, մերծիումային մատվածքներ	
		Արմիկի	Մորանքներ, մերծիումային մերկացումներ	
	Կտուց-Ալսաշի	Կտուցի	Մեծ բեքոթյուններ, սեմիարդի կլիմայի պայմաններում աճջատվող ֆիզիկական հողմահարման արգասիքներ: Հիմնականում ջրամերձ լիթոլոգիական հիմք:	
		Ալսաշի	Ջգալի բեքոթյուններ, ընդարձակ մերկացումների և արիդ կլիմայի պայմաններում մայր ապարներից աճջատվող առաւել բեկորային նյութեր, ջրամերձ լիթոլոգիական հիմք:	
		Շաղափի	Ջարափային	Մողաճներ, սոլիֆյուկցիա (մետոլիպոնտի հրաբխածին-բեկորային հատույթի տակ ափսոսանքում օլիգոցենիկալները):
	Դահնակի լեռնաշղթայի հարավային լանջի	Ուրծի լեռնաշղթայի հյուսիսային լանջի		Բեկորային նյութի անջատում՝ տեկտոնական ծաղման գառնիքի շարադրներից, հեզույն ջրգրական ցանցալիտի մատվածքներ, սուֆոզիա:
				Բեկորային նյութի անջատում՝ սուբսելվեննո շլամատիկ ներքին լանջերից, մոնոկլինալ մակերևութների ձողաշերտի մեջ գոյացող սաղմնային ակոսների և ձողակների խորացում, ցածրադրի մասնում՝ սոֆոզիա:
	Կապանի	Չախակոյան	Հունան	Մակերևութի մերկացումներ, բեկորային նյութի անջատումներ՝ մեզոզոյն հրաբխածին-մատվածքային հատույթից, քաղաքային մեծ բեքոթյուններ:

1	2	3	4
		Կավարտի	Անթրոպոգեն ազդակ՝ հանքահորերի շահագործմամբ գոյացած վիթխարի չափերի բեկորային նյութ:
	Աջակողմյան	Վաչագանի	Մեծ բեքոթյուններ, քաղվեգային գառնիքի հատվածներ, տեկտոնա-դեմոլոգիոն քարակներից մեծ քանակությամբ բեկորային նյութի անջատում:
		Գեղանուշի	Ջրհավաքի վերնազավառում՝ մեծ բեքոթյուններ, հունային զգալի անկում, մինչև 5 մլն.մ ³ քափոնառար:

Կազմվել են 1: 200.000 և 1: 1000.000 մասշտաբի շրջանցման շարտեզներ և համապատասխան աղյուսակներ:

Handwritten signature

Խաչիկ Ենոքի Նազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԻ
ՍԵՆԱՎԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅՅՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԹԱՅԸՆ (ԴԻՆԱՄԻՎԱՆ)
Խ.Ե. ՆԱԶԱՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության տարածքում սելավները ձևավորվում են. գլխավորապես, լեռների հարավահայաց լանջերին. որոնք բնութագրվում են անբավարար խոնավացմամբ, ջերմացման ու խոնավացման ցուցանիշների կտրուկ տատանումներով. աղքատ հողաբուսական ծածկույթով, հետևաբար հողմահարման և բեկորային նյութի անջատման եռանդուն տեմպով: Հյուսիսային դիրքադրություններում, ուր առկա է անտառային և մարգագետնային փարթած բուսածածկույթը, սելավային երևույթները թիչ են կամ բույ:

Սելավների ձևավորումը մեզ մոտ հիմնականում կապված է տեղատարափ անձրևների կամ տեղատարափի ու նրան ուղեկցող կարկուտի հետ: Չճիացային սնման սելավները հազվադեպ են:

Սելավներից բազմիցս տուժել են Նրևան, Ալավերդի, Արմավիր, Կապան քաղաքները և շատ այլ բնակավայրեր, երկաթուղային, ավտոխճուղային ճանապարհներ, ջրանցքներ. սելավներից տուժեցին Երևանի, Գեղարքունիքի, Բոլորտվին վերջերս՝ 1995, 1996, 1997 թվականներին մի շարք բնակավայրեր և տասնյակ հարյուրավոր հեկտար ցանքատարածություններ: Ուշագրավ է, որ մի շարք տարածքներ, որոնք 50-ական, 60-ական թվականներին համարվում էին պոտենցիալ սելավաբեր, ներկայումս վերածվել են գործող սելավաբեր տարածքների: Սելավային երևույթների ոլորտն ընդարձակման որոշակի ու շեշտված տենդենց ունի:

Սելավագոյացումը բարդ պրոցես է: Այն ձևավորող գործոնները բաժանվում են երեք խմբի. ա) մակերևույթի տեղագրական հատկանիշներ, բ) երկրաբանագեոմորֆոլոգիական իրավիճակ՝ լեռնային ապարների մերկացումներ, դրանց եռանդուն հողմահարում և գ) ջրաօդերևութաբանական պայմաններ:

Ա) Սելավագոյացման համար անհրաժեշտ է լեռնային ռելիեֆ: Մեր մակերևույթի բարձրությունների տարբերությունը հասնում է ավելի քան 3700 մետրի: Թավեզների թիվը յուրաքանչյուր քառ. կմ.-ի վրա տատանվում է 30-50-ի, իսկ Գամբակի հովիտում, Գուգարաց, Մլափորի լեռներում, Վեդի, Արփա գետերի ավազաններում և

Զանգեզուրում մինչև 100-ի սահմաններում: Սելավային շիբահուսքերի համակենտրոնացման համար հովտագետային ցանցի պլանը նպաստավոր է:

Բ) ՀՀ տարածքի երկրաբանագեոմորֆոլոգիական պայմանները բազմազան են և նպաստավոր սելավի պինդ բաղադրիչի ձևավորման համար: Այստեղ մերկանում են բնորոշ նպաստավոր սելավի պինդ բաղադրիչի ձևավորման համար բոլոր երկրաբանական միջրեմերից մինչև ժամանակակից էտապն ընկած համարյա բոլոր երկրաբանական մասնակալաբանների տարասեռ ապարաշերտերը նստվածքային, նստվածքա-ժամանակալաբանների տարասեռ ապարաշերտերը նստվածքային, նստվածքա-ժամանակալաբանների տարասեռ ապարաշերտերի եռանդուն հողմահարում: Հետևաբար վրա ընթանում է տարասեռ ապարաշերտերի եռանդուն հողմահարում լեռնալանջերին և հողմահարման արգասիքների՝ փխրաբեկոր նյութերի կուտակում լեռնալանջերին և հովիտների ու ձորակների թավեզներում: Այսպիսով նախապատրաստվում է սելավագոյացման պրոցեսի պինդ փուլը:

Ձ.Ձորյանի (1) հետազոտություններում ՀՀ տարածքի գետնամերձ սոցի ջերմաստիճանների անոմալիան (ԳՕՋԱ), միջին տարեկան կտրվածքով . K գործակցի համար որոշվում է 0,4: Եվ ըստ այդ հեղինակի ջերմաստիճանի առավելագույն աճը 2100 համար որոշվում է 0,4: Եվ ըստ այդ հեղինակի ջերմաստիճանի բարձրացման թվականին ենթադրվում է 1,75° C -ի: Ակնհայտ է, որ ջերմաստիճանի բարձրացման տենդենցը, ինքնին նշանակում է կլիմայի ցամաքայնության, հետևաբար լանդշաֆտների տենդենցը, ինքնին նշանակում է կլիմայի ցամաքայնության, սելավների ձևավորման: արդիացման մեծացում: Իսկ վերջինս հանգեցնում է "ազրեսիվ" սելավների ձևավորման:

Գ) Ջրաօդերևութաբանական գործոնները հողմահարման պրոցեսին մասնակցելու հետ միաժամանակ, որն առավել կարևոր է, ապահովում են սելավային զանգվածի հեղուկ փուլը:

Սելավագոյացումը երկրաբանագեոմորֆոլոգիական և ջրաօդերևութաբանական ազդակների փոխներգործության ինտեգրալ պրոցես է: Գետավազանը կարող է ունենալ սելավաբերության վիթխարի պոտենցիալ, սակայն նրանում առանց համապատասխան տեղատարափի չի կարող ձևավորվել սելավային հոսք, և ընդհակառակը: Սելավային հոսքի հաճախականությունը պայմանավորված է ինչպես երկրաբանագեոմորֆոլոգիական, այնպես և ջրաօդերևութաբանական բարենպաստ պայմանների գոգորդմամբ:

ՀՀ տարածքի սելավային երևույթների 75%-ը բաժին է ընկնում ընդարձակ բարձրություններին: Դրա պատճառներն են. ա) այդ բարձրությունների գրաված ընդարձակ մակերեսը, բ) ավելի բարձր մակարդակներից հոսքի համակենտրոնացումը այստեղ, գ) անթրոպոգեն ազդակի եռանդուն ներգործությունը բարձրությունների այդ գոտում:

Ժամանակի մեջ ՀՀ տարածքի սելավները թախշված են ապրիլից-սեպտեմբեր ժամանակահատվածում: Սելավների թվի առավելագույնը՝ 84%-ը բաժին է ընկնում մայիս-հուլիս ամիսներին:

1946-1994 թվականների վիճակագրական նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության տարածքում սելավային դեպքերի քանակը նվազման տենդենց է ունեցել:

Ա.Թորոսյանի (2) ուսումնասիրությունները հավաստում են, որ ՀՀ տարածքում առատ տեղումներով օրերի քանակը (25 մմ-ից ավելին՝ 12 ժամվա ընթացքում) ըստ տարիների նույնպես նվազում է:

Ստեղծված պայմաններում մենք անհրաժեշտ համարեցինք հետազոտ տեղատարափների ինտենսիվության դինամիկան: Արդյունքում ստացվեց, որ տիրասլետող տարվա ինտենսիվ տեղումներով օրերի թվի նվազումն է:

Մակայն ուշագրավ է և շատ կարևոր, որ առավելագույն տեղումների ինտենսիվության դինամիկան ունի աճման տենդենց:

ՀՀ տարածքում ջերմաստիճանը բարձրանում է, առատ տեղումներով օրերի թիվը (25 մմ-ից ավելի 12 ժամվա ընթացքում) նվազում է, տարվա առավելագույն ինտենսիվ տեղումներով օրերի թիվը պակասում է, դրան հակառակ առավելագույն տարափներ ինտենսիվությունը աճում է: Նշանակում է կարող ենք հավաստել, որ ՀՀ տարածքի կլիմայի ունի չորացման (արիդացման) ուղղություն:

Այո, արիդ և սեմիարիդ կլիմայական պայմաններ ունեցող երկրներում (Իրանական քարձրավանդակ, Արարական բերավազի, Աֆրիկայի հյուսիսային լեռնային շրջաններ, Մեծ Ավազան ասրահարթ և այլն) ջերմաստիճանը բարձր է, տեղումները՝ հազվադեպ, սակայն տեղատարափ (ինտենսիվ): Նման պայմաններում է, որ ձևավորվում են ուժեղ սելավներ ո կենդանացնում տարիներով չոր ուվադիներին (wadi):

Կլիմայի աստիճանական արիդացումը մեր հանրապետության տարածքում տակավին սկսվել է դարձնել առաջ, երբ անթրոպոգեն ազդակը այսօրվա պես հզոր չէր:

Մեր մի շարք լեռների (Շրամոսի, Ուրծի, Վայքի) հյուսիսային լանջերը մեկ-երկու հազարամյակ առաջ եղել են անտառածածկ, իսկ ներկայումս զրկված են դրանից: Անտառի զրկված լանդշաֆտները խոցվել են, ենթարկվել տեղատարման և պայմաններ ստեղծել են սելավների ձևավորման համար: Ակնհայտ է, որ սելավային երևույթների ոլորտը ընդարձակման հիմքը կլիմայի թեև դանդաղ, բայց հետևողական չորացումն է, գունարաւ ազդեցիկորեն հզորացող անթրոպոգեն գործոնը:

Բնածին և մարդածին ազդակների համատեղ ներգործությամբ բնական լանդշաֆտները տարբեր-տարբեր առավել խոցելի են դառնում, արիդացվում:

Արիդացումը տարբեր տարածաշրջաններում կամ նույն տարածաշրջանի տարբեր հատվածներում տեղի է ունենում ներգործող ազդակների տարբեր խմբերի ոչ միատեսակ եռանդով ու բնույթով:

Մեր հանրապետության տարածքը լեռնային է, բնությունները, ռելիեֆի էներգիան մեծ են, մերկացումները՝ շատ: Նման պայմաններում բնակչության միջին խտությունը կազմում է 127մարդ/քառ. կմ և դա այն դեպքում, երբ աշխարհի միջինը ավելի քան երեք անգամ պակաս է: Ակնհայտ է լանդշաֆտների անթրոպոգեն ծանրաբեռնվածությունը:

Հանրապետության լանդշաֆտների արիդացման ոլորտը աստիճանաբար ընդարձակվում է, նրանց խոցելիության բնույթն ու աստիճանը ավելի են ուժեղանում: Մրան համընթաց առաջանում են սելավային նոր օջախներ, ընդարձակվում են հենքը:

Մեզ մոտ մարդը իր տնտեսական գործունեությամբ՝ ջրանցքների, ճանապարհների, թունելների անցկացմամբ, լեռնահանքային արդյունաբերության, գյուղատնտեսական, երկրաբանահետախուզական և մնացած շատ աշխատանքներում անողակախորեն մեծացնում է լանդշաֆտների խոցելիության աստիճանը, նպաստում էրոզիայի, անգամ նրա ամենահավոր տեսակի՝ սելավների զարգացմանը:

Բնական (կլիմայի չորացումը) և անթրոպոգեն ազդակները գործում են նույն նշանի տակ, որը և, խիստ բացասաբար է անդրադառնում բնական լանդշաֆտների վրա:

Կլիմայի չորացումը, տեղատարափ անձրևների ինտենսիվության մեծացումը և բնական լանդշաֆտների անթրոպոգեն ծանրաբեռնվածության աճը ամուր երաշխիք են կանխատեսելու, որ սելավային երևույթները ՀՀ տարածքում պրոգրեսիվ կերպով աճում են:

Այս կանխատեսումը հաստատվում է նաև քարտեզագրման հետազոտություններով: Այսպես, դաշտային մանրակրկիտ աշխատանքներով (1:50000, իսկ տեղ-տեղ 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզների պահանջներին համապատասխան), վիճակագրական հյուսիսային մշակմամբ կազմել ենք հանրապետության տարածքի սելավաբերության և սելավահաճախականության 1950-ական և 1990-ական թվականների վիճակների քարտեզները, որոնց համադրումը ցույց է տալիս, որ ընդհանրապես 40-50 տարվա ընթացքում մի շարք մասերում պոտենցիալ սելավաբեր տեղամասեր՝ Ամասիայի գոգավորության սահմաններում, Գավառագետի ավազանում, Մարտունու շրջանի երանոս, Վարդաձոր, Չոլարսար գյուղերի շրջակայքում, Մասրիկ գետի վերին հոսանքի Վախակողմյան հատվածում, Արփա գետի վերնագավառում վերածնվել են գործող սելավաբեր տեղամասերի:

ՀՀ տարածքում սելավային երևույթների ոլորտի ընդարձակումը անմիջապես փաստ է: Հետևաբար սելավների դեմ պայքարի միջոցների ձեռնարկումը մեզ մոտ կենսական անհրաժեշտություն է: Պետք է հետևողականորեն կիրառել սելավների վնասագերծման ու կանխման կայուն քաղաքականություն:

Հանրապետության տարածքի լանդշաֆտների խոցելիության հետզհետե ահագնացող ընթացքը մեղմացնելու կամ կանխելու նպատակով, հույժ անհրաժեշտ է հակասելավային համալիր միջոցառումների ձեռնարկում:

Հանրապետության սելավային խոցելի տարածքների խոցելիության ավազաններում պետք է հարավանդների (բառածների) ստեղծում, սելավային հունների ուղղման, ավանդաբան, լանջերի ֆիտոմելիորացիոն աշխատանքների իրականացում, բոլոր տեսակի

Հայաստանի Գերագույն Կոլեգիան հաստատում է հետևյալ կարգի կառուցվածքը:

1. Կոլեգիան կազմավորվում է հետևյալ կազմակերպչական ստորաբաժաններով:

2. Կոլեգիայի նախագահը կազմակերպում է կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

3. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

4. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

5. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

6. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂԵԳԻԱ

ՄԱՍԻՍԻ ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂԵԳԻԱ

1. Հայաստանի Գերագույն Կոլեգիայի կառուցվածքը:
2. Կոլեգիայի նախագահը կազմակերպում է կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:
3. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:
4. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:
5. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:
6. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

Handwritten signature and date: 1975. 12. 22

1. Հայաստանի Գերագույն Կոլեգիայի կառուցվածքը:

2. Կոլեգիայի նախագահը կազմակերպում է կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

3. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

4. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

5. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

6. Կոլեգիայի անդամները կազմակերպում են կոլեգիայի աշխատանքը, օգնում է կոլեգիայի անդամներին կատարել իրենց պարտականությունները:

լեռնային վայրերը ծածկվել են սառցադաշտերով: Սակայն սառցադաշտերը չափերով փոքր լինելու պատճառով չեն անդրադարձել բուսականության վրա, ինչպես Եվրոպայի և Հյուսիսային

Ամերիկայի հյուսիսային մասերում, ուր գործել են մայրցամաքային ծածկոցային սառցադաշտերը: Անգամ, եթե սառցադաշտերը ազդել են ՀՀ տարածքի անտառների վրա, ապա միմիայն ջերմաստիճանը որոշ ծառատեսակներ են ոչնչացել կամ հարմարվել կլիմայական համեմատաբար ցուրտ պայմաններին:

Ետսառցադաշտային ժամանակաշրջանում Հայաստանի տարածքը ունեցել է տաք և չոր կլիմայական պայմաններ, իրեն բնորոշ բուսականությամբ: Մոտավորապես նման հարավային Եվրոպայի ցերեկային անտառային բուսականությանը:

Գ. Դ. Յարոչենկոն իր "Հայաստանի հաճարենու անտառները" (Երևան, 1962թ.) աշխատության մեջ գրում է - "անցյալի չոր կլիման խոնավ կլիմայի է փոխվում սկսած 300 տարի սրանից առաջ: Դեբեդ գետի վտակ Բաբաջանի հովտում անցյալում տարածված սոճու, կաղնու, բոխու անտառներն իրենց տեղը զիջել են ավելի խոնավասեր հաճարենու անտառներին": Եւ միաժամանակ նշում է, որ կաղնու սերմնային վերածը մոտ 200 տարի է ինչ համարայա դադարել է, որովհետև սերմերը ընկնելով բարձր խոնավության հողի մեջ անբավարար ջերմության պատճառով նեխում են:

Այսպիսով գալիս ենք այն եզրակացության, որ անշուշտ կլիման զգալի դեր է խաղում անտառների աճման ու զարգացման գործում, սակայն նա մի կողմից զարգացմանը:

գ) Մնում է միայն հավաստել, որ Հայաստանի անտառների սակավությունը, ոչ այնքան կլիմայի ներգործության արդյունք է, որքան մարդու գործունեության:

Հիշատակված հրաբխային և կլիմայական գործոնները անառարկելիորեն մասնակցել են Հայաստանի տարածքի անտառազրկմանը, սակայն այդ գործում ավելի մեծ է անբուսական ազդակի դերը: Մարդն իր տնտեսական գործունեությամբ

ուղղակի և անուղղակի ոչնչացրել է անտառային բուսականությունը, մասնավորապես անենտորակյալ երկարաբուն և հաստաբուն ծառատեսակները:

Եթե այժմ անտառները շատ տարածքներ են զբաղեցնում հյուսիսային, իսկ մասամբ էլ հարավային շրջաններում, ապա 200-300 տարի առաջ խիտ անտառներով ծածկված են եղել նաև Սևանի ավազանի հյուսիս-արևելյան լեռնալանջերը սկսած Ծովագյուղից մինչև փոքր Մազրա գյուղը: Փամբակ գետի վերին հոսանքը Վանաձորից մինչև Զաքուռի լեռնանցքը, Սիսիանի շրջանի զգալի մասը, Ձորագետի վերին հոսանքի ավազանը և այլն: Այդ շրջանների նախկինում անտառածածկ լինելու մասին են վկայում հողերի ուսումնասիրությունը, նյութական կուլտուրայի մնացուկները: Հիշատակվում է (Գ. Դ. Յարոչենկո, 1941թ.), որ միայն Սևանի ավազանում մինչև 1902թ. եղել է 7 հազար հեկտարից ավելի անտառ, որի շուրջ 4000 հեկտարը լճավազանի հյուսիս-արևելյան լեռնալանջերին:

Ուշագրավ է, որ Սևանի ավազանում կատարված պեդոլոգների ժամանակ հայտնաբերվել են անտառային կզաքիսի և կատվի կմախքներ, ինչպես նաև ազնիվ եղջերուի եղջյուրներ: Այս փաստերը վկայում են, որ անցյալում Սևանի ավազանի զգալի մասին բնորոշ է եղել անտառային ծածկույթը:

Հայկական լեռնաշխարհն եղել է մարդկության պատմության հնագույն օրրաններից մեկը, ուր մղվել են երկարամյա անընդմեջ պատերազմներ, որոնք ավերիչ ազդեցություն են գործել նաև երբեմնի տարածված խիտ անտառային բուսականության վրա:

Ռերարտական Սարդուր երկրորդ թագավորը (մ.թ.ա. 755-730թթ.) արշավելով Սևանի ավազան թողել է մի սեպագիր արձանագրություն, ուր նշվում է, որ նա գերի է տարել 38000 մարդ: Այստեղից իմացվում է, թե որքան խիտ է բնակեցված եղել Սևանի ավազանը: Բնականաբար այդ խիտ բնակչությունն իր տնտեսական կարիքները հոգալու համար չէր կարող բացասաբար չազդել անտառի վրա:

Անտառը տուժել է նաև արդյունաբերության զարգացման հետևանքով: Այս պարագայում ծախսվել է զգալի քանակության որակյալ անտառանյութ: Տակավին մեր թվարկությունից առաջ Հայաստանի տարածքում ծուլելիս են եղել պղինձ, թեև պղինձի ծուլումը եղել է շատ տարրական եղանակով, բայց ծուլման ընթացքում օգտագործվել է մեծ քանակությամբ փայտածուխ ու վառելիքայտ: Որպեսզի պարզ

լինի թե պղնձածուլական ձեռնարկություններն ինչքան մեծ վնասներ են հասցրել անտառներին, բերենք մի օրինակ 1763-1917թթ. Հայաստանում ծուլվել է մոտ 75000 տոննա պղինձ: Գործել են մինչև 20 ծուլարաններ, որոնցից 8-ը Լոռի-Փամբակի շրջանում, իսկ 12-ը Ջանգեզուրում: Մեկ տոննա պղինձ ծուլելու համար ծախսվել է 18 տոննա փայտածուխ, 10 խմ փայտ: Ընդ որում ամենաընտիր հաստաքուն հաճարենու, բոխու ծառերից է, որ փայտածուխ է ստացվում: Հենց սա է այն պատճառներից մեկը, որ ներկայումս Ջանգեզուրում հաճարենին իսպառ է բացակայում: Անտառները ոչնչացվել են նաև մարդու կենցաղային կարիքների համար: Ավելին բնակավայրերը հիմնադրելու համար մարդիկ համատարած ոչնչացրել են անտառներ և նրանց տեղում կառուցել գյուղեր, օրինակ Սևանի ավազանում Ծովագյուղը, Լոռվա մարզում Դեբեղ, Եղեգնուտ, Աթան, Անիծոր, Լորուտ, Շամուտ և այլ գյուղեր, որոնք ունեն միայն 120-150 տարվա պատմություն:

Անտառը տուժում է նաև անասունների անսխտեմ արածեցումից, հատկապես գարնանը, երբ նոր ծլած բույսերն անասուններն ուտում են կամ տրորում: Դրանով դադարում է անտառի սերմնային աճը:

Երկրագործությունը ևս վնասներ է հասցնում անտառին: Բավական է նշել, որ խոտհարքները և վարելահողային տարածքներն ընդարձակվում էին ի հաշիվ անտառների: Ձգալի անտառատարածքներ ոչնչացվել են անտառային հողեհներին, հատկապես աչնանը, երբ չոր տերևներով ծածկված է լինում անտառատակը:

Ահա մոտավորապես այսպիսիք են անտառային տարածքների կրճատման պատճառները:

Վերջին տասնամյակում կապված քաղաքական նոր իրադարձությունների պայմաններում առաջացած էներգետիկ ճգնաժամի հետ հանրապետության անտառները բուռն թափով հատվում են և օգտագործվում որպես վառելանյութ:

Անտառը, հատկապես մեր ցամաքային կլիմա ունեցող երկրի համար կարևոր խոնավակուտակիչ և դաշտապաշտպան նշանակություն ունեցող հարստություն է, որի համար պետք է պայքարեն ոչ միայն բնապահպան կազմակերպություններն այլև ամեն մի անհատ մարդ:

Պրակնություն
1. Г. А. Ярошенко "Буковые леса Армении" Ереван - 1962г.
2. П. А. Ярошенко "О причинах беслесья южной Армении" Изв. Арм. ФАН ССР, 2, 1941

ՀՀ ԷԼԵԿՏՐՈՒԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՈԼՈԳԱ-ԱՇԽԱՀՐԱՎՈՐՄԱՆ ԴԻՄԱՍԽՆԴԻՐՆԵՐԸ Ս.Ս Թորոսյան

Էլեկտրաէներգետիկան որպես մարդու տնտեսական գործունեության ոլորտ, սերտորեն կապված է էներգետիկ ռեսուրսների օգտագործման, տեխնիկական առաջընթացի և բնական միջավայրի պահպանման էկոլոգիական խնդիրների հետ: Յուրաքանչյուր երկրի սնունտության կայուն զարգացման առաջնային նախապայմանն էներգետիկ ռեսուրսներով ապահովածությունն է ճկուն էներգետիկ համակարգի առկայությունը:

Այն բոլոր երկրները /ԱՄՆ, Ճապոնիա, ԳՖՀ, Շվեդիա, Իսրայել և այլն/, որոնք ունեն բարձր զարգացում և սոցիալ-տնտեսական բարեկեցություն, առաջին հերթին պարտական են էներգետիկայի զարգացման ճկուն ռազմավարությանը:

Այդ իմաստով Հայաստանը չունենալով սեփական էներգետիկ ուսմունք, այն ձևակերպել և զարգացել է, ընթացիկ խնդիրների լուծման պահանջով:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ՀՀ ներկա տարածքում գործում էին 13 /9-ը ՀԷԿ, 4 ջերմային/ էլեկտրակայան, 3165 կվտ ընդհանուր կարողությամբ, որանցից միայն Ալավերույու և Ջանգեզուրի պղնձի հանքավայրերին սպասարկող Ալավերույու և Ջրախորի հիդրոէլեկտրակայանները կարող էին համարվել ինժեներական կառույցներ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ էլեկտրակայանների մեծ մասը դադարել էին գործելուց: Միայն 1921-1932թ.թ. հնարավոր սահմաններում վերականգնվեցին նախկին էլեկտրակայաններից 3-ը, կառուցվեց 4 նոր /Երևանի թիվ 1 և 2 Լենինականի և Չորագետի/ ՀԷԿ-երը 36,3 հազար կվտ ընդհանուր կարողության, դերիվացիոն ջրանցքների և թունելների 9,1 կմ երկարությամբ:

Այդ շրջանի էլեկտրակայանները թե զբաղեցրած տարածքով, թե շինարարական հողային աշխատանքների ծավալով, գետի ազատ հոսքի էներգիայի անմիջական /բացառությամբ Չորագետի ՀԷԿ-ի. որը ուներ ջրապարզեցուցիչ և ճնշումային ոչ մեծ ջրամբար/ օգտագործումը էկոլոգիական ազդեցություն չեն ունեցել:

1932-ին Չորագետի ՀԷԿ-ի շահագործումից հետո ձեռնամուխ եղան Սևանա լճի դա-

րավոր պաշարների օգտագործմանը: Լճի դարավոր պաշարները, ըստ նախագծի պետք է իրականացվեր 2 փուլով:

Առաջին փուլում նախատեսվում էր 50 տարվա ընթացքում լճի մակարդակը իջեցնել 50 մ-ով:

Սևան-Հրազդան կասկադի նախագծողները ելնում էին հետևյալից: Լճի մակարդակը 1933թ. 1916 մ-ից 13-14 տարվա ընթացքում իջեցնել 50 մ-ով, համապատասխանաբար

58,8 մլրդ մ³ պաշարներից բաց թողնել 21 մլրդ մ³, 1416 կմ² մակերեսը նվազեցնել մինչև 1254 կմ²:

Լճի այդպիսի փոքրացումը, ըստ նախագծողների պետք է ապահովեր 1212 մլն մ³ գոլորշիացման նվազեցումը մինչև 215 մլն մ³-ի, որի հաշվին Հրազդան գետի տարեկան ազատ հոսքը կկազմեր 697 մլն մ³: Նախագիծը պետք է իրականացվեր 15 տարում: Սակայն Սևան-Հրազդան կասկադի շինարարությունը սկսվել էր 1933-ին ավարտվել 1952թ.: Կասկադի 6 էլեկտրակայաններից 4-ը վերագետնյա են 2-ը ստորգետնյա: Այդ էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը կազմում 550 հազար կվտ: Կասկադի էլեկտրակայանները, ենթակայանները, դերիվացիոն ջրանցքները, թու-

նելները և օժանդակ ենթակառուցվածքները գրադեցնում են ընդամենը 40,1 հա տարածք:

Սևան-Հրազդան կասկադի բնական միջավայրին հասցված առավել մեծ վնասը լճի մակարդակի իջեցումն է: 1933թ. մինչև 1998թ. լճի մակարդակը իջել է 19,22 մ, լճի դարավոր պաշարներից օգտագործվել 30 մլրդ մ³:

50-ական բվականների սկզբներին պարզ դարձավ բացթողումների, արդյունքը մեծ Սևանի իջեցումից առաջացած ճահիճները ավելի շատ ջուր էին գոլորշիացնում քան լճի մակերևույթը: Լճից ազատված տարածքը, ըստ նախագծի պետք է օգտագործվեր գյուղատնտեսության նպատակներով: Նախագծի հեղինակները հաշվի էին առել այն հանգամանքը, որ լիճը նահանջելիս իր հետ տանում է ջրի տակի մանրահատիկ տիղմը, տեղը թողնելով բուսականության համար քիչ պիտանի խոշորահատիկ ավազուտներ: Մինչև մակարդակի իջնելը, Սևանա լիճը տիպիկ օլիգոտրոֆ ջրավազան էր, որտեղ կենսաբանական պրոցեսները շատ դանդաղ էին ընթանում, որը նպաստավոր է իշխանի զարգացման համար: Սակարդակի իջեցումից

հետո մեծ Սևանի հատակի ջերմային ու լուսաէկորման պայմանները փոխվելու հետևանքով սկսեցին աճել ջրիմուռներ, որոնք ծածկեցին լիճը, իսկ դա խիստ բացասաբար անբաղաձաժ բախտակի ձմեռային բազմացմանը: Բախտակը ձվադրությունը կատարում է ափամերձ շրջանում /3-5 մ խորություններում/: Այդ ամենի հետ 50-ական բվականների վերջին պարզվեց նաև, որ Սևանի էներգիան այլևս չի կարող ապահովել հանրապետության տնտեսական զարգացումը:

Սևանա լճի ջրային պաշարների խնայելու նպատակով 1958թ. որոշում ընդունվեց հանրապետությունում ջերմակլեկտրակայանների կառուցման, 1961-ին Արփա գետի ջրերի մի մասը /տարեկան 250 մլն մ³/, Սևանա լիճ տեղափոխելու մասին: Այնուհետև լճի մակարդակը 6 մ բարձրացնելու նպատակով որոշվեց նաև Որոտանի ջրերից տարեկան 90 մլն մ³ նույնպես տեղափոխել Սևանա լիճ, այդ նպատակով համար շարունակվում է Որոտանի վերին հոսանքից մինչև Կեչուտի ջրամբարը 20 կմ երկարության բունելի շինարարության աշխատանքները:

Սևան-Հրազդան կասկադի շինարարության ավարտից հետո Արփա-Սևան ջրատարի աշխատանքներին զուգընթաց, ջրատեխնիկական շինարարական աշխատանքների էստաֆետը տեղափոխվեց հարավային Հայաստան Որոտանի կասկադի շինարարության համար: Որոտանի կասկադի շինարարությունը իրենից ներկայացնում էր բացառիկ մեծ դժվարության ջրաշինարարական կառուցվածքների համակարգ:

Հիդրոտեխնիկական կառույցը գուրկ լինելով բնական ջրամբարներից, կասկադը պահանջում էր ստեղծել արհեստական ջրամբարների /Սպանդարյանի, Շամբի, Տոլորսի/ համակարգ 100-120 մ բարձրությամբ պատվարների կառուցմամբ: Բացի դրանից Որոտանի կասկադի 3 էլեկտրակայանների դերիվացիան անցնում է բունելներով և բարդ տեխնիկական կառուցվածքներով: Այդ ամենով պայմանավորվել է շինարարական աշխատանքների մեծ ծավալը:

Որոտանի կասկադի 3 էլեկտրակայանների / Սպանդարյանի 80 հազ. կվտ, Շամբի 171 հազ. կվտ, Տաթևի 157 հազ. կվտ/, շենքերի, դերիվացիաների, ենթակայանների, ջրամբարների ենթակառուցվածքների տակ զբղեցրել են 174 հա: Որոտանի կասկադի հասցրած էկոլոգիական վնասը մեծ չի: Այն այդ տարածքի կենսաբանական և բնական լանդշաֆտներում ընթացող պրոցեսների տարբերությունն է, որը չնչին մեծության է: Համաձայն ՀՍՍՀ կառավարության 1958թ. էներգետիկայի զարգացման վերաբերիալ

ընդունված որոշման, 60-ական թվականների սկզբներից սկսվեց ջերմաէլեկտրակայանների շինարարությունը: 1962 թվից մինչև 1970թ. ներմուծվող բնական գազի և մագուրի բազայի վրա կառուցվեց 3 ջերմաէլեկտրակայան:

Ջերմաէլեկտրակայանների առաջնելը Երջանի ՁԷԿ-ն է /560 հազ. կվտ/, դրան հաջորդեց Հրազդանի /1100 հազ. կվտ/, ապա Վանաձորի /4հիլովական / 100 հազ. կվտ կարողության էլեկտրակայանների գործարկումը:

Ջերմաէլեկտրակայանների շինարարական ծավալները, օգտագործած տարածքները, ջրաէներգետիկ կառույցների մասշտաբների համեմատությամբ մեծ են: Երեք էլեկտրակայանների զբաղեցրած ընդհանուր տարածքը կազմում է 370 հա: Այդ իմաստով բնական լանդշաֆտների խաթարման գործում դրանց դերը ավելին է: Ջերմաէլեկտրակայանների ազդեցությունը շատ ավելի մեծ է օդային ավազամի գազային և ջերմային աղտոտումներով:

Հանրապետության ջերմային էլեկտրակայաններում որպես հիմնական վառելանյութ բնական գազն է, պահեստայինը՝ մագուրը: Ջերմաէլեկտրակայանների տեխնիկական հնարավորությունների համաձայն օգտագործվող վառելիքի 40-43% վերափոխվում է էլեկտրական էներգիայի, մնացածը տարբեր ձևերով արտանետվում, աղտոտում է շրջակա միջավայրը:

Հանրապետության ջերմակայանները մթնոլորտ են արտանետում ածխածնի օքսիդ, ածխաթթու գազ, ծծմբային անհիդրիդ, ազոտի օքսիդ, ֆտորային միացություններ և այլն:

Վառելանյութի թերայրման, տեխնիկական և այլ պատճառներով միայն Երևան ՁԷԿ-ը 1996թ. /665 մլն կվտ.ժ էլեկտրական էներգիայի արտադրության համար այրել է 311588 մլն մ³ բնական գազ, 16230 տ. մագուր/ մթնոլորտ է արտանետել՝ 13,405 տ. կոչտ, 1711,334 տ հեղուկ և գազանման, 313,341 տ ծծմբային անհիդրիդ, 1398,053 տ ազոտի օքսիդ, 2,182 տ վանադիումի օքսիդ և այլ աղտոտիչ նյութեր: Փոխարենը յուրաքանչյուր 1 տ պայմանական վառելիքի այրման համար մթնոլորտից վերցվել է 2,3 տ թթվածին: Արտանետումների մեծությունը, մեր կարծիքով առաջին հերթին պայմանավորված է էլեկտրակայանների սարքավորումների մաշվածությամբ, աշխատանքային ռեժիմի անկայունությամբ, վառելանյութի և գազորսիչի սարքավորումների որակով:

Ջերմային էլեկտրակայանների գազային արտանետումները իրենց հետ մթնոլորտ են տանում նաև մեծ քանակությամբ ջերմություն: Ջերմակայանների ծխնելույզներից հեռացվող գազերը ունեն 120-130°C: Ջերմաէլեկտրակայաններից անօգուտ հեռացվող ջերմության 50% հեռացվում է հովոցման սարքավորումների միջոցով: Հանրապետության էլեկտրակայանների հովացումը կատարվում է փակ հակադարձ համակարգով, արդյունքում օդի միջին ջերմաստիճանը հարակից շրջաններից 10-ից 15°C բարձր է:

1970-ականների սկզբներին պարզ դարձավ, որ հանրապետության տնտեսության հետագա զարգացումը, գործող ջրա և ջերմաէլեկտրակայանների կարողություններով հնարավոր չէ: Հանրապետությունում էներգետիկ նոր, ատոմային կարողությունների տեղակայման որոշիչ դերը մի կողմից նախկին ԽՍՄՄ Եվրոպական մասի էներգետիկ լարվածությունն էր, մյուս կողմից Այսրկովկասյան տրանսպորտային համակարգի գերծանրաբեռնվածությունը:

Հայկական ատոմակայանի շինարարությունը սկսվել է ավարտվել է 1972-1976թթ...: Կայանի շինարարության համար պահանջվել է 130 հա: Ատոմակայանի 2 բլոկների տեղակայված հզորությունը 816 հազար կվտ է: Լրիվ կարողությամբ աշխատելու ժամանակ այն տարեկան արտադրել է ավելի քան 5 մլրդ կվտ.ժ էլեկտրաէներգիա, ոչը հավասարազոր է 1,7 մլն տ. պլ:

Ատոմակայանի շահագործման 12-րդ տարում Ապիտակի երկրաշարժը իհայտ բերեց կայանի նախագծային, շինարարական և շահագործման թերությունները, որ հղի էր էկոլոգիական վտանգով: Այդ պատճառով 1989թ. կառավարության որոշմամբ դադարեցվեց կայանի աշխատանքը: Սակայն 1990-1994թթ.. էներգետիկ խոր ճգնաժամի հրամայականով, հակաերկրաշարժային և էկոլոգիական անվտանգության ապահովման ուղղությամբ աշխատանքներ կատարելուց հետո 1995թ. կայանի մի բլոկը /408 հազ. կվտ/ վերագործարկվեց:

Համաձայն ատոմային կայանների շահագործման հրահանգների, էլեկտրակայանում առաջացած վթարային իրավիճակների էկոլոգիական ազդեցությունը տարածվելու է կայանի սանիտարական զոնայում:

Ատոմակայանի նորմալ աշխատանքային ռեժիմի ապահովման դեպքում էկոլոգիական ռիսկը չի գերազանցում 10%/տարի: Հակառակ դեպքում էկոլոգիական չափանիշ կարող է լինել «Չերնոբիլը»:

Ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքով շրջակա միջավայր են արտանետվում 131 աերոզոլային միացություններ, ռադիոակտիվ իներտ գազեր և այլ ռադիոնուկլիդներ: Ատոմային էլեկտրակայանի նորմալ աշխատանքային ռեժիմի պայմաններում չնչին քանակության արտանետումներ են սփռվում շրջակա միջավայր, որը պրակտիկ ազդեցություն չի ունենում կենսաբազմազանության վրա, բացառությամբ ռադիոակտիվ իներտ գազերի, որոնց իոնացումից հազարամյակների ընթացքում աստիճանաբար փոխում են օդի թափանցելիությունը, վերջինս կարող է պատճառ հանդիսանալ կլիմայի փոփոխման: Հարկ է նշել, որ այդ խնդիրը դեռևս աշխարհի ոչ մի երկրում լուծված չի: Հայկական ատոմակայանի էկոլոգիական ազդեցության ռիսկը մեծ է միջուկային վառելանյութի տեղափոխությունների և բաղման ընթացքում:

Հանրապետության էներգետիկ կառույցների կենսաբազմազանության ազդեցության հաջորդ օղակը բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը և ենթակայաններն են: Բարձրավոլտ գծերի շահագործման տեխնիկական պահանջների համաձայն 110 և ավելի լարվածության գծերի երկայնքով հենասյան բարձրության և ծայրամասերից 3 մ աջ և ձախ ընկած տարածքը օտարեցվում է այլ նպատակներով օգտագործվելու: Բացի օտարացված տարածքից էլեկտրահաղորդման գծերի շինարարության և շահագործման համար /ելնելով տեղանքի պայմաններից/ պահանջվում է կառուցել մոտեցման ճանապարհներ:

Այդ պահանջների համաձայն, հանրապետության 110 հազ. կվ լարման /1700 կմ/ և 220 հազ. կվ լարման /1200 կմ/ գծերի համար օտարացվել է ավելի քան 5000 հա: Բարձր լարման /110-220 հազ կվ/ 30 ենթակայանների տակ զբաղեցվել է 145 հա:

Հարցի հետազոտությունը մեզ հանգեցրել է հետևյալ եզրակացությանը: Հայաստանի էլեկտրաէներգետիկայի անցած 90-ամյա ուղին, ֆունդամենտալ փոփոխություններով, տեղաբաշխման և էլեկտրական ազդեցության առանձնահատկություններով կարելի է առանձնացնել 5 շրջանի:

Առաջինին շրջանը սկսվում է 20-րդ դարի առաջին տասնամյակից և ավարտվում է 1932թ.: Այն կարելի է համարել որպես էներգետիկայի ձևավորման սաղմնային փուլ: Շրջակա միջավայրի վրա առանց եական ազդեցության:

Երկրորդ շրջանը ներառում է 1932-ից մինչև 1962թ. ընկած հատվածը: Այն համընկնում է Սևանա լճի դարավոր պաշարների օգտագործման, «մեծ

էներգետիկայի» անցման, Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության խախտման տագնապալից շրջանի հետ:

Երրորդ շրջանը սկսվում է 1962-ին և ավարտվում 1970 թվականին: Այդ տարիներին հանրապետությունում սկիզբ է դրվում ջերմաէլեկտրաէներգետիկային և ծավալում միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի շինարարությանը: Մեծացավ էներգետիկ նպատակներով հողերի օգտագործումը, ավելացան օդային ավազանը աղտոտող նոր աղբյուրները:

Չորրորդ շրջանը ընդգրկում է 1971-1988թթ., այն հայտնի է ջրային և ջերմային էլեկտրակայանների հզորությունների ավելացման զուգընթաց, ատոմային էներգետիկայի անցման, էկոլոգիական ռիսկի մեծացման փուլը:

Հինգերորդ շրջանը նեառում է ետերկրաշարժյան ժամանակահատվածը: Այն առանձնանում է էներգետիկ լարվածության մեծացմամբ, գործող համակարգի թերությունների բացահայտմամբ, ազգային էներգետիկ ուսմունքի, էներգետիկ և էկոլոգիական հավասարակշռության ապահովման ծրագրերի մշակման զուգորդմամբ:

Հայաստանի էներգետիկայի զարգացման բոլոր շրջանների ընդհանրությունը, առաջացած տնտեսական և էկոլոգիական դժվարությունների հաղթահարման համար պահանջվող խոշորամասշտաբ միջոցառումների իրագործման անհրաժեշտությունն է:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գ. Ե. ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆ

Հաշապահ-աուդիտոր մասնագիտության անհրաժեշտությունը առաջացել է շուկայական տնտեսավարման պայմաններում: Երբ բաժնետիրական ընկերությունների բաժնետերերը, ինվեստորները, կրեդիտավորող անձինք և կազմակերպությունները ինչպես նաև հարկային ծառայությունները ստիպված էին փնտրել և օգտագործել կողմնակի անկախ մասնագետներ, որոնք ի վիճակի լինեյին բարձր մասնագիտական մակարդակով ստուգել և բնութագրել տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքները և տալ օբյեկտիվ գնահատական նրա ֆինանսական վիճակի մասին:

Պարտադիր աուդիտի մասին օրենքներ ընդունված են Անգլիայում 1862թ. Ֆրանսիայում-1867թ. ԱՄՆ-ում-1937թ. Արևելյան Ասիայում և Եվրոպայում: Արևելյան Ասիայում և Եվրոպայում, որտեղ տնտեսավարումը հիմնականում իրականացվում է շուկայական հարաբերությունների պայմաններում: Հսկողության և ստուգման ֆունկցիաները կատարվում են անկախ աուդիտորների և աուդիտորական ծառայությունների միջոցով:

Օրինակ արևմտյան երկրներում կիրառվում է ֆինանսական վիճակի անկախ աուդիտորական ստուգման ձևը, որի նպատակն է ստուգել և հայտնել իրենց օբյեկտիվ կարծիքը և տալ եզրակացություն տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված տնտեսահաշվետվական տվյալների հավաստիության և հիմնավորվածության, ինչպես նաև դրանց օգտագործման պիտանելության մասին:

Ընդ որում անկախ աուդիտորական ստուգման և խորհրդատվական ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը առավել խիստ զգացվում է հատկապես տնտեսության զարգացման ճգնաժամային և անցումային ժամանակահատվածներում երբ տեղի է ունենում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընդհատումները, ձեռնարկությունների մեծ մասի

թերբեռնվածություն, մասայական սնանկացման դեպքեր, ֆինանսական ապահովածության լուրջ դժվարություններ և այլ անբարենպաստ պայմաններ տնտեսության զարգացման բոլոր ոլորտներում. ինչպես օրինակ համաշխարհային տնտեսական ճգնաժամի 1929-33թթ. ճակոհիայում 50-ական, 60-ական տարիներին, Հինաստանում 80-ական թվականներին և այլ երկրներում:

Եվ պատահական չէ, որ անկախ աուդիտորների և աուդիտորների գործունեության կայացումը և արմատավորումը Հայաստանի հանրապետությունում նույնպես համընկնում է շուկայական տնտեսավարման հարաբերությունների իրականացման ժամանակահատվածի հետ 1990թ. սկսած:

Անկախ աուդիտորական ստուգման և տնտեսավարման բազմաթիվ հարցերի շուրջ խորհրդատվական ծառայության մատուցման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ երևույթներով ինչպիսիք են տնտեսատեղեկատվական ինֆորմացիա պարունակող հաշվետվությունները պատրաստող վարչակազմի և այդ ինֆորմացիան օգտագործող բաժնետերերի, ինվեստորների, վարկեր և կրեդիտորներ տրամադրողների, և այլ շահագրգիռ անձանց հետաքրքրությունների մեջ առկա անհամապատասխանությունները օգտագործման ենթակա ինֆորմացիայի գնահատման և օբյեկտիվության վերաբերյալ:

- Ոչ օբյեկտիվ ինֆորմացիայի հիման վրա ընդունված տնտեսավարական որոշումները հետ կապված անցանկալի բացասական հետևանքներից խուսափելու անհրաժեշտությունը:

- Ինֆորմացիայի հավաստիության գնահատման գործընթացում պահանջվող մասնագիտական բազմակողմանի գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը, որոնցով հաճախ հագեցված չեն նշված ինֆորմացիան օգտագործողները:

- Տնտեսահաշվետվական նյութերի և տվյալների լրիվության, օբյեկտիվության, հավաստիության և ընդհանրապես դրանց որակական մակարդակի գնահատման համար պահանջվող ժամանակի բացակայությունը դրանց օգտագործողների մոտ:

Ստեղծված դժվարությունների հաղթահարման գործում էականորեն նպաստում է աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, որոնց միջոցով տնտեսահաշվետվական ինֆորմացիա օգտագործող անձանց և կազմակերպություններին հայտնվում է նշված ինֆորմացիայի վերաբերյալ անկախ մասնագետների անկողմնակալ և օբյեկտիվ

կարծիքը, ընդ որում աուդիտորները այդ աշխատանքը կարող են կատարել բարձր մակարդակով, քանի որ դրա իրականացման համար նրանք ունեն անհրաժեշտ որակավորում և բազմաձյա աշխատանքային փորձ:

Շուկայական հարաբերությունների արձատավորմանը զուգընթաց մեր հանրապետությունում տարեց-տարի ընդլայնվում է նաև աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակները:

Բացի հաշվառական հաշվառման վարման դրվածքի ստուգման, հաշվետվական տվյալների հավաստության գնահատման և այլ տրադիցիոն բնակավառների մասին կարծիքներ և խորհրդատվություններ մատուցելուց ներկայումս մեր հանրապետությունում որակավորված անհատ աուդիտորները և աուդիտորական կազմակերպությունները մատուցում են նաև բազմակողմանի խորհրդատվություններ հարկային պարտավորությունների հաշվարկների ճշտության և օբյեկտիվության մասին, ձեռնարկությունների գործունեության կառավարման դրվածքի բարելավման, ինֆորմացիայի մշակման և օգտագործման նորագույն տեխնոլոգիաների ներդրման, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ծախսերի հնարավոր տնտեսման, ծախսային նորմատիվային տնտեսության կատարելագործման, արտադրական պաշարների ձեռք բերման, պահպանման և օգտագործման դրվածքի բարելավման, գործնության տարբեր բնագավառների գծով պլանավորման և արտադրության զարգացման կանխատեսումների մշակման, մարկետինգի ներդրման և այլ անհրաժեշտ հարցերի գծով:

Աուդիտորական գործունեության կայացման գործընթացում զգալի ծավալի աշխատանք է իրականացվել հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից, հատկապես նշված բնագավառի գործունեության կազմակերպման և որակյալ աուդիտորների պատրաստման ու ատեստավորման բնագավառում:

Ներկայումս հանրապետությունում արդեն գործում են մոտ երեք տասնյակ աուդիտորական անկախ կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հանձնաժողովի կողմից ատեստավորված ավելի քան 80 համապատասխան որակավորում ունեցող աուդիտորներ: Վերը նշված կազմակերպություններից շատ-շատերը արդեն իսկ

ձեռնամուխ են եղել և իրենց ուժերին ներածին չափով պայմանագրային կարգով մատուցել և մատուցում են իրենց դիմող ձեռնարկություններին անհրաժեշտ աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ, որոնք նպաստել և նպաստում են շուկայական տնտեսավարման պայմաններում առաջացած տնտեսավարական և ֆինանսական դժվարությունների հաղթահարմանը:

Որպես կանոն աուդիտորական ծառայությունները և անհատ աուդիտորները իրենց գործունեության հիմնական խնդիրն են համարում օգնել ձեռնարկություններին և կազմակերպություններին ցանկացած տնտեսական գործունեություն իրագործել հանրապետությունում գործող օրենսդրական դաշտի շրջանակներում, թույլ չտալ խաղտումներ, խստիվ պահպանելով հարկային և այլ օրենսդրական ակտերով պահանջվող դրույքները, ֆինանսական-տնտեսական գործունեության կարգավորման հացերում. ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման բնագավառում օրենսդրական ակտերով ընդունված կանոնակարգի ամբերի իրականացումը, հաշվետվական ինֆորմացիայի հավաստիության, օբյեկտիվության և հիմնավորվածության ապահովումն ու բավարարումը ոչ միայն հարկային և պետական մարմինների այլ նաև սեփականատերերի, ինվեստորների, կրեդիտորների և այլ տնտեսական ինֆորմացիան օգտագործողների հարաճյուն պահանջարկը:

Աուդիտորական ծառայությունները պայմանագրային հիմունքներով խորհրդատվական ծառայություններ են մատուցում հաշվապահական հաշվառման վարման դրվածքի կատարելագործման ուղղությամբ:

Ֆինանսական վիճակի առողջացման շահույթաբերության բարձրացման և գործունեության կարիքների համար օգտագործվող ռեսուրսների արդյունավետության բարձրացման ինչպես նաև կորուստների և անտեղի ծախսերի կրճատման գծով:

Ի վերջո հարկ ենք համարում նշել, որ չնայած անկախ աուդիտորական գործունեությունը համեմատաբար երիտասարդ գործունեության բնագավառ է /ընդամենը մի քանի տարի/ կարողացել է որոշակի դրական և օգտակար աշխատանք կատարել և դրսևորել այդ գործունեության պիտանելիության բարձր մակարդակ և միաժամանակ ցավոք սրտի պետք է նշել, որ աուդիտորական կազմակերպություններից ու որակավորված անհատ աուդիտորներից շատերը գործում են ընդհատումներով և թերբեռնվածությամբ պատվերների բացակայության

**ԱՐԺԵՅՊԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅԱՆ
ԳՈՐԾԸՆՔԱՍԸ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Գ.Ս. ԳԱՐՎԵՅԱՆ, Գ.Գ. ԳԱՐՎԵՅԱՆ**

Արժեթղթերի շուկան Գայաստանի Գանրապետությունում գտնվում է ձևավորման և զարգացման սկզբնական ժամանակաշրջանում:

Այդ գործընթացում առաջ են եկել մի շարք հիմնախնդիրներ, առանց որի լուծման հնարավոր չէ արժեթղթերի շուկան կապիտալի ներդրման համար դարձնել արդյունավետ ոլորտ: Ի դեպ, եթե արժեթղթերի շուկան ինվեստիցիաների համար չվերածվի արդյունավետ ներդրման ոլորտի, դրանից ոչ միայն զգալիորեն կարող է հեղինակագրկվել նախկինում բաժնետիրական ընկերությունների ձևով իրականացված սեփականաշնորհումը, այլ նաև զգալի չափով խոչընդոտել այդ նույն ձևով հետագայում իրականացվելիք սեփականաշնորհման գործընթացը:

Նշենք, որ ներկայումս արժեթղթերի շուկան Գայաստանի Գանրապետությունում զգալիորեն հեղինակագրկված է: Մասնավորապես խոսքը վերաբերվում է սեփականաշնորհված ձեռնարկությունների նախկինում թողարկած բաժնետոմսերի գերակշռող մասին, քանի որ դրանց փաստացի գինը (կուրսը) անվանական արժեքից բավականին ցածր է: Սի շարք ձեռնարկությունների բաժնետոմսերի փաստացի գները ինչպես ցույց են տալիս Երևանի ֆոնդային բորսայի ամենօրյա գնանշման արդյունքները անվանականից ցածր են 25-30 անգամ: Այսպիսի վիճակը արժեթղթերի, մասնավորապես բաժնետոմսերի երկրորդային շուկայում, բացատրվում է մի շարք հանգամանքներով:

Նախ, ձեռնարկությունների սեփականաշնորհումը բաժնետիրական ընկերությունների ձևով և բաժնետոմսերի միջոցով Գայաստանի Գանրապետությունում իրականացվեց ոչ թե բնականոն հունով ու կարգով, այլ վարչական մեթոդներով, նախօրոք կազմած և ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված ծրագրով և արհեստականորեն արագացված ձևով: Բաժնետոմսերի թողարկման և իրացման միջոցով հիմնականում սեփականաշնորհվում էին այն ձեռնարկությունները, որոնք կամ վնասաբեր էին, կամ քիչ շահութաբեր: Այսինքն պետական մարմինները շտապեցին ազատվել վնասաբեր և քիչ շահութաբեր ձեռնարկությունների հոգսերից և սեփականաշնորհման ձևով դրանք չնչին

պատճառով այն դեպքում երբ իրականում հանրապետության տնտեսության զարգացման արդի պայմաններում անկախ աուդիտորների կողմից մատուցվող ծառայությունների և խորհրդատվությունների անհրաժեշտությունը առկա է բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների մոտ:

Դետևարար մեր կարծիքով անկախ աուդիտորական կազմակերպությունների և որակավորված անհատ աուդիտորների կարողությունների լիարժեք օգտագործումը ժամանակի հրամայական պահանջն է այդ հարցի լուծումը օգտակար կլինի հանրապետության տնտեսության վերականգման և առողջացման գործում:

արժեքներով հանձնեցին իշխանաձեռն անձանց: Ինչպես պարզվեց հետագա գործընթացը սեփականաշնորդված ձեռնարկությունների մեծ մասը իրենց թողարկած բաժնետոմսերի դիմաց ոչ մի լուծան դիվիդենտ չեն վճարել, պատճառաբանելով, որ վնասով են աշխատում: Կարող է որոշ դեպքերում այդպես է . բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս . որ սեփականաշնորհված ձեռնարկությունների թողարկած բաժնետոմսերի գերակշռող մասը վերահսկիչ ծրարի ձևով անցել է այդ ձեռնարկությունների, (որոնք արդեն բաժնետիրական ընկերություններ են) տնօրենների և փոխտնօրենների կամ էլ խոշոր կապիտալի տեր դարձած անձանց ձեռքը: Վերջիններս էլ ինչպես կամենում են այնպես էլ ցույց են տալիս իրենց ֆինանսական հաշվետվությունները: Նրանք բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկման են ներկայացնում ձեռնարկության փաստացի ֆինանսական վիճակը խեղաթյուրող տվյալներ, մանավանդ շահույթի ստացման և բաշխման գործում, շատ լավ իմանալով . որ բաժնետոմսերի վերահսկիչ ծրարին տիրելով նրանք յուրաքանչյուր պահի կարող են հարցի քվեարկության դեպքում լուծել իրենց օգտին: Ի դեպ պարտադիր չէ տիրել բաժնետոմսերի ընդհանուր քանակի 50 և ավել տոկոսին, որպեսզի դառնալ բաժնետոմսերի վերահսկիչ ծրարի տեր: Դրան կարելի է հասնել ավելի քիչ քանակի բաժնետոմսերով: Բանը նրանումն է, որ շատ հաճախ բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայանում են ոչ բոլոր բաժնետերերը, քանի որ քիչ բաժնետոմսեր ունեցողները այդ արժեթղթերի անշահավետության պատճառով դրանց հետ մեծ հույսեր չեն կապում և այդ իսկ պատճառով էլ շատ դեպքերում չեն մասնակիցների միջև և այստեղ կարելի է փաստորեն բաժնետոմսերի վերահսկիչ ծրարի տեր դառնալ և քվեարկությունը լուծել իր օգտին ավելի քիչ բաժնետոմսերի քանակով: Սեր պայմաններում, երբ չկա արժեթղթերի շուկայում գործող իրավական դաշտ և այդ իսկ պատճառով լիովին չեն պաշտպանվում արժեթղթերում ներդրողների շահերը և այլ օրյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով փոքր քանակության բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը, որոնք որպես կանոն իրարից անկախ են և շահերով քիչ են փոխկապակցված, չեն կարող բաժնետերերի ժողովում պաշտպանել իրենց շահերը, քանի որ նրանց առաջարկությունները և պահանջները քվեարկության արդյունքում չեն անցնում, հետևաբար հաշվի չեն առնվում: «Բաժնետիրական ընկերությունների մասին » ՀՀ օրենքում սահմանված է, որ փոքր բաժնետերերը

կարող են միավորվել և եթե արդյունքում նրանց բաժնետոմսերի քանակը գերազանցի տվյալ ձեռնարկության թողարկած ընդհանուր բաժնետոմսերի քանակի 5 տոկոսը կարող են իրենց ծախսերով անկախ աուդիտ հրավիրել ձեռնարկության ֆինանսական գործունեության վերլուծություն կատարելու և եզրակացություն անելու համար: Սակայն մեր պայմաններում հույսը դնել աուդիտորական կազմակերպությունների եզրակացությունների վրա իմաստ չունի և անօգուտ գործ է, քանի որ նախ այդ կազմակերպությունները իրենց եզրակացությունները կազմում են որպես կանոն ձեռնարկությունների փաստացի ղեկավարների շահերը հաշվի առնելով, և երկրորդ փոքր բաժնետերերը այդքան միջոցներ չունեն աուդիտորական կազմակերպություններին վճարելու: Նշված պատճառներով բաժնետերերը այդ կազմակերպություններին վճարելու: Նշված պատճառներով բաժնետերերը այդ կազմակերպության սովորաբար չեն օգտվում, իսկ վերահսկիչ ծրարի տերերը, որոնք իրավունքից սովորաբար չեն օգտվում, իսկ վերահսկիչ ծրարի տերերը, որոնք հիմնականում այդ նույն ձեռնարկությունների տնօրեններն են շահույթը քիչ ցույց հիմնականում այդ նույն ձեռնարկությունների տնօրեններն են շահույթը քիչ ցույց տալու համար ավելի հետևողական ձևով են շարունակում ուռճացնել իրենց ծախսերը որպեսզի բաժնետերերին դիվիդենտ չվճարեն: Այս ձևով նրանք անօրինական ճանապարհով տիրում են իրենց կողմից ղեկավարվող ձեռնարկությունների գույքին ու ունեցվածքին, թողարկվող արտադրանքին և վերջին հաշվով շահույթին: Այսպիսի ձեռնարկությունների ղեկավարները իրենց կողմից թողարկված բաժնետոմսերի հեղինակությունը քիչ է հետաքրքրում, քանի որ դրանք փաստորեն լրիվ արժեզրկված արժեթղթեր են: Նրանք կմտախոզվեին այդ բաժնետոմսերի մասին, եթե կարիք լիներ նորից բաժնետոմսերի թողարկման և իրացման միջոցով կապիտալ ներգրավել իրենց ձեռնարկություններում: Նշենք, որ օրենքով այդպիսի ձեռնարկություններին, որոնց նախկինում թողարկված բաժնետոմսերի կուրսը երկրորդական շուկայում խստիվ ցածր է, նոր սերիայի բաժնետոմսերի թողարկում չի թույլատրվում: Նշենք նաև այն, որ բնակչության զգալի մասը չկանխագուշակելով բաժնետոմսերի միջոցով սեփականաշնորհման նման գործընթացի շարժման կողմերը հավատացել է իրականացվող սեփականաշնորհմանը և իր սերտիֆիկատները մեր է դրել այդ գործում մտանալով ոչ մի օգուտ չբերող բավականին ցածր փաստացի գին ունեցող բաժնետոմսեր: Այս ձևով սեփականաշնորհման արդյունքում բնակչությունը իրեն խաբված է զգում: Նրա մոտ հավատը պետական կարևոր միջոցառման նկատմամբ բարձրացնելու նամար նպատակահարմար է ՀՀ պետական եկամուտների մախարարության և ֆինանսների մախարարության արժեթղթերի շուկայի

պետական մարմինների կողմից: Բոլոր դեպքերում այդ պահանջների ձևավորման մեջ առաջնությունը պատկանում է սպառողներին: Նրանց որոշիչ ազդեցությունը ապահովվում է ստանդարտների և տեխնիկական պայմանների մշակմանը մասնակցության երաշխավորված իրավունքով:

Կոշիկի որակի ձևավորման վրա սպառողների կողմից ներկայացվող պահանջները պայմանավորված են

- անատոմա-ֆիզիոլոգիական,
- շրջակա միջավայրի,
- անվտանգության,
- շահագործման,
- գեղագիտական,

և սոցիալ-տնտեսական նպատակահարմարության առանձնահատկություններով: Սպառողների անատոմա-ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված պահանջները ստորաբաժանվում են մարդաչափական, կենսամեխանիկական և առողջապահական ենթախմբերի: Սարդաչափական պահանջների թվին են պատկանում կոշիկի համապատասխանությունը և հարմարությունը սպառողների որոշակի խմբի ոտքի անատոմա-ֆիզիոլոգիական առանձնահատկություններին: Կոշիկը պետք է ունենա ընդգրկի հավասարաչափ և առավելագույնս օգտագործվելով հենման բնական տեղամասերը ապահովի նրա հարմար տեղադրումը: Կոշիկը չպետք է սեղմի ոտնաթափը, խախտի արյան և ավշային անոթները, առաջացնի ձևազեղումներ, տրոհվածություն ու կոշտուկներ: Կոշիկի կառուցվածքը ոտքի շարժման ժամանակ մկանների համար պետք է ապահովի առավելագույն ազատություն: Այն կարևոր նշանակություն ունի հատկապես ճանկական կոշիկի համար, որովհետև պետք է համապատասխանի երեխայի ոտնաթափի կառուցվածքին և չխախտի նրա բնական զարգացումը:

Կոշիկի արտադրության համար օգտագործվող նյութերը ցանկալի է, որ օժտված լինեն պլաստիկությամբ՝ որոշակի ներգործության դեպքում առանց շեղումների պահպանելով ոտնաթափի կառուցվածքը, իսկ կոշկերեսի նյութերը ունենան էլաստիկ հատկություն՝ ապահովելով հարմարվողականություն ոտքի չափսերի փոփոխության ցերեկային ուղիղ:

Կոշիկի որակին ներկայացվող կենսամեխանիկական պահանջների իմաստը նրա համապատասխանությունն է սպառողների ուժային, արագության և էներգետիկ առանձնահատկություններին: Նպատակահարմար է, որ կոշիկը ունենա նվազագույն մասսա: Կոշիկի մասսան շարժման ընթացքում զգալիորեն ազդում է մարդու հոգնածության վրա: Կոշկատակը պետք է օժտված լինի ամորտիզացիոն հատկությամբ, այսինքն՝ ծառայի որպես միջադիր ոտնաթափի և հենքի միջև: Որքան մեծ է կոշիկի ամորտիզացիոն հատկությունը, այնքան քիչ է ոտնաթափի վրա ծանրաբեռնման ժամանակ աստիճանը: Կոշիկի փնջային մասում անհրաժեշտ է ապահովել նորմալ ճկունություն, որը քիչ ջանք է պահանջում շարժման ընթացքում նրա կորացման համար:

Կոշիկի որակին ներկայացվող առողջապահական պահանջները հնարավորություն են տալիս նպաստել մարդու օրգանիզմի նորմալ կենսագործունեությունը՝ ապահովելով սպառողի ոտքերի շուրջը անհրաժեշտ միկրոկլիմա: Կոշիկը պետք է բավարարի ջերմապաշտպան, խոնավապաշտպան և խոնավափոխանակման պահանջներին: Արևմտաեվրոպական մասնագետների տվյալներով կոշիկի ներսի միկրոկլիմայի առավել նպաստավոր հարաբերական ցուցանիշներ են համարվում ջերմաստիճանը՝ 21-33°C, խոնավությունը՝ 60-73%, CO₂-ի պարունակությունը 0,8%:

Շրջակա միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված պահանջները բացատրվում են շրջապատող միջավայրի վնասակար ներգործությամբ և օժտված են որոշակի պաշտպանողական հատկություններով: Վնասակար ներգործությունները կարող են լինել՝ մեխանիկական (հատված), ֆիզիկական (ճառագայթում, ջերմաստիճան), քիմիական (գազեր, թթուներ) և կենսաբանական (խայթոցներ):

Սպառողի համար անվտանգության պահանջները կապված են ոչ օպտիմալ կառուցվածքով կոշիկի օգտագործման հետ, որոնք չեն բավարարում վերը նշված պայմանները: Գատկապես առողջապահական պահանջների անտեսումը մեծ վտանգ է ստեղծում սպառողի համար: Սինթետիկ նյութերից ափտադրված կոշիկի մեջ հաճախ կարող է ավելանալ CO₂-ի պարունակությունը, իսկ մարդու օրգանիզմում ստատիկ էլեկտրականության լիցքերը:

Կոշիկի շահագործման առանձնահատկություններով պայմանավորված պահանջներն են երկարակեցությունը, անխափանությունը, պահպանելիությունը, հարմարությունը և նորոգչապիտանիությունը: Կոշիկի երկարակեցությունը բնութագրվում է նրա ծառայության ժամանակամիջոցի տևողությամբ, անխափանությունը աշխատունակության պահպանությամբ, պահպանելիությունը շահագործման ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում որակական հատկությունների պահպանմամբ, հարմարությունը՝ թեթևությամբ ու պարզությամբ, իսկ նորոգչապիտանիությունը՝ կառուցվածքի որակով:

Կոշիկի գեղագիտական առանձնահատկություններով պայմանավորված պահանջները արտահայտում են նրա ուրվագիծը, գրավությունը արտաքին տեսքի հանդեպ, նրբագեղությունը, նորածությունը, ներքին հարդարանքը և այլն:

Կոշիկի սոցիալ-տնտեսական նպատակահարմարությամբ պայմանավորված պահանջները բխում են սպառողների տարբեր խմբերի օբյեկտիվ անհրաժեշտությունից և նրա արտադրության, վաճառահանման ու սպառման առանձնահատկություններից:

Կոշիկի ֆիրմաները արտադրանքի որակին ներկայացվող պահանջները ձևավորելիս նպատակահարմար կլինի, որ ղեկավարվեն սպառողների ընթացիկ և հեռանկարային պահանջներով, ապահովեն սահմանված ստանդարտների, ընդունված տեխնիկական պայմանների և կնքված պայմանագրերի պահանջները, ինչպես նաև կազմակերպեն արտադրատեսակի երաշխիքային և ետերաշխիքային ժամանակամիջոցում սպառողների ֆիրմային սպասարկումը:

Պետական մարմինները ձևավորում են արտադրանքի որակին ներկայացվող պարտադիր պահանջները, որոնք ապահովում են մարդու կյանքի և առողջության անվտանգությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և անվտանգության բարձր մակարդակը:

Արտադրանքի որակի առումով արտադրողները սպառողների հանդեպ պետք է մտահոգված լինեն իրենց պատասխանատվությամբ: Արևմտյան տնտեսագետները նման պատասխանատվության մասին մտահոգությունը անվանում են գործարարության «բարոյագիտություն»: Վաղ թե ուշ սպառողները ծանաչում են անպատասխանատու ֆիրմաներին և խզում իրենց կապերը նրանց հետ: Ի

հակադրություն դրան այն ֆիրմաները, որոնք լիարժեք կերպով հաշվի են առնում սպառողների պահանջները ունենում են շահույթ ստանալու մեծ հնարավորություն:

Արտադրանքի որակի ձևավորման գործընթացը ընդգրկում է կոշիկի կենսատևության բոլոր փուլերը նախագծային, արտադրական և սպառման: Այլ կերպ ասած արտադրանքի որակը ստեղծվում է նրա նախագծային, ապահովվում արտադրական և պահպանվում սպառման փուլում: Յուրաքանչյուր փուլ իր հերթին բաղկացած է մի շարք ենթափուլերից: Այսպես, նախագծային փուլը իր մեջ է ներառում տեխնիկական առաջադրանքի, նախագծային փաստաթղթերի մշակման և փորձնական նմուշի ստեղծման ենթափուլերը: Կոշիկի ֆիրմաներում նախագծային փուլի պատշաճ ուշադրություն այնքան էլ չի դարձվում: Այդ փուլում կատարված սխալները ուղղակիորեն ազդում են արտադրանքի որակի մակարդակի իջեցման վրա: Նախագծային և արտադրական փուլերում որակի մակարդակի կարգավորման հետ կապված հարցերը համեմատելի չեն: Այդ պատճառով անհրաժեշտ է խստացնել պահանջները նախագծի որակի մակարդակի նկատմամբ այն ենթարկելով հավաստագրման:

Արտադրանքի նախագծային փուլին հաջորդում է արտադրական փուլը, որտեղ նախագիծը գտնում է իր նյութական մարմնավորումը: Այստեղ հանդես են գալիս նյութական և աշխատանքային գործոնները, որոնցով մեծապես պայմանավորվում է արտադրանքի որակը: Արտադրանքի որակի մակարդակի ապահովման և արտադրական ողջ գործընթացի ընթացքում իր յուրահատուկ տեղն ունի որակի վերահսկողությունը: Պակաս կարևոր չէ նաև արտադրության տեխնոլոգիական մակարդակի ապահովումը:

Կոշիկի արդյունաբերության մեջ տեխնոլոգիական գործընթացը բաղկացած է մի քանի ենթափուլերից, որտեղ ձևավորվում են արտադրանքի հատկությունները: Յուրաքանչյուր ենթափուլում պահանջվող տեխնիկաներով և հատկություններով ստեղծվում են արտադրանքի որակի տարրերը: Ամեն մի գործողության կատարումը ավելի է մոտեցնում կոշիկի ձևավորվող հատկությունները պահանջվող մակարդակին: Արտադրանքի հատկությունները սերտորեն կապված են միմյանց հետ և կախված են իրարից: Որևէ մի հատկության փոփոխություն ուղեկցվում է ուրիշ հատկությունների փոփոխությամբ և շատ դեպքերում մի հատկության բարելավում կարող է բերել

**ՋԵՐԱԱՅԻՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՕՊՏԻՄԱԼ
ՌԵԺԻՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՇՎԻ ԱՈՒԾ ԱՇԽԱՏՈՂ**

ԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Ռ.Ռ. ՀՈՎԱԿԻՍՅԱՆ, Ն.Ն. ԿՈՒՌՈՅԱՆ

Ժամանակակից էներգահամակարգերի, մասնավորապես Հայկական էներգահամահամակարգի զարգացումը, կապված նոր, մեծ հզորության ատոմային և ջերմային հզոր ագրեգատների կիրարկման հետ, և բեռի գրաֆիկների հետագա նոսրացումը, էլեկտրակայանների օպտիմալ ռեժիմների ընտրման ժամանակ առաջ է գալիս աշխատող սարքավորումների կազմի հաշվառման անհրաժեշտություն: Սակայն քանի որ գործնականում շաբաթվա տարբեր օրերի ընթացքում (աշխատանքային, շաբաթ, կիրակի) բեռի գրաֆիկները, կախված սպառիչների աշխատանքային ռեժիմից, սկզբունքորեն տարբեր են, իսկ տարվա նույն սեզոնում տարբեր շաբաթների բեռի գրաֆիկները փոփոխվում են դանդաղ, ապա այդ պատճառով որպես էներգահամակարգի աշխատանքային ռեժիմի քննարկման ժամանակահատված ընտրված է շաբաթը:

Խնդրի դրվածքը: Դիտարկվում է կոնդենսացիոն և ատոմային էլեկտրակայաններից բաղկացած համակենտրոնացված էներգահամակարգ, որը ընդգրկվում է n քանակությամբ տարբեր տիպի ագրեգատներ: Անհարժեշտ է տրված շաբաթական բեռի գրաֆիկի դեպքում յուրաքանչյուր ժամի համար գտնել բեռի այնպիսի օպտիմալ բաշխում աշխատող ագրեգատների միջև, հաշվի առած նրանց կազմը և ագրեգատների թողարկման ծախսը, որ գումարային պայմանական վառելիքային ծախսը նշված ժամանակահատվածում լինի նվազագույնը: Այսպիսի դրվածքի դեպքում խնդիրը հանգեցվում է հետևյալ ֆունկցիոնալի նվազարկմանը՝

$$F = \sum_{i=1}^n B_i(P_i, \Phi, \Pi) \rightarrow \min, \quad (1)$$

պահպանելով հավասարակշռության հետևյալ պայմանը՝

$$\sum_{i=1}^n P_i = P_{\text{ե}}, \quad (2)$$

որտեղ B_i -ի-րդ ագրեգատի ($i=1, 2, \dots, n$) պայմանական վառելիքի ծախս է

և ժամվա ընթացքում ($t=1, 2, \dots, T$),

T - դիտարկվող ժամանակահատվածի տևողությունն է (շաբաթվա ժամերի քանակն է $T=168$),

P_i - i րդ ագրեգատի հզորությունն է t -րդ ժամում,

Φ - ագրեգատների հնարավոր վիճակներն են (կազմերը) t -րդ ժամում,

Π - ագրեգատների բողարկման ծախսերի գումարն է t -րդ ժամում,

$P_{\text{ե}}$ - համակարգի բեռի մեծությունն է t -րդ ժամում, հաշվի առած էլեկտրաէներգիայի հաստատուն կորուստները էԳ-ում (քանի որ քննարկվում է համակենտրոնացված էներգահամակարգ, կորուստները T ժամանակահատվածում ընդունվում են հաստատուն):

Որպես խնդրի լուծման մաթեմատիկական ապարատ ընդունվում է դինամիկ ծրագրավորման մեթոդը, որը հենվում է օպտիմալության հետևյալ սկզբունքից՝ օպտիմալ ռազմավարությունը օժտված է այն հատկությունով, որ ինչպիսին էլ լինի սկզբնական վիճակը և ընդունված սկզբնական լուծումը, հետագա լուծումները պետք է կազմեն օպտիմալ ռազմավարություն այն վիճակի նկատմամբ, որը ծագում է նախնական լուծման արդյունքում:

Օգտվելով օպտիմալության վերոհիշյալ սկզբունքից, (1) ֆունկցիոնալը, որը մեկ հավասարում է n անհայտով, և հաշվի առնելով (2) արտահայտությունը, այն ձևափոխում է n ռեկուրենտ հավասարումների, որոնցից յուրաքանչյուրը մեր դեպքում պարունակում է երկու փոխադարձ կապված անհայտներ ընթացիկ t ստադիայի (փուլի) համատեղ աշխատող ագրեգատների վիճակը Φ և համակարգի հզորության բաշխումը այդ վիճակին համապատասխանող աշխատող ագրեգատների միջև:

Դիտարկող T ժամանակահատվածում որպես ստադիաներ ընդունվում են շաբաթվա t ժամերը: Ընդ որում, որպես առաջին ստադիա ընդունվում է այն ժամը, որը հաջորդում է որևէ հայտնի Φ վիճակի: Այդպիսի վիճակ է համարվում համակարգի շաբաթվա բեռի գրաֆիկի այն ժամային հզորությունը, որի դեպքում բոլոր ագրեգատները աշխատում են Φ_{max} :

Ինչ վերաբերվում է Φ վիճակներին, ապա բոլոր t ժամերի համար այն գնահատվում է հետևյալ կերպ:

Համաձայն [1,2]-ի բոլոր ու ագրեգատները դասավորվում են ըստ տնտեսական նպատակահարմարության և նշվում է նրանց վիճակների հնարավոր փոփոխման դիապազոնը՝ Q_{min} - Q_{max} Այնուհետև յուրաքանչյուր ժամային փուլի համար ճշտվում են վերին՝ Q_{max} ու ստորին՝ Q_{min} սահմանները և հաշվարկները իրագործվում են բոլոր ստադիաների համար՝ սկսած 1-ին ստադիայից մինչև 168-րդը: Հետևելով դիսանմիկ ծրագրավորման օպտիմալության սկզբունքին և հաշվի առնելով յուրաքանչյուր ստադիայից մյուս ստադիա անցումից հետո որոշ ագրեգատների հնարավոր անջատումները և հետագա թողարկումները, ամեն է-րդ ստադիայում գումարային՝ F պայմանական վառելիքին ավելացվում են թողարկման Π վառելիքային ծախսերը և այլն: Հաշվարկային վերջնական արդյունքները ստացվում են <<հետ քայլով>> սկսած վերջին ստադիայից մինչև 1-ին ստադիա...

Կազմված է տվյալ խնդրի ավտորիթը, ծրագիրը՝ TURBO BASIC մեքենայական լեզվով և իրագործված հաշվիչ մեքենայի վրա: Ծրագիրը կարող է ընդգրկել ինչպես տարբեր բանակության և տիպի կոնդենսացիոն ագրեգատներ, այնպես էլ ատոմային էլեկտրակայաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бурвачян Г.А., Овакимян Р.Р. К выбору оптимального состава работающих агрегатов в электроэнергетических системах. Изв. АН СССР, Энергетика и транспорт, 1974, N
2. Бурвачян Г.А., Овакимян Р.Р. Усовершенствованный алгоритм выбора оптимального состава работающего оборудования в электроэнергетической системе. Изв. АН СССР, Энергетика и транспорт, 1982, N1, ст.11-16.

Բյուջեի կառուցվածքային բարեփոխումները: Ս. Ամիրխանյան

Բյուջետային կառուցվածքը իր պետական տերիտորիալ արտահայտությամբ բնութագրվում է առանձին տերիտորիալ-ադմինիստրատիվ միավորումների սահմաններում, բյուջետավորման պրոցեսների և հենց բյուջեների կազմակերպմամբ: Էկոնոմիկայի համար պետական վարչական տիպը բնութագրվում է նրա դերի պետական ներգործության մեծացմամբ, որով բաց է թողնվում նկատմամբ հսկողության ձգտումով, կամ իրացվում է ազգային եկամտի որոշ մասը: համապետական բյուջեի հողվածներով կամ իրացվում է ազգային եկամտի որոշ մասը: համապետական բյուջեի հողվածներով

Այսպես, ՀՀ էկոնոմիկայում մինչև 1991թ. ժախսերի 80%-ը: Շուկայական տիպի են բաշխվել բյուջետային մուտքերի ու ծախսերի մույնպես մեծ է, ինչպես և էկոնոմիկայում պետական բյուջեի ազդեցությունը մույնպես մեծ է, ինչպես և նշանակալի է տարածքային և տեղական բյուջեների դերը ֆինանսների շրջապատում: Բացի դրանից ֆինանսական հոսքերը ձևավորվում են ոչ այնքան իշխանությամբ պետական մարմինների կողմից բյուջետային կարգավորման մեթոդով, ինչքան ի դեմս իշխանության տեղական մարմինների, ասոցացիաների, անհատ ձեռներեցների, որպես տնտեսավարող սուբյեկտների, կամ ձևավորման մեթոդով, որը բնորոշ է ֆինանսական մուտքերի և այս դեպքում բյուջետային կարգավորումը իրականացվում է ֆինանսական մուտքերի և այս դեպքում բյուջետային կարգավորումը իրականացվում է ֆինանսական մուտքերի ձեռներեցների, որպես տնտեսավարող սուբյեկտների, սեփականատերերի, աշխատուժի, հիման վրա, այսինքն հիմնական միջոցների, յուրաքանչյուր ստորադաս բյուջե կապիտալի միջոցով: Իր բացառիկ կենտրոնացված կարգավիճակով, որը բնորոշ է դիրեկտիվ սկզբունքով բաշխվող էկոնոմիկային, յուրաքանչյուր ստորադաս բյուջեի ձևավորվում է որոշակի աստիճանով վերադաս բյուջեի աղբյուրներից: Այսպիսի մոտեցման պայմաններում սկզբնական շրջանում առաջանում է ձգտում վերցնել ուղղություն՝ կենտրոնացնել երկրի ամբողջ բյուջետային ֆինանսական ռեսուրսները և անհատական կենտրոնից նման կառուցվածքը հնարավորություն է ծախսերը

Չնական տեսանկյունից նման կառուցվածքը նկատման են ծախսերը մուտքեցնել տարբեր մակարդակների բյուջեների եկամուտներն ու ծախսերը միասնական կենտրոնի հետ առավելագույն կարգավորելով և հավասարակշռելով բյուջետային համակարգը ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային համակարգի նորմատիվ իրավական բազան կազմում է ՀՀ Սահմանադրությունը, «Բյուջետային համակարգի մասին», «Հարկերի մասին», «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին», «1998թ. «Պետական տուրքերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», ՀՀ ֆինանսների բյուջեի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ վարչապետի կարգադրությունները, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հրահանգչաժամ ու այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնք կարգավորում են բյուջետային հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության շատ օրենքներով, որոնք անմիջականորեն չեն ընդգրկվում հարկային և բյուջետային համակարգում օրինակ կրթության մասին օրենքը, սեփականության մասին օրենքը պարունակում են բազմաթիվ նորմեր, սահմանվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու պատասխանատվությունները տերիտորիալ միավորումների տարբեր մասշտաբների սոցիալ-կուլտուրական և ենթակառուցվածքային զարգացման խնդիրների լուծման գծով:

Ֆեդերատիվ պետությունները ունիտարներից տարբերվում են կառավարման մակարդակների միջև իրավունքների և ֆունկցիաների այն տարանջատումով, որոնք սահմանվում են սահմանադրությամբ: Ֆեդերատիվ պետությունում կենտրոնը հարկադրաբար ավելի մեծ ուշադրություն է դարձնում ռեզիդուսլ պահանջներին և առաջին հերթին հարկաբյուջետային և դարձնում ռեզիդուսլ պահանջներին և առաջին հերթին հարկաբյուջետային և դարձնում ռեզիդուսլ պահանջներին և առաջին հերթին հարկաբյուջետային և դարձնում ռեզիդուսլ պահանջներին:

Առավել տիպիկ ֆեդերատիվ պետությունների բվին է պատկանում Շվեյցարիան, որը երկար տարիների ընթացքում զբաղեցրել է բյուջետային եկամուտների վերաբաշխման և միջոցազուրկ տարբերությունների կրճատման հարցերում չեզոք դիրքորոշում, բայց վերջին 2 տասնամյակների ընթացքում քաղաքական իրադրությունը պահանջել է կենտրոնից առավել ուշադրություն դարձնելու ազգաբնակչության սոցիալական հարցերի վրա, որը և մասնավորապես բերեց վերաբաշխման ֆորմուլայի միջոցով ազգաբնակչության եկամուտների հավասարեցմանը:

Ավստրալիան, համաձայն սահմանադրության, ֆեդերատիվ պետություն է: Նահանգներին շատ հարցերում տրվում է ինքնուրույնություն, բայց հարկադրման ոլորտում գործում է միասնական համակարգ, որով կենտրոնական կառավարությանն են տրվում իրավասություններ էապես սահմանափակելով նահանգների իրավունքները: Արդյունքում կենտրոնը ստանում է ամբողջ հարկերի մինչև 80 տոկոսը, որը բույլ է տալիս իրեն պահպանելու խիստ վերահսկողություն պետական ծախսերի նկատմամբ: Եվ որոշակի պայմաններում սուբսիդիաների տրամադրման ճանապարհով իրականացվում է լայնամասշտաբ բյուջետային հավասարեցման քաղաքականություն, այն ուղղելով նահանգների ֆինանսական պահանջունքների բավարարմանը:

Կանադան համարվում է ապակենտրոնացված ֆեդերատիվ տիպի պետության բարձրագույն օրինակ, որտեղ տարածքային կառավարությունները ունեն լայն լիազորություններ եկամուտների ստացման և ծախսերի իրականացման ոլորտներում: Բացի այն միջոցներից, որոնք ստացվում են համայնքների մակարդակներում, քիչ եկամուտ ունեցող պրովինցիաները ստանում են հատկացումներ կենտրոնական իշխանություններից, մասնավորապես ունենալով համահարթեցնելու ֆինանսական հնարավորությունները: Ապակենտրոնացումը այս երկրներում քննության է առնվում որպես սոցիալական քաղաքականության կարևորագույն լծակ՝ տեղական կարիքների բավարարման առումով:

Սուբսիդիաների համակարգի զարգացումը թույլ է տալիս համայնքներին ունենալու եկամուտներ, որոնք բավականացնում են միևնույն հարկադրման մակարդակների պայմաններում պետական միևնույն հարկադրման մակարդակի ապահովման համար: Ժառանգությունների համանման

Զնդկաստանը իրենից ներկայացնում է հետաքրքիր օրինակ, որտեղ ուժեղ կենտրոնացված ֆեդերատիվ պետությունը օգտագործում է բազմաբնույթ միջոցներ միջոցազուրկ տարբերությունների կրճատման պրոբլեմների լուծման համար: Գամանայն երկրի սահմանադրության, կենտրոնական կառավարությունը պատասխանատու է լայնամասշտաբ հարկային բազայի համար: Նահանգների իրավասության մեջ են գտնվում միայն գյուղատնտեսության հարկերը, շրջանառության հարկը (սպիրտային խմիչքների համար), մասնագիտական եկամտահարկը, տրանսպորտային միջոցների նկատմամբ սահմանվող հարկերը, Այստեղ ծախսային ֆունկցիաները նույնպես հատակ բաշխված են: Կենտրոնի առավել կարևոր ծախսային ֆունկցիաներն են պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, արտաքին առևտուր, երկաթգիծ, արդյունաբերության տարբեր մյուլդեր, վայրուտա, կապիտալիզմի և այլն: Նահանգի կառավարությունը պատասխանատու է հասարակական կարգի, դատարանների, ոստիկանության, ենթագետիկայի, կրթության, առողջապահության, ընտանիքի պլանավորման, բախտների վերածշակման, անտառային տնտեսության և այլնի համար: Այդ իսկ

պատճառով բյուջետային հավասարակշռվածության պլորեմը լուծվում է կենտրոնի բյուջետային ֆինանսական ռեսուրսներից նահանգներին հատկացումների համակարգի զարգացման (անհատույց, պլանային, հատուկ և այլն) և սուբսիդիաների օգնությամբ, որոնք սահմանվում են ինչպես ընդհանուր ֆորմուլաների հիման վրա, այնպես էլ հատուկ հիմքերի վրա:

Նիգերիան նույնպես համարվում է ապակենտրոնացված ֆեդերատիվ պետություն: Նիգերիայում հարկերի մեծամասնությունը գանձվում է կենտրոնական կառավարության կողմից, բացառություն են կազմում նահանգների կողմից գանձվող և իրենց տրամադրության տակ գտնվող անձնական եկամտահարկը: Ստացված բյուջետային եկամուտների 48.5 տոկոսը մնում է ֆեդերատիվ կառավարության տրամադրության տակ, 24 տոկոսը մուտք է լինում նահանգներ, 20 տոկոսը փոխանցվում է տեղական մարմիններին և 7 տոկոսը առանձնացվում է էկոլոգիական ֆոնդին: Բյուջետային միջոցները բաշխվում են հետևյալ սկզբունքներով՝ 10 տոկոսը ստարածքին՝ համապատասխան, 30 տոկոսը ազգաբնակչության թվաքանակին՝ համապատասխան, 10 տոկոսը որպես ներքին եկամուտներ, 50 տոկոսը բաշխվում է բոլոր նահանգների միջև՝ հավասարության հիմքով:

Բաշխման ֆորմուլայի հստակ առկայությունը բացատրվում է սոցիալական քաղաքականության և այլ ճնշումներից բյուջետային պրոցեսների ազատելու ձգտումով: Չնայած գործնական կյանքում այդ նպատակին հասնելը երբեք չի հաջողվել: Անբողջական ֆեդերալ կառուցվածք ունեցող պետություններին բնորոշ են այդպիսի բյուջետային փոխհարաբերություններ, որոնք իրականացվում են տեղական պայմաններից կախված, ընդ որում բազմաբնույթ մեթոդների օգնությամբ: Բայց ժողովրդավարական պետություններում տարածքային քաղաքականության հավասարեցումը հենվում է ազգաբնակչության այն պահանջների վրա, որոնք արտահայտվում են ժողովրդական ընտրյալների կողմից, իսկ ուրիշ այլ երկրներում դա սահմանվում է կենտրոնի՝ իրենց նպատակների հասկացությամբ, ստրատեգիական զարգացումով և միջոցների ծախսման պատասխանատվությամբ:

Ֆինանսական ապակենտրոնացումը, այսինքն՝ տեղական բյուջետային մուտքերը ընդգրկում են տեղական հարկերը, կենտրոնական հարկերից մասհանումները, կենտրոնական բյուջեից փոխանցումները, որոնցից գիտակցաբար հրաժարվել են կենտրոնական իշխանությունը և կառավարման մարմինները: Մենիշխան վերաբաշխումից և համապատասխան լիազորությունները ստորադաս կառույցներին փոխանցել բնորոշ է Նիգերիայի և Լիվիան օրինաչափ տեղեկները և արտահայտում է զարգացումը:

Ապակենտրոնացումը ինքնին օբյեկտիվ նորմալ երևույթ է և արտահայտում է տեղեկում առաջացող բազմաթիվ խնդիրների լուծումների իրական առավելությունները: Ապակենտրոնացումը պետության համալիր և կայուն զարգացման, իր առանձին մասերի հավասարազոր և ինքնուրույնության հիմնահատկանիշ է: Բյուջետա-հարկային հարաբերություններում հատուկ սրություն են ձեռք բերում ապակենտրոնացման հիմնահարցերը, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանի նոր պետական կառուցվածքի հետ, որը դեռևս հստակ պարզված չէ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի և նրա տարածքային սուբյեկտների բյուջետա-հարկային հարաբերությունների համակարգը կլինի գործող ոչ միայն այդ համակարգի պարզապես տեսական հիմնավորման և համաշխարհային լավագույն փորձի համապատասխանեցման պայմաններում, այլև երկրի բնակչության մեծամասնության և նրա տարածաշրջանների կողմից առաջ քաշվող ընդհանուր խնդիրների հետ կապված բարի ցանկությունների նկատմամբ: Այդպես ընդունելու պարտադիր նախադրյալներ են մի կողմից համակարգի միօրինակությունը, իսկ մյուս կողմից բացեիբաց գործելը:

Առաջինը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները պետք է իրենց տրամադրության տակ թողնեն հանրապետական հարկերի մի մասը, որոնք նախատեսված են միասնական նորմատիվներով:

Երկրորդը այն է, որ անհատական նորմատիվների փոփոխության և հանրապետական ու տարածքների մակարդակների միջև հարկաբյուջետային հարաբերություններում այլ ճշգրտումների դեպքում յուրաքանչյուր տարածաշրջանի համար պետք է հասկանալի լինի, թե ինչպիսի չափանիշներով և ինչպիսի ընթացակարգի համապատասխան պետք է այդ կոնկրետ տարբերությունները սահմանվեն: Դա բացարձակապես անհրաժեշտ է, քանի որ հակառակ պարագայում հաճախակի տատանումները հանրապետական մակարդակում կունենան բացասական հետևանքներ: Հայտնի է, որ մախկին տնտեսական համակարգից ժառանգվել է հանրապետական բյուջե հատկացվող հարկային նորմատիվների անհատականացման պրակտիկան, որպես ռեզիդուալ բյուջեների հավասարակշռման հիմնական մեթոդ: Եվ միայն հավասարակշռման բոլոր հնարավորությունների իրացման, նորմատիվների հաշվին կիրառման համար օգտագործում են դոտացիաներ և սուբսիդիաներ:

Բայց փոփոխվող իրավական և տնտեսական պայմաններում այդպիսի մոտեցումներն ունեն մի շարք բերություններ: Առաջինը, հարկային արտոնությունների անհատականությունը ստեղծում է բոլոր նշված տարածաշրջանների մոտ ճանապարհային զգացում: Նշենք, որ բոլորի մոտ, այդ թվում նրանց, ովքեր արտոնություններ են ստանում, դժգոհությունը մնում է: Երկրորդ, քննարկվող անհատականացումը արհեստականորեն առաջ է բերում անցում փոխադարձ կապի իրականացման աննախադեպ կարգին պետության գործունեության այլ կարևոր ոլորտներում: Երրորդ, իրականում հարկային արտոնությունները համարվում են պետական բյուջեից թաքցված դոտացիաներ:

Այս փաստացի առանձնահատկությունների հաշվի չառնելը առաջացնում է հանրապետական և տարածքային իշխանության մարմինների միջև հարաբերություններում սուր հակասություններ:

Այն մարմինները, որոնք կառավարում են հանրապետական բյուջեի ձևավորումը, բաշխում ու ծախսը, անկախ տարածքի բյուջետային ներդրման և բյուջետային միջոցների պահանջներից, ստանում են հնարավորություններ՝ ուղղելու բյուջետային հոսքը իրենց հայեցողությամբ:

Անխուսափելիորեն ստեղծվում է պետական շահերի առաջնայնությունը տեղական և տարածքային շահերի նկատմամբ: Առաջին, տարածաշրջաններում առաջ է գալիս կասկածանք, որ այդ տարածքները պետական բյուջե են փոխանցում ավելի շատ միջոցներ քան ստանում նրանից և տեղի է ունենում բյուջետային ռեսուրսների վերաբաշխում ոչ իրենց օգտին: Համապատասխանաբար թուլանում է դրամական կուտակումների սկզբնական աղբյուրների սեփականատերերի դրոշմապատճառները՝ փոխանցելու համապատասխան մասը պետբյուջե, ակտիվորեն մասնակցելով նրա ձևավորմանը:

Եթե պետական բյուջեն իրականացնում է հատկացումների դրույքաչափերի բարձրացում, նոր գանձույթների, հարկերի, պարտադիր վճարումների ներդրումով, որոնք կազմում են արտադրողի շահույթի հիմնական զանգվածը, ապա վերջիններս պատասխանում են շահույթաբերության մակարդակի կրճատմանը, ձգտելով ամբողջ եկամուտը ուղղել աշխատողների վարձատրմանը կամ դիմում են մույնիսկ ուղղակի արտադրության տեմպերի ընդհատմանը:

Դրանով է բացատրվում կենտրոնացված արտադրության կառավարման ցածր արդյունավետությունը: Կառավարման գործընթացների դեմոկրատացումը, որը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության կազմավորման ընթացքում, բարձրացնում է

տարածաշրջանների տնտեսական ինքնուրույնությունը, որը իր հետևից անխուսափելիորեն բերում է բյուջետային համակարգի ապակենտրոնացում: Դրա հետ մեկտեղ այդպիսի ապակենտրոնացումը օբյեկտիվորեն անհրաժեշտ երևույթ է տնտեսության շուկայական հարաբերությունների անցման տեսանկյունից, քանի որ բյուջեի մի մասի փոխանցումն ուղղակիորեն տեղական և տարածքային մարմինների տրամադրության տակ՝ նպաստում է տնտեսության ազատականացմանը:

Հաշվի առնելով ասվածը, ենթադրվում է բյուջետային կառուցվածքի գործունեության բարելավման երկու գլխավոր միտում: Առաջինի էությունը այն է, որ բյուջետային համակարգի ընդհանուր կառույցների և պետական բյուջեում եկամուտների մուտքերի պահպանմամբ էապես և բացարձակ մեծ մասը փոխանցվում է տարածքային, քաղաքային տեղական բյուջեների տրամադրության տակ: Այդպիսի վերաձևավորումը չի պահանջում նախկին բյուջետային համակարգի ձևավորված, կազմակերպված կառույցների վերացում: Բայց իր էությանը մեծան մոտեցումը կազմակերպված կառույցների վերացում: Բայց իր էությանը մեծան մոտեցումը նշանակում է բյուջետային հարաբերությունների ոչ թե վերափոխում այլ կունենվածի: Այլուս միտումը համարվում է ավելի առաջադիմական և նրա էությունը կայանում է նրանում, որ տեղական բյուջեները ձեռք են բերում ինքնուրույնություն, ինչպես եկամուտների ստացման, այնպես էլ սեփական բյուջեներից ծախսերի իրականացման ուղղումներում:

Տեղական բյուջեների եկամուտների մուտքերը կարող են ապահովել հաստատագրված հատկացման ձևով, որը արտացոլվում է հարկերի և վճարումների ընդհանուր չափաբաժիններում, ուղղվելով անմիջականորեն դեպի տարածքային բյուջեներ:

Ֆինանսական	ռեսուրսների	ստացման,	բաշխման	և	ծախսման
հնարավորությունները	ստեղծում են	հիմքեր՝	իրաժարվելու	տեղական	
ֆինանսաբյուջետային	մարմինների	կենտրոնական	անմիջական	ենթակայության	

Հայաստանի Հանրապետության և նրա սուբյեկտների միջև համաձայնեցված հարկա-բյուջետային քաղաքականության ձևավորման նոր մոտեցման հիմնական սկզբունքները իրացվում են պետության սոցիալական և քաղաքական դերի բարձրացման միջոցով, որոնք պարտավոր են նախ և առաջ ապահովել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ հասարակության անդամների հավասար իրավունք՝ սոցիալական որոշակի բարիքների ստացման ուղղությամբ:

Բյուջեների բաշխումը և հարկային ու այլ աղբյուրների վերաբաշխումը հանրապետության և տարածքային մարմինների միջև պետք է իրականացվի առաջինի իրական դերի համապատասխան և նպաստի երկրորդի նշված նպատակների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության հարկա-բյուջետային քաղաքականության սկզբունքների կազմը, հիմնվելով իշխանությունների տարբեր մակարդակների փոխադարձ գործողությունների վրա, կարող է ունենալ հետևյալ պատկերը.

1. Բյուջետային, հարկային և ֆինանսական հարաբերություններում բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքը, որը բացառելու է մեկը մյուսի նկատմամբ ունենալիք որոշակի առավելություններ կամ դիսկրիմինացիան (խտրականություն):
2. Հարկա-բյուջետային համակարգի միասնության սկզբունքը, և իշխանության տարբեր մարմինների պատասխանատվությունը դրա պահպանման համար:
3. Հայաստանի Հանրապետության մարմինների բյուջեների ինքնուրույնության սկզբունքները: Այն մասը, որը վերաբերվում է հարկերից հատկացումների նորմատիվների սահմանմանը և պարտադիր պատասխանատվությունը այդ որոշումների սոցիալական և քաղաքական հետևանքների համար:

4. Նպատակային ուղղվածություն ունեցող հարկերի ու զանձույթների տարբեր մարմինների միջև բաշխման սկզբունքը (ավտոճանապարհային, բնական ռեսուրսների օգտագործման, ներքին շահագործման վճարներ և այլն) :
5. Բոլոր մարմինների կողմից այն նորմատիվ ակտերի նախապատրաստման ուղղակի մասնակցության իրավունքը, որոնք առնչվում են եկամուտների և ծախսերի բաշխման հիմնախնդիրներին, այդ նորմատիվ ակտերի հստակ համաձայնեցման և ընդունման ընթացակարգերով :
6. Ցանկացած նորույթները, որոնք առնչվում են հարկա-բյուջետային հարաբերությունների հետ, պետք է պարունակեն ցուցումներ ԳՀ հարկա-բյուջետային վիճակի հետևանքների գնահատման և լրացուցիչ ծախսերի օբյեկտների վերաբերյալ :

Բնականաբար ձևավորված այս առաջարկությունները չեն ընդգրկում հանրապետական և տարածքային հարկա-բյուջետային փոխհարաբերությունների բոլոր պրոբլեմները: Նրանք ուղղված են միայն վերացնելու այն հանգույցային լարվածությունը, որը առկա է այդ փոխհարաբերություններում:

1. Օրենսդրորեն սահմանազատել իշխանության տարբեր մակարդակների նպատակահարմար է իրականացնել հետևյալ գործողությունները:
2. Փինանսավորման օբյեկտները, ճյուղերը և ոլորտները:
3. Մշակել մեթոդիկա և իրականացնել հաշվարկներ յուրաքանչյուր տարածքի բոլոր բյուջետային ծախսերի գծով:
4. Սահմանել տարածաշրջանի ֆինանսական դրության գնահատման չափանիշները:

Տեղական բյուջեների ամրապնդումը նպաստում է ընդլայնելու դրանց կարգավորման և խթանման ներգործությունը, ստեղծելու պայմաններ տարածքային սոցիալական և արտարկական ենթկառուցվածքի վրա ավելի ակտիվ ազդեցություն ունենալու նպատակով:

Պրոֆեսոր Օզերովը 1906թ. գրել է, որ առանց փողի չի կարելի կառավարել, իսկ փողի քանակությունը որոշվում է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ կառավարության վստահության աստիճանով: Այսինքն, շատ ավելի վստահությունը բերում է մեծ միջոցների տրամադրում, դրանով իսկ պատասխանատվության բարձրացում:

ժամանակակից պայմաններում, երբ լուրջ է դրված տեղական ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հարցը, առաջ է գալիս բյուջեների ինքնուրույն գործելու սկզբունքը, որը թույլ է տալիս համալրելու տեղական կառավարման կառույցների կառուցվածքների գործունեությունը իրական բովանդակությամբ, քանի որ այս դեպքում նրանք կարող են ինքնուրույնաբար տնօրինել այն ֆինանսական ռեսուրսները, որոնք հավաքագրվել են տվյալ տարածքում:

Տեղական ինքնակառավարման մարմինները, օգտագործելով բյուջետային լծակները, կարող են ակտիվ ներգործություն ունենալ ժողովրդական տարբեր ճյուղերի, ձեռնարկությունների տեղակայման և սոցիալական ենթակառուցվածքի կարգապահման համարվում են պատասխանատու ենթակառուցվածքի գծով: Մյուս կողմից, որոնք շատ երկրներում վերահսկում են էկոնոմիկայի զգալի մասը և շատ երկրներում կարգավորող գործընթացների հետ: Տեղական ինքնակառավարումը կարող է նպաստել գործարկության դեմ պայքարին:

Չամաշխարհային փորձը վկայում է, որ արտադրության կառավարման մեջ տարածքային սկզբունքի ուժեղացումը, հասարակական արտադրության

արդյունավետությունը բարձրացնում է, շեշտադրումը դնելով իշխանության տեղական մարմինների ծրագրերի վրա, արտադրության կարգավորման բյուջետային մեթոդների ընդլայնման ուղղությամբ:

Վերլուծելով տարբեր երկրների բյուջետային համակարգերի զարգացման միտումը կարելի է նշել հետևյալը:

Սկզբում ամբողջ աշխարհում գերակշռել է սոցիալ-տնտեսական գործընթացների կարգավորման մակրո-էկոնոմիկական կոնցեպցիան: Դրա համար մեծացել էր կենտրոնական բյուջեների դերը, որտեղ հավաքագրվում էր բյուջետային միջոցների հիմնական զանգվածը: Այսպես, օրինակ, ԳՖՀ-ում 1970-ական թ-ին Դաշնային բյուջեի տնտեսավարման միկրոտնտեսական սկզբունքների շեշտադրման հետ, առավել ակտիվորեն, շուկայական մեխանիզմների ներդրումով բյուջետային ծախսերի մասով ծանրության կենտրոնը աստիճանաբար տեղափոխվեց կառավարման ներքին օղակները:

Կենտրոնական կառավարման բաժինը կրճատելով, ավելանում է տեղական օղակների բաժինը: Տեղերում ֆինանսական ռեսուրսների աճը թույլ է տալիս տարածքներին դուրս գալ սոցիալ-տնտեսական գործունեության որակապես նոր մակարդակ:

Նման երևույթներ տեղի ունեցան նախկին խՍՀՄ-ում, հատկապես վերջին տարիներին: Էկոնոմիկայի շուկայական հարաբերությունների անցման հետ, ընդլայնվեց բոլոր մակարդակների կառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնությունը:

Տեղական իշխանության մարմինների իրավունքների ընդլայնումը ուղեկցվեց նրանց բյուջեների ծավալների մեծացմամբ՝ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական համալիր զարգացման ապահովման նպատակներով, նրանց ձևավորման և օգտագործման մեխանիզմների փոփոխմամբ:

Որպես կառավարման բյուջետային մեթոդների առանձնահատկություն կարելի է առանձնացնել հետևյալ հնարավորությունները.

1. Կախվածությունը պետական կառավարման մարմինների գործունեությունից:
2. Ուղղվածությունը հասարակական պահանջներին բավարարմանը:
3. Նպատակասլացությունը որպես ներգործության բնույթի կարգավորող:

Վերաբաշխման հարաբերությունների դրսևորման առանձնահատկությունը, որն ընդգրկում է «Բյուջե» հասկացությունը, կայանում է նրանում, որ դրանց արդյունքում ձևավորում են հասարակական պահանջներին բավարարման համար դրամական միջոցների պետական ֆոնդերը: Դրա հետ կապված, տեղական բյուջեների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տարածքային կառավարման մարմինները գործում են միայն պետական իշխանության իրավասությունների հիման վրա և այդ իրավասությունների սահմաններում:

Գարկերի և վճարների սահմանման իրավունքը տրվում է տեղական մարմիններին, տեղական ինքնակառավարման մասին ԳՀ օրենքի սահմաններում: Բացի դրանից, հասարակական տեղական իշխանությունը սահմանափակվում է տվյալ տարածքի վրա գտնվող օբյեկտներով և այդ տարածաշրջանում բնակվող ազգաբնակչության պահանջներով:

Կենտրոնացված կառավարման մեխանիզմը, օգտագործելով կառավարման բյուջետային մեթոդը, կոչված է ապահովելու այն միջոցները, որոնք իրականացնում են համապետական տարածքային քաղաքականություն, այդ թվում լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխումը, տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բյուջետային լծակների օգտագործումը պետք է նպաստի տարածաշրջանի սոցիալ տնտեսական համալիր զարգացմանը:

Կախված տարածքի զարգացման կառավարման կառուցվածքային մակարդակից, փոփոխվում է բյուջետային մեթոդների բնույթը: Օրինակ՝ պետության մակարդակով օգտագործվում են համապարտադիր հարկերի դրույքաչափերի սահմանումը և համայնքներին տրվող սուբվենցիաները: Իսկ համայնքային մակարդակով տեղական վճարումների ու հարկերի ներդրումը, բյուջեից նոր ֆինանսավորում և մասնակցությունը տարածքային ծրագրերի ֆինանսավորմանը:

Գոյություն ունեն տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման կարգավորման երկու խումբ, բյուջետային մեթոդներ, որոնք կապված են առաջին տարածքի, ճյուղի զարգացման համար ֆինասական ռեսուրսների տրամադրման հետ, երկրորդ՝ վարչատնտեսական միավորումների, տնտեսավարող մարմինների և առանձին քաղաքացիների տրամադրության տակ թողնվող ֆինանսական ռեսուրսների չափի կարգավորման հետ:

Բյուջեից միջոցների հատկացման բազմապիսի եղանակները կարելի է դիտել որպես տվյալ տարածաշրջանում սոցիալական գործընթացների կարգավորիչներ, իսկ բյուջետային ֆինանսավորման ձևերի կատարելագործումը պետք է ընթանա տեղիտնտեսական արտադրական ենթակառուցվածքի ներգործության խթանման և ազգաբնակչության սոցիալական պահանջմունքների բավարարման մակարդակի ուժեղացման ուղղությամբ:

Բյուջեի վճարումները հանդես են գալիս տնտեսական խթանումների ձևով եկամտի տարբեր արդյունքների ֆոսկալային, կարգավորող և խթանող նշանակության սերտ կապի պայմաններում: Կարելի է առանձնացնել սոցիալ-տնտեսական տարածաշրջանային գործընթացների վրա նրանց ներգործության հետևյալ ուղղությունները. ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամտների հարկային կարգավորում, բնական ռեսուրսների օգտագործման ֆինանսական կարգավորում:

Բյուջետային կարգավորման լծակների թվում հիմնական տեղը պատկանում է հարկերին: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հարկային մեթոդով բռնագանձում բյուջե: Սուբվենցիաների եկամտների մի մասի հարկային մեթոդով բռնագանձում բյուջե:

Հարկերի օգնությամբ լավագույն ձևով լուծվում են ոչ միայն ֆիսկալային, այլև վճարումների համակարգի առաջ:

Հարկային մեթոդների համակարգը ընդգրկում է բազմաբնույթ հարկա-տեսակները (ուղղակի և անուղղակի, կենտրոնական և համայնքային), յուրաքանչյուր հարկի դրույքաչափը, հարկերի գծով արտոնությունները:

համակայն որի նրանում ընդգրկված կանոնը շտապելի կոչ հղություն և հրիսայի
ծննդից հետո մեկ տարվա ընթացքում ապրտատի միջոց տալու դեպքի վրա:

1. տես Тадевосян В.С. Основы законодательства Союза ССР и союзных республик о браке и семье. "Советская юстиция", 1968г. N 17, էջ.5-7;
2. տես Коряев Н. Обязанности супругов по взаимному содержанию. "Советская юстиция", 1969, N 4, էջ.40;
3. Рабеч А.Н., Алиментные обязательства между супругами. Томск, 1974г., стр.45.

Դատարանները այսպիսի փաստի անկայության դեպքում իրավասու են ընդհանրապես
չկիրառել այս նորմը կամ հիի կնոջը ապրտատի միջոց տալու ամուսնու
պարտավորությունը սահմանափակել որոշակի ժամկետով: Այսինքն այդ կնոջ
օգտին ալիմենտ քանակաձևով միայն նրա հղություն և երիսայի ծննդից հետո մեկ

ստացող անպարտաճանաչ կողմը կարող է մուսուլման կերպով շքանցի նոր
ամուսնությունը՝ սպրտատի միջոց ստանալու իրավունքի պահպանման նպատակով:
Այդ իսկ պատճառով այն դեպքերում, երբ փաստացի ամուսնական
հարաբերություններում գտնվող ամուսինը, չի գրանցում ամուսնությունը, որպեսզի
շարունակի ալիմենտ ստանալ նախկին ամուսնուց, դատարանը պետք է կիրառի
օրենքի անպարտաճանաչ մասին ՀՀ Քաղ օր. 9-րդ հոդվածի կանոնները: Ինչ վերաբերում է
այն պայմանների վերանայուն, որոնք հիմք են հանդիսանում սպորտատի միջոց տալու
իրավունքը վերականգնելու համար, սույն պարզ չէ այն հարցը, թե կարո՞ղ է ստորոք
իրավաստ անձը ներկայացնել ալիմենտ բռնագանձելու նոր հայց, եթե նորից այդպիսի
հայց հարուցելու պայմաններ են ստա՞ջացել: Օրինակ, ալիմենտի բռնագանձումը
դադարեցվել է կարիքավորության վերանայու պատճառով կամ պարտավոր անձի
նյութական վիճակը վատացել է այն ստորիճան, որ նա ի վիճակի չէ նյութապես
օժանդակել իրավասու անձին:

Այնուհետև, ենթադրենք ալիմենտի իրավունք ունեցող անձը նորից դառնում է
կարիքավոր (ժառանգություն ստացած կամ շահած գումարները սպառվել են կամ
պարտավոր անձի նյութական վիճակը կրկին բարելավվել է՝ ստուտ բերք է ստացել
հաջողության է հասել ձեռներեցության բնագավառում): Այս իրավիճակը օրենքում
արտացոլված չէ: Կարելի է ենթադրել, որ այդպիսի հայց կարող է ներկայացվել
իրավասու անձի կողմից: Հետևաբար ալիմենտի բռնագանձումը դադարեցնելու
որոշման մեջ դատարանը պետք է այդպիսի նոր հայց ներկայացնելու հնարավորություն
վերապահի: Վճռի եզրափակիչ մասում հարկավոր է նշել, որ ալիմենտի բռնագանձումը
դադարեցվում է մինչև կողմերի նյութական վիճակի փոփոխությունը: Բայց այս դեպքում
խոսք կարող է գնալ, ոչ թե ալիմենտային պարտավորությունների դադարեցման, այլ
պարտավոր անձին ալիմենտ վճարելուց ազատելու կամ, որ ավելի ճիշտ է ալիմենտի
վճարման, մինչև կողմերի նյութական դրության փոփոխության ընդհատման մասին:
Փաստորեն այս դեպքում պարտավորությունը չի դադարում գործելուց, այլ միայն
ընդհատվում է և կարող է նորից այն վերականգնվել: Այսինքն կողմերի միջև նախկին
իրավահարաբերությունները կվերականգնվեն: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ ԱԸ
օր. 29-րդ հոդվածի ձևակերպումը ենթակա է փոփոխության (նկատի ունենալով նաև
անաշխատունակություն բառի բացատրումը՝ վերևում բերված հիմնավորում)՝
Առաջարկում ենք ՀՀ ընտանեկան նոր օրենսգրքում ունենալ հետևյալ
բովանդակությամբ հոդված.

«Մյուս ամուսնուց սպրտատի միջոց ստանալու իրավունքը, կողմերի միջև
ալիմենտային համաձայնագրի առկայության դեպքում, կորչում է.
- կողմերից մեկի մահվան պատճառով,
- այդ համաձայնագրի գործունեության ժամկետը լրանալու հետևանքով,
- համաձայն այդ համաձայնագրով նախատեսված հիմքերի:
Մյուս ամուսնուց դատական կարգով սպրտատի միջոց ստանալու իրավունքը
կորչում է.

սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն սպրտատի միջոց ստանալու
համար հիմք ծառայող պայմանների վերանայու դեպքում,
ամուսնավորված կարիքավոր ամուսնու նոր ամուսնության դեպքում,
ալիմենտ ստացող կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մահվան դեպքում:
Եթե ալիմենտի բռնագանձումը կատարվել է դատարանի վճռով, սույն այն
ամուսինը, որից ալիմենտ է բռնագանձվում, իրավասու է բռնագանձումը դադարեցնելու
հայցով դիմել դատարան:
Մյուս ամուսնուց սպրտատի միջոց ստանալու իրավունքը կարող է
վերականգնվել»:

Եթե ամուսիններից մեկը, որը սպրտատի միջոց է ստանում մյուսից, տեղափոխվում
է ժերմանոց՝ ամբողջովին պետական՝ հովանավորության ներքո, գտնվում է որևէ
հասարակական կամ այլ կազմակերպության, կամ մասնավոր անձի խնամքի ներքո
(օրինակ, եթե կնքվում է բնակարանի օտարման պայուսակիր ցմառ հոգավոր

պայմանով), սույն դա կարող է հիմք հանդիսանալ ալիմենտ վճարողի համար
ալիմենտի վճարումից ազատելու համար: Այս դեպքում, պարզ է, որ վերանում է
ամուսնու կարիքավորության պայմանը: Այսինքն՝ այս դեպքում ևս կարիքավոր
ամուսինը կորցնում է մյուս ամուսնուց սպրտատի միջոց ստանալու իրավունքը, եթե
չկան բացառիկ հանգամանքներ, որոնց պատճառով լրացուցիչ ծախսերի
անհրաժեշտություն է ստա՞ջանում, (առանձնահատուկ խնամք, բուժում, հատուկ սնունդ
և այլն):

ПРАВОВОЕ ВОСПИТАНИЕ С.Н. АПИЯН

Обеспечение высокой юридической культуры в гражданском обществе невозможно без системы правового воспитания. Конечно, "правовое воспитание" не следует понимать упрощенно: оно не сводится только к пропаганде, разъяснению законов, а включает еще воздействие на человека всех сторон правовой жизни общества. Одновременно "правовое воспитание" содержит в себе влияние всей системы общественных отношений, которые в своей совокупности формируют высокую юридическую культуру, устойчивые правовые утверждения, необходимые для данного общества.

Основной объект воздействия права при правовом воспитании - правовое сознание, устойчиво положительно ориентированное, развитое и находящееся на должном уровне развития в обществе. В данном случае имеется в виду правовое сознание индивида, коллектива, общества в целом. Как справедливо подчеркивает Н.Л. Гранат, "идеологическое воздействие на общественное правосознание означает соответствующее воздействие на групповое и индивидуальное сознание, правовое воспитание отдельных индивидов и их групп...". Это, по его мнению, в конечном счете, обуславливает формирование и развитие общественного правосознания, так как различные виды правосознания находятся между собой в диалектической взаимосвязи и взаимозависимости. Добавим, что еще и взаимообусловленности. Так будет, на наш взгляд, более правильно.

Главным содержанием правового воспитания является приобщение людей к знаниям о государстве, праве, законности, правопорядке, правах и обязанностях, свободе личности. На основе этого у граждан должна выработаться устойчивая ориентация на законопослушное поведение, стабильная ориентация на идеалы и образы примерного поведения в демократическом обществе.

Необходимо отметить, что, несмотря на свою актуальность, проблема правового воспитания в отечественной юридической литературе почти не исследована, а в зарубежной - она ограничена расширенными определениями

См. Гранат Н.: Правовое воспитание: понятие, формы и методы осуществления. - В кн.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. - Под ред. профессора М.Н. Марченко, - М.: "Зерцало", 1998, с. 396.

его понятия. Так, по мнению Т.В. Синюкова правовое воспитание - это целенаправленная деятельность государства, общественных организаций, отдельных граждан по передаче юридического опыта. Кроме того, сюда входит систематическое воздействие на сознание и поведение человека в целях формирования определенных позитивных представлений, взглядов, ценностных ориентаций, установок, обеспечивающих соблюдение, исполнение и использование юридических норм. Другие российские ученые-юристы Р.К. Русинов и А.П. Семитко считают, что правовое воспитание - это целенаправленная деятельность по трансляции (передаче) правовой культуры, правового опыта, правовых идеалов и механизмов разрешения конфликтов в обществе от одного поколения к другому. В зарубежной юридической науке встречаются и более внятные, говоря иными словами, более упрощенные определения понятия "правовое воспитание". "Под правовым воспитанием, - пишет Н.Л. Гранат, - принято понимать целенаправленную систематическую деятельность государства, его органов и их служащих, общественных объединений и трудовых коллективов по формированию и повышению правового сознания и правовой культуры". Учитывая многоплановый характер понятия "правовое воспитание", некоторые ученые-юристы рассматривают его в широком и узком смысле. Так, по мнению Р.К. Русинова, А.П. Семенко, в широком смысле речь идет, скорее, не о правовом воспитании, "а о правовой специализации человека, когда он "воспитывается" окружающей обстановкой в целом, всей юридической практикой и поведением людей, должностных лиц - представителей государственного аппарата в правовой сфере". Разумеется, при этом у субъектов, осуществляющих правовую деятельность, должна отсутствовать прямая цель оказания

См.: Синюков Т.В. Правовое воспитание: понятие, формы, методы. - В кн.: Теория государства и права. Курс лекций. - Под ред. профессоров Н.И. Матузова, А.В. Малько. - М.: "Юрист". 1997, с. 568.

См.: Русинов Р.К., Семенко А.П. Правовое воспитание и правовое обучение. - В кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. - М.: "Норма-Инфра-М", 1998, с. 336.

Гранат Н.: Правовое воспитание: понятие, формы и методы осуществления. - В кн.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. - Отв. ред. профессор М.Н. Марченко, - М.: "Зерцало", 1998, с. 395.

См.: Русинов Р.К., Семенко А.П. Правовое воспитание и правовое обучение. - В кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. - М.: "Норма-Инфра-М", 1998, с. 336.

на других правовоспитательное воздействие. Однако, как показывают проведенные по этой тематике исследования, несмотря на это запрет, такое воздействие на окружающих все-таки оказывается, что обусловлено надстроечным характером воспитательной деятельности.

В узком смысле понятие "правовое воспитание" Р.К. Русиновым и А.П. Семитко толкуется как целенаправленная деятельность, направленная на "повышение правовой культуры человека, группы людей и общества в целом".

Таким образом, понятие "правовое воспитание" в узком смысле отличается от понятия "правовое воспитание" в широком смысле целенаправленностью своего воздействия на соответствующие объекты. Думается, что в этом определении отсутствует слово "непосредственной". Наличие его в определении понятия "правовое воспитание" в узком смысле заметно обогатило бы его содержание и сделало бы последнее более четким и специфичным. А вообще для ясности под понятием "правовое воспитание" в узком смысле, на наш взгляд, следовало бы понимать непосредственную деятельность соответствующих органов, учреждений и заведений государства по привитию к лицам знаний о праве, государстве, правопорядке и законности.

Опыт древнеримских юристов показывает, что воспитание правосознания необходимо начинать как можно раньше. Вспомним, как это делалось в Древнем Риме. Закон XII таблиц выставляли на городской площади. От всякого вступающего в ряды граждан юноши требовалось знание законов наизусть. Считалось, что без этого нельзя выполнять обязанности гражданина, в особенности судебские. На суде уже гражданин не мог "отговариваться незнанием законов".

Такой подход представляется нам более справедливым и гуманным, чем тот, который основан сегодня на следующем постулате: "незнание закона не освобождает от ответственности".

В нашей стране в учебные планы многих школ включено преподавание учебного курса

"Основы государства и права", что естественно, способствует
См.: Русинов Р.К., Семитко А.П. Правовое воспитание и правовое обучение. - В кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. - М.: "Норма-Инфра-М", 1998, с. 336.

Подробнее об этом см.: Черниловский З.М. Всеобщая история государства и права. Учебник для вузов. - М.: "Высшая школа", 1983, с. 79-80.

привитию знаний о государстве и праве к детям юношеского возраста. Мы, конечно, далеки от римских традиций, основанных на особой заботе государства о развитии юриспруденции, но уже первые шаги, предпринятые коллективом ученых-юристов юридического факультета Ереванского государственного университета, явившегося инициатором создания названной книги, уже свидетельствуют о правильности избранного пути. Конечно, сейчас в Республике Армения отсутствуют благоприятные условия для формирования более высокого уровня правовой культуры масс, поднятия престижа правовой науки среди широких слоев населения, как это делалось в Древнем Риме.

Однако эти трудности можно преодолеть, здесь "игра стоит свеч". Говоря иными словами, необходимо изыскивать на стороне всевозможные средства (конечно, с использованием института спонсорства) для дальнейшего развития правовой системы нашей страны. В первую очередь требуются новые, более активные усилия по разработке научных основ правового воспитания населения Республики Армения. Большое место необходимо отводить в дальнейшем правовой пропаганде через все имеющиеся в нашей стране средства массовой информации, систему общества

"Знание" и другие каналы воздействия на членов общества. Изучение данной проблемы показывает, что в Республике Армения нужно разработать на научной основе такую систему рационального воздействия на психику, волю, сознание и чувства людей, чтобы способствовать складыванию у них зрелого и четкого позитивного отношения к праву и иным социальным нормам, действующим в армянском демократическом обществе. Действуя подобным образом, мы в конечном счете можем выработать в гражданине социально-активное поведение. Разумеется, достигнутым следует считать только то, что вошло и укрепилось в сознании человека, стало для него хорошей с точки зрения общества привычкой, нормой должного поведения. Не случайно "правовое воспитание" имеет целью развитие правового сознания человека и правовой культуры общества в целом.

Правовое воспитание - сложная и многоаспектная форма деятельности.

См.: Русинов Р.К., Семитко А.П. Правовое воспитание и правовое обучение. - В кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. - М.: "Норма-Инфра-М", 1998, с. 336.

Оно является составным компонентом идеологической функции любого государства. С его помощью в обществе распространяются воззрения (представления) о праве и правопорядке. При этом используются все имеющиеся в арсенале государства средства: радио, телевидение, печать, искусство, высшие и средние специальные учебные заведения. "По мере развития и совершенствования государственности, - пишет Н.Л. Гранат, - изыскиваются все более искусные способы и формы идеологической обработки сознания масс, все более обособляется и специализируется правовое воспитание как самостоятельный вид деятельности государства, его органов и их служащих, а также органов местного самоуправления и общества в целом".

Поскольку жизнь не стоит на одном месте, а постоянно развивается и совершенствуется, то содержание, объекты, формы и способы воздействия на сознание масс и отдельных граждан также изменяются, приводятся в соответствие с требованиями времени. Но как бы они не изменялись и совершенствовались, в целом их сущность в цивилизованных государствах остается стабильной. Отдельные обновления тактического характера существенно не влияют на эту сущность, а также функции правовоспитательной деятельности.

Неизменным (в любом государстве) остается и следующий постулат: правовое воспитание невозможно без правового обучения. Они органически связаны между собой. Правовое воспитание не может происходить без правового обучения. Последнее так или иначе оказывает и воспитательный эффект, который очень важен для правового становления личности.

История свидетельствует о том, что роль воспитателя могут играть не только отдельные, специально на то уполномоченные организации, учреждения и заведения, но и отдельные личности, признанные в правовом мире авторитетами. Вспомним то внимание, которое уделялось праву, правовому воспитанию, а также почет, воздаваемый имени и мнению выдающихся юристов в Древнем Риме. Среди них особое значение придавалось сочинениям, толкованиям и консультациям пяти корифеев римской юриспруденции: Папиниана, стоящего на первом месте, Павла,

См. Гранат Н.Л. Правовое воспитание: понятие, формы и методы осуществления. - В кн.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. - Под ред. профессора М.Н. Марченко, - М.: "Зеркало", 1998, с. 395.

Ульпиана, Гая (автора дошедшего до нас учебника по праву, который назывался "Инструкцией") и Модестина. О том, какое значение придавалось в Древнем Риме правовому воспитанию свидетельствует следующий факт: законом 426 г. было установлено, что взгляды и указания других римских юристов - Сцеволы, Сабина, Юлиана и других - должны приниматься во внимание, если они не противоречат высказываниям юристов первой пятерки. Важно подчеркнуть, что мнение Папиниана было признано "побеждающим одного, но уступающим двум". Словом, право и научное комментирование права, осуществляемое в воспитательных целях, составляли как бы единое целое в Древнем Риме: на консультацию выдающегося юриста, данную по конкретному делу, можно было ссылаться как на закон. Одно это открывало широкие возможности для развития, усовершенствования и пропаганды права и юриспруденции внутри страны и за ее пределами.

Говоря о славных традициях римской юриспруденции, нельзя не забывать и то, что она воспитывала в юристах высокое чувство ответственности и преданности делу. Отклонив приказ императора Каракала (правил с 211 по 217 гг. н.э.), сочинить оправдание зверского убийства Геты - брата Каракалы, - совершенного в целях устранения соправителя, Папиниан, пренебрегая собственной участью, заявил, что оправдание убийства труднее самого убийства. За эту смелость и честность он был зверски казнен.

Организации и личности, призванные заниматься правовым воспитанием населения, должны бороться за утверждение предусмотренных хартиями идеалов в области защиты прав человека, за установление правильных взаимоотношений между личностью и государством, за исключение правового нигилизма, несущего за собой произвол, анархию, хаос.

В связи с этим главное внимание в деле повышения правовой культуры нашего общества должно обращаться на правовое обучение, информирование населения о существующих юридических нормах, в которых содержатся обязательные для исполнения предписания, о целях принимаемых законов и ознакомление с их содержанием. По нашему мнению, особенно важно ознакомление населения Республики Армения с традициями и опытом

Черниловский З.М. Всеобщая история государства и права. Учебник для вузов. - М.: "Высшая школа", 1983, с. 79.

правовоспитательной работы тех стран, уровень правовой культуры которых выше, чем у нас. Такой страной, по праву, может стать Россия, чей опыт в этой области всегда был поучителен. Имена таких выдающихся российских юристов-теоретиков, как В.Н. Кудрявцев, С.С. Алексеев, Д.А. Керимов, Ю.А. Тихомиров прямо ассоциируются с высокой правовой культурой, умением глубоко и всесторонне осуществлять правососпитательную деятельность.

В нашей стране очень важно обучать этой деятельности будущих юристов - профессионалов. Надо добиваться того, чтобы, учась в стенах юридических факультетов, они основную цель своей будущей деятельности видели в пропаганде идеалов, связанных с защитой прав и свобод человека и гражданина от всевозможного произвола, даже идущего от общества и государства. Основным неизменным кредо их жизни должна стать защита интересов "слабого от сильного, что является одним из центральных постулатов общемировой, общечеловеческой морали, нравственности и культуры в целом".

Таким образом, изучение проблем, связанных с раскрытием содержания понятия "правовое воспитание" имеет сегодня не только теоретическое (познавательное), но и огромное практическое значение. Оно позволит глубже осознать сущность этой важнейшей деятельности, обогатит наше представление о роли права в нашей жизни, как важнейшего общесоциального регулятора. Но, конечно, главное, которое может быть достигнуто эффективно проводимой правососпитательной работой будет создание законопослушного общества.

См.: Русинов Р.К., Семитко А.П. Правовое воспитание и правовое обучение. - В кн.: Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов. - М.: "Норма-Инфра-М", 1998, с. 335.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀԱՍՎԱԳՈՒԹՅՈՒՆԸ Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տվյալ հիմնախնդիրն իրավաբանական գրականության մեջ քիչ ուսումնասիրվածներից է: Այն պատճառները, որոնցով բացատրվում է իրավաբան գիտնականների՝ դրանով լուրջ զբաղվելու ցանկությունը չունենալը, ավելի քան շատ են, բայց դրանցից զվառվորները, մեր կարծիքով, հետևյալներն են. առաջինը՝ դրա չափազանց բարդությունը, և երկրորդը՝ դրա բովանդակությունը կազմող որոշ դրույթների՝ մեզ հայտնի վերացականությունը:

Ենթադրվում է, որ իրավաբանական պատասխանատվության համակարգի հետազոտումը հարկ է սկսել, նախ և առաջ, իր իսկ՝ իրավաբանական պատասխանատվության իրավունքի տեսության կենտրոնական և կարևորագույն ինստիտուտներից մեկի, բովանդակության բացահայտումից: Ի դեպ, չնայած իր որոշակի ուսումնասիրվածությանը, սույն հիմնախնդիրը մաս կարիք ունի տեսական խոր իմաստավորման, քանի որ դրա վերաբերյալ գրականության մեջ գոյություն ունեցող կարծիքների տարաբևեռայնությունը դժվարացնում է դրա բովանդակության վերջնական սահմանման համար ուղիների որոնումը: Այլ կերպ ասած, այն մասին, թե ինչպես և ինչ պատճառների ու պայմանների ազդեցությամբ է առաջանում իրավաբանական պատասխանատվությունը և ինչ է այն իրենից ներկայացնում, սույնի գիտական պատկերացումներում չկա միանշանակ լուծում: Սակայն բոլոր հետազոտողների կողմից, որպես կանոն, առանձնացվում է պարտադիր ձևական (ոչ էական) հատկանիշ՝ բազմաձև իրավաբանական պատասխանատվության կարևոր սանուն է անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանության կարևոր միջոց¹: Դրա հետ մեկտեղ, մշվում է, որ այն հանդիսանում է իրավունքի համակարգի և իրավական կարգավորման կառուցակարգի անբաժանելի, առաջատար բաղադրամասը:

Իրավաբանական պատասխանատվության համակարգը բազմատեսակետային է: Հենց այդ բազմատեսակետայնությունն է նպաստում իրավաբանական պատասխանատվության ձևերի ընդհանուր և յուրահատուկ հատկանիշների առավել հստակ բա-

¹ Хропанюк В. Н. Теория государства и права (2-е издание, дополненное, исправленное). Под редакцией профессора Стрекозова В.Т.-М.: "ДТД", 1995, с. 334

ցահայտմանը: Իրավունքի տեսությունում վաղուց ի վեր արձատավորվել է այն կարծիքը, ըստ որի իրավաբանական պատասխանատվության համակարգը որոշվում է տվյալ հասարակության իրավունքի համակարգով²:

Իրավունք կազմող իրավական նորմերը, չնայած իրենցով կարգավորվող հասարակական հարաբերությունների բազմազանությանը, պետք է ունենան ներքին միասնություն և համաձայնեցվածություն, որպեսզի ապահովեն հասարակության մեջ իրավական կարգավորման ընդհանուր սոցիալ-քաղաքական խնդրի լուծումը:

Իրավունքի համակարգը ձևավորվում է պատմականորեն և հանդիսանում է հասարակական ու սուբյեկտիվ կարգի շատ գործոնների գործողության արդյունք: Հատկապես կարևոր է այդ հաշվի առնել այսօր, երբ երկրում ընթանում է պետականության և իրավունքի հին համակարգի ոչնչացման և նորի ստեղծման գործընթաց: Այդ պայմաններում իրավունքի ազգային համակարգը չի լինի լիարժեք և արդյունավետ, եթե իր ներսում չձշակի պաշտպանիչ կառուցակարգեր, որոնք կապահովեն իր բնականոն գործելը: Իրավական պաշտպանիչ կառուցակարգերից մեկն է հանդիսանում իրավաբանական պատասխանատվությունը:

Իրավունքի առաջացումը և զարգացումը սերտորեն կապված են իրավաբանական պատասխանատվություն հասկացության, դրա ձևի, հիմունքների ու իրավունքի սուբյեկտների իրավաբանական պատասխանատվության չափի հատուկ սահմանման և իրավաբանական պատասխանատվության համակարգի ստեղծման հետ, որը կընդգրկի իրավունքի բոլոր ճյուղերը և կառուցված կլինի միասնական սկզբունքների, նպատակների և խնդիրների հիման վրա՝ պայմանավորված ազգային-պետական շինարարության պրակտիկայով:

Օտարերկրյա իրավական համակարգերի համեմատական և պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական պատասխանատվության ցանկացած համակարգ ոչ այլ ինչ է, քան իրավունքի ոլորտում տվյալ հասարակության արժեքների համակարգի որոշակիացում:

Մեր երկրում իրավաբանական պատասխանատվության տեսության և պրակտիկայի հետագա զարգացումը «տեղապտույտի մեջ է» դրա համակարգի անբավարար ձշակման պատճառով: Ներկայումս իրավաբանական պատասխանատվության գոյու-

² Общая теория государства и права. -Л.: издат. Ленинградского университета, 1974, с.394-395

թյուն ունեցող դասակարգումը կարիք ունի ճշգրտման և լրացման: Նույնիսկ, ինչպես թվում է, այնպիսի ոչ բարդ հարցի վերաբերյալ, ինչպիսին իրավաբանական պատասխանատվության տեսակների քանակն է, իրավաբանական գրականության մեջ կան տարբեր տեսակետներ: Այսպես, «Պետության և իրավունքի տեսություն» գրքում, որի հեղինակն է Վ.Ն. Խրոպանյուկը, նշվում է, որ, կախված կատարված քաղաքացիական, վարչական կամ քրեական իրավախախտման բնույթից, տարանջատվում են քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվությունները¹: Պետության և իրավունքի տեսության դասագրքերից մեկում խոսքը գնում է իրավաբանական պատասխանատվության չորս, ընդ որում հիմնական ձևերի մասին. քրեաիրավական, քաղաքացիական պատասխանատվության հիմն, մյուսները՝ վեց ձև:

Իրավաբանական պատասխանատվությունն սկսվում է իրավական նորմերի կանխադրույթների խախտումով և դրսևորվում է իրավախախտողի նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների կիրառման ձևով: Վ. Մ. Լազարևի կարծիքով, իրավաբանական պատասխանատվությունն իրավախախտողի վրա դրվող պատիժն է: Այն պարտադրում է իրավախախտում թույլ տված մեղավոր անձին ենթարկել ինչ-որ բարիքներից զրկման՝ ազատությունից, գույքի տնօրինման իրավունքից և այլն: Հեղի-մասնակցում է, որ կախված այն բանից, թե որ իրավունքի ճյուղի նորմերով է նախատեսվում իրավախախտողի իրավաբանական պատասխանատվությունը, այն կարող է լինել՝ քրեական, վարչական, քաղաքացիական, կարգապահական²: Ինչպես հայտնի է, կարգապահական պատասխանատվությունը նախատեսվում է ոչ միայն աշխատանքային, այլ նաև վարչական իրավունքում: Հարկ է հիշեցնել և այն համգամանքը, որ կա կարգապահական պատասխանատվություն, իսկ կարգապահական իրավունք չկա:

Ենթադրվում է, որ իրավաբանական պատասխանատվության և դրա առանձին տեսակների ուսումնասիրման ժամանակ անպայման անհրաժեշտ է որոշել այն առաջանցող տարրերի միասնությունը և փոխադարձ կապը:

¹ Хропанюк В. Н. Теория государства и права (2-е издание, дополненное, исправленное). Под редакцией профессора Стрехозова В.Т.-М.: "ДТД", 1995, с.335.
² Теория государства и права. Под редакцией А. М. Васильева.-М., 1983, с. 367
² Лазарев В.М. Основы государства и права Российской Федерации. - Волгоград, 1993, с. 29

ելնելով դրանից, կարելի է տալ իրավաբանական պատասխանատվության սահմանումը: Մեր կարծիքով, իրավաբանական պատասխանատվության համակարգը դա նորմերի, ինստիտուտների և դրա առանձին տեսակների միագումարը և փոխգործողությունն է, որոնց պահպանումն ապահովում է իրավակարգը, իսկ իրավախախտում կատարելիս՝ որոնց կիրառումը վերականգնում է իրավակարգը:

Իրավաբանական պատասխանատվության համակարգային միասնությունն ապահովվում է իրավական կարգավորման առարկայով ու մեթոդով և պատասխանատվության միասնական սկզբունքներով:

Իրավաբանական պատասխանատվության տեսակետից որպես իրավական կարգավորման առարկա ընկալվում են հասարակական հարաբերությունները, որոնք կրում են իրավաբանական պատասխանատվության նորմերի ազդեցությունը: Իրավաբանական պատասխանատվության նորմերի իրավական կարգավորման առարկա են հանդիսանում հատուկ օգտակար, պատասխանատու գործողությունները կամ անգործությունը, իսկ իրավախախտում կատարելիս՝ հակաիրավական գործողությունները կամ անգործությունը:

Ինչպես հայտնի է, իրավական կարգավորման մեթոդն առաջացնում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության տարբեր միջոցներ և, պետության կողմից օգտագործվող՝ իրավահարաբերությունների սուբյեկտների միջև իրավական կապերի հաստատման գործելաձևեր:

Իրավախախտման համար իրավաբանական պատասխանատվության հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդի կարևոր առանձնահատկությունը հանդիսանում է իրավաբանական փաստերի բնույթը, որոնց հետ իրավունքի նորմը կապում է պատասխանատվության իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Որպես այդպիսի իրավաբանական փաստ հանդես է գալիս իրավախախտողի վարքագիծը, որը կազմավորում է իրավախախտման կազմը: Եթե սուբյեկտի վարքագիծը չի համընկնում իրավախախտման հատկանիշին, ապա տվյալ անձը ենթակա չէ իրավաբանական պատասխանատվության¹:

Ասվածը վկայում է այն մասին, որ տեսության և իրավական իրողության զարգացման պահանջը պայմանավորված է իրավունքի բոլոր ճյուղերում իրավաբանական

¹ Хропанюк В. Н. Теория государства и права (2-е издание, дополненное, исправленное). 1995, с.3:

պատասխանատվության էության հետազոտման անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ արդեն փորձեր են արվել մշակել պատասխանատվության տեսությունը՝ աշխատանքային իրավունքում², քրեադատավարական իրավունքում³, պետական իրավունքում⁴ և իրավունքի որոշ այլ ճյուղերում:

Սկսած 70-ական թվականներից, փորձեր են արվում բացահայտել քրեադատավարական պատասխանատվության բովանդակությունը՝ դրական (պոզիտիվ) ձևով: Այսպես, Ջ.Ֆ. Կովրիգի կարծիքով, այդ պատասխանատվության բովանդակությունը ներառում է.

ա) պահանջներ, որոնք ներկայացվում են քրեական դատավարության մասնակիցներին՝ նրանց կողմից իրենց դատավարական իրավունքների օգտագործման և պարտականությունների կատարման առնչությամբ.

բ) նրանց կողմից իրավունքների ակտիվորեն օգտագործման և պարտականությունների բարեխղճորեն կատարման անհրաժեշտության գիտակցումը.

գ) այն միջոցների համակարգը, որոնցով ապահովվում են իրավունքների օգտագործումը և պարտականությունների կատարումը.

դ) պարտականությունների կատարման և իրավունքների օգտագործման ժամանակ բարեխղճության գնահատականը¹:

Անհրաժեշտ է նշել, որ պոզիտիվ քրեադատավարական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է դատավարության մասնակցի և պետության միջև ընդհանուր երաշխավորող (ընդհանուր իրավահարաբերություն) կապ, որը ենթադրում է պետության իրավունքը՝ պահանջել դատավարության սուբյեկտներից կատարելու իրենց դատավարական պարտականությունները: Դատավարական պարտականությունների չկատարումը հանգեցնում է բացասական (նեգատիվ) պատասխանատվության առաջացման և պատժամիջոցների կիրառման: Քրեադատավարական պատասխանատվությունը Ջ. Ֆ. Կովրիգը սահմանում է որպես ի շահ արդարադատություն գործելու անհրաժեշտություն՝ իրավունքի օգտագործմամբ և պարտականությունների

² Մանրամասը տես Сыроватская А. А. Ответственность по советскому трудовому праву.-М., 1974.
³ Մանրամասը տես Элькинд П. С. Цели и средства их достижения в советском уголовно-процессуальном праве.-Л., 1976.
⁴ Մանրամասը տես Боброва Н. А., Зржевская Т. Д. Ответственность в системе гражданско-конституционных норм.- Воронеж, 1985.
¹ Ковриг З.Ф. Уголовно-процессуальная ответственность. - Воронеж, 1984, с. 33-59

կատարմամբ, ինչպես նաև իրավական ներգործության միջոցների կրճատման պարտականություններ՝ ոչ բարեխիղճ վարքագծի դեպքում:

Չետաքրքիր մտքեր են արտահայտել իրավաբան գիտնականները պետական իրավունքի ուղղությամբ պատասխանատվության առնչությամբ: Օրինակ, Ն. Ա. Բոբրովան և Տ. Դ. Ջրժևսկայան պետական իրավունքի ուղղությամբ պատասխանատվությունը դիտում են որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ, իսկ սահմանադրական պատասխանատվությունը համարում են ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական պատասխանատվության բարձրագույն ձև: Որպես սահմանադրական պատասխանատվություն՝ այդ հեղինակները հասկանում են իշխանության պատասխանատվություն՝ պետական ապարատի և դրա ներկայացուցիչների իրավաստեղծ և իրավակիրառական գործունեության մեջ օրինականության վիճակի համար²:

Խորհելով այդ գաղափարների մասին, ուզում ենք ասել հետևյալը. առաջինը՝ իրավական պատասխանատվությունն ինքնին հանդիսանում է սոցիալական պատասխանատվության տեսակ, երկրորդը՝ դժվար է պատկերացնել պետական իշխանության իրավաբանական պատասխանատվությունն իրավաստեղծ գործունեության մեջ օրինականության վիճակի համար:

Դրա հետ մեկտեղ, հարկ է համաձայնել Ն. Ա. Բոբրովայի և Տ. Դ. Ջրժևսկայայի հետ՝ պատասխանատվության երկու հայտնի տեսակետների հարաբերակցության առումով նրանց եզրահանգումներին: Իսկապես, չի կարելի խոսել բացառիկորեն հետադարձ պատասխանատվությանը (օրինակ, քրեական իրավունքը) հենվող իրավունքի ճյուղերի և առավելապես պոզիտիվ պատասխանատվությամբ (օրինակ, պետական իրավունքը) ճյուղերի գոյության մասին: Քրեական պատասխանատվությունը՝ իր պատժամիջոցներով, ինչպես որ պատասխանատվության ճյուղ տեսակները, ամենից առաջ նպատակ ունի ոչ թե պատժել, այլ զերծ պահել իրավախախտում կատարելուց:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին ժամանակների տեսական հետազոտություններում ոչ լիարժեքորեն է հաշվի առնվում նյութական իրավունքի և իրավաբանական պատասխանատվության իրավահարաբերություններում գործընթացի միջև կապերի և հարաբերակցության հիմնախնդիրը, որոնց առկայությամբ դատավարական ձևից

² Боброва Н.А., Зржевская Т. Д. Ответственность в системе гражданских конституционных норм. Воронеж, 1985, с. 77

դուրս պատասխանատվության ենթարկելն անհնարին է: Նեգատիվ պատասխանատվությունը սահմանվում և իրականացվում է նյութական-իրավական նորմերի հիման վրա, սակայն դրա դիմադիկան սահմանվում է դատավարական նորմերով:

Կարծում ենք, որ իրավական գրականության մեջ կարևոր տեսական հարցերի շարքը պետք է դասել հետադարձ պատասխանատվության տեսակների դասակարգումը՝ ըստ իրավախախտումների տեսակների և պատժամիջոցների բնույթի (քրեական, վարչական, գույքային, կարգապահական): Սույն դասակարգումը բույլ է տալիս պարզել իրավաբանական պատասխանատվության այս կամ այն տեսակի զարգացման ընդհանուր օրինաչափությունները՝ անկախ ճյուղային պարտականությունից: Դրա հետ մեկտեղ, դասակարգումը, կախված ճյուղային պատկանելությունից, առավել կարևոր նշանակություն ունի օրենսդրության և իրավակիրառական գործունեության կատարելագործման համար¹: Բացի դրանից, ինչպես մեզ թվում է, որ ըստ ճյուղային պատկանելության պատասխանատվության հիման վրա, որ ըստ ճյուղային պատկանելության համար և ազդեցություն է դասակարգումն առավել մատչելի է քաղաքացիների համար և ազդեցություն է գործում նրանց իրավագիտակցության ու իրավական կուլտուրայի վրա:

Արդի փուլում, իրավունքի բոլոր ճյուղերում իրավաբանական պատասխանատվության հայեցակարգն առաջադրում է մի շարք այլ փոխկապակցված տեսական հիմնախնդիրներ: Այսպես, մեր կարծիքով, առավել համակողմանի հետազոտման կարիք ունի իրավահարաբերությունների և իրավախախտումների համակարգը, ինչպես նաև իրավական պատասխանատվության և իրավական պարտականության հարաբերակցության հարցը:

Չայտնի է, որ իրավունքի բոլոր ճյուղերում իրավահարաբերությունները գործում են և՛ կարգավորիչ, և՛ պաշտպանիչ ուղղությամբ: Իրավաբանական պատասխանատվության հիմնական կապն իրավահարաբերության հետ կայանում է նրանում, որ չի կարող լինել իրավաբանական պատասխանատվություն ուղեկցում է բոլոր իրավաբանական գործունեություններին, և իրավունքի յուրաքանչյուր ճյուղում իրավահարաբերությունների յուրաքանչյուր տեսակին ուղեկցում է իրավաբանական

¹ Хропанюк В. Н. Теория государства и права (2-е издание, дополненное, исправленное). Под редакцией профессора Стрекозова В.Т.-М.: "ДТД", 1995, с. 259-262.

պատասխանատվության որոշակի տեսակ: Իրավական կարգավորման գործընթացում սկզբում ներառվում է պոզիտիվ պատասխանատվության կառուցակարգը¹: Իսկ իրավախախտում կատարելու դեպքում ներառվում է հետադարձ (ճեզատիվ) իրավաբանական պատասխանատվության կառուցակարգը և կիրառվում են պետական հարկադրանքի համապատասխան միջոցներ, դրա համար էլ իրավունքի մեկ ճյուղի շրջանակներում պատասխանատվության նորմերի միջև գոյություն ունի սերտ կապ:

Չնայած որոշակի մշակվածությանը, իրավաբանական պատասխանատվության հայեցակարգն այսօր իրավունքի բոլոր ճյուղերում կարիք ունի ավելի խոր ուսումնասիրման: Մեր կարծիքով, այն կնպաստի օրենսդրության համակարգի իրավական կարգավորման կառուցակարգի հետագա կատարելագործմանը, քանզի օրենսդրի առջև կդնի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների պատասխանատվության ավելի հստակ սահմանման սկզբունքային խնդիր:

Կարևոր է նշել, որ իրավաբանական պատասխանատվության համակարգը չի կարող լինել իր իսկ մեջ պարփակված, այն սերտորեն կապված է արտաքին միջավայրի հետ, կրում է դրա ազդեցությունը և ցուցաբերում է հակազդեցություն դրա վրա:

Գիտականորեն ապացուցված է, որ իրավաբանական պատասխանատվության համակարգը՝ որպես ենթահամակարգի տարր, մտնում է համասոցիալական պատասխանատվության համակարգի մեջ²: Զաղաքական վարչակարգի և տնտեսության վիճակը, որքան էլ որ այն ժխտեն, էապես անդրադառնում է համասոցիալական պատասխանատվության վրա, իսկ վերջինս՝ իրավականի:

Ինչպես հայտնի է, 80-ական թվականներին մեր հանրապետությունում, ինչպես և ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, նկատելիորեն տնկացվեց սոցիալական պատասխանատվությունը, բազմապատկվեցին բացասական-իրավական երևույթները: Իրավաբանական պատասխանատվության կիրառման հարցերը հաճախ լուծվում էին կուսակցական մարմինների կողմից: Իհարկե, վճռորոշ դեր կատարեցին իշխանության

¹ Մանրանալ տեղա Theoria государства и права. Курс лекций. Под редак. профессора Марченко Н. (2-е издание, переработанное, дополненное).-М.: "Зерцало-Темис", 1996, с. 465.
² Մանրանալ տեղա Спиридонов Л. И. Теория государства и права. Учебник.-М.: "Проспект", 1996, 278-285

միջանցքների պաշտոնատար անձինք, ազգակցական, բարեկամական կապերը և հարաբերությունները Դա «հեռախոսային իրավունքի» պետության ժամանակն էր:

Ներկայումս իրավաբանական պատասխանատվության համակարգը պետք է գործի տնտեսական համակարգի, կրթության և դատախազության, աշխատանքային հարաբերությունների համակարգերի և կանխարգելիչ բնույթի մյուս համակարգերի հետ համաձայնեցված: Երկիրն ապրում է ծանր անցումային ժամանակաշրջան, և դրա առանձնահատկությունները հաշվի առնելը հարկավոր է հասարակական հարաբերությունների իրական վիճակն ըմբռնելու և իրավաբանական պատասխանատվության գործառույթները սահմանելու համար:

Նկատի ունենալով բեմայի բարդությունը, անհրաժեշտություն և հնարավորություն չկա այստեղ բնության առնել իրավական պատասխանատվության մյուս փոխադարձ կապերը և շփումները սոցիալական պատասխանատվության մյուս համակարգերի հետ: Կարող ենք միայն արձանագրել իրավաբանական պատասխանատվության մասին օրենսդրության հետ մնալը կենսապահանջներից և մեր երկրի պատմության ժամանակակից փուլում իրավաբանական պատասխանատվության ինքնին նվազ արդյունավետությունը:

Գաղտնիք չէ, որ իրավական պատասխանատվության արդյունավետություն հասկացության հիմնախնդիրները, իրավաբանական գրականության մեջ գիտական վերլուծության են ենթարկվել ռախկինում ևս: Դրա վերաբերյալ արտահայտվել են նաև հետաքրքիր դատողություններ և արվել են իրավագետի միտքն արթնացնող եզրահանգումներ: Ընդհանրացնելով դրանք, կարելի է անել մի շարք առաջարկություններ՝ ուղղված իրավական պատասխանատվության արդյունավետության բարձրացմանը: Մեր կարծիքով, իրավական պատասխանատվության վիճակը համապատասխանելու կախված է երեք հիմնական գործոններից: Առաջինը՝ համապատասխան իրավական նորմեր գրելու իրավաբանական տեխնիկայի մակարդակից: Երկրորդը՝ իրավակիրառող մարմինների պաշտոնատար անձանց պրոֆեսիոնալ պատրաստվածության և գործունեության մակարդակից: Երրորդը՝ երկրում իրավաբանական պատասխանատվության արդյունավետության վրա ազդող նաև այլ գործոններ, բայց նշենք միայն նրանք, որոնք հանդիսանում են իրավական պատասխանատվության հիմնական գործոնները:

Շոշափելով այդ հիմնախնդիրը, ուզում ենք նշել որոշ թերություններ, որոնք ևս ներգործում են իրավաբանական պատասխանատվության արդյունավետության մեջ: Այդ թերություններն անհրաժեշտ է ամենից առաջ փնտրել օրենսդրության մեջ: Օրինակ, կարելի է առանձնացնել քրեական օրենքի իրավակիրառման արդյունավետության վրա ազդող հետևյալ հանգամանքները.

ա) քրեական իրավունքում գնահատիչ հասկացությունների հիմնախնդիրը.
բ) քրեական օրենքի օրենսդրական սահմանումների և տերմինոլոգիայի միասնականության հարցը.

գ) քրեաիրավական նորմերի արհեստական մրցակցության գիտակցաբար «ստեղծումը» և այլն:

Ավելացնենք, որ նման հիմնախնդիրներ հանդիպում են նաև իրավունքի մյուս ճյուղերում, հատկապես՝ վարչականում: Սակայն դրանց ուսումնասիրությունը հատուկ հիմնախնդիր է, որը պահանջում է համալիր մոտեցում և հաշվի առնել առանձին վերջրած իրավունքի յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունը.

Ամփոփելով ասվածը, կարելի է արձանագրել, որ իրավաբանական պատասխանատվության համակարգ հասկացության բացահայտումը հսկայական նշանակություն ունի դրա արդյունավետության բարձրացման վրա ազդող գործոնների մշակման համար: Վերջիններս կարող են կատարել նաև յուրաքանչյուր երկրում ժամանակի պահանջներին համապատասխան իրավաբանական պատասխանատվության համակարգի բարելավմանը նպաստող չափանիշների դեր:

ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՆԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂՁԱՐԱՐՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒ Մ.ԹՈՎՄԱՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում ընթացող պետական և հասարակական ունեցվածքի սեփականաշնորհումը հիմք է դրել արձատական, տնտեսական, սոցիալ-մշակութային նոր վերափոխումների: Դրանք տանում են դեպի իրավական պետության նյութա-տեխնիկական բազայի ստեղծում, շուկայական նոր հարաբերությունների զարգացում, նոր քաղաքացու ձևաորում, որի աշխարհահայացքի հիմքը կազմում է բարու և չարի համամարդկային արժեքների մասին հստակ պատկերացումը: Այդ ամենը նախադրյալներ է ստեղծում մեր երկրում իրավախախտումների աստիճանական կրճատման համար: Վերջին տարիներին նկատելի է ոչ միայն պրոֆեսիոնալ հանցագործությունների կրճատումը, այլև վտանգավոր ոտնձգությունների նվազումը: Այս մասին, մասնավորապես, առաջին անգամ նշվեց 1996թ. դեկտեմբերի 6-ին կայացած Հայաստանի Հանրապետության ԵԳ և ԱԱ նախարարության կոլեգիայի նիստում:¹

Զննարկվեցին հանրապետության ներքին գործերի մարմինների օպերատիվ ծառայությունների գործունեության արդյունքները 11 ամիսների ընթացքում: Չնայած ջննարկման ընթացքում նշվեցին առանձին թերություններ, սակայն այս ուղղությամբ կատարած աշխատանքները գնահատվեցին դրական:²

Սակայն լիովին հանցավոր դոսևորումներից մենք չենք ազատվել: Բավական է նշել, որ 1997թ-ին (10 ամիսների ընթացքում) հանրապետությունում գրանցվել է 10290 հանցագործություն, ինչը 3,8 % ավել է, քան 1993-ին՝ 9903: Սակայն 2478 հանցագործություն կատարված է եղել անցած տարիներին: Ծանր հանցագործությունների քանակը աճել է 9,5 %-ով (2306-2547), իսկ 5,9 %-ով է կրճատվել է դիտավորյալ սպանությունների (համապատասխանաբար՝ 118 և 129), ինչպես նաև բռնարարությունների, բնակարանների և ավտոմեքենաների գողությունների քանակը:

¹ Դիտելով հանցագործությունների գրանցման և հաշվառման ոլորտում օրինականության ասպարեզման, նախարարության հասարակայնության հետ կապերի վարչության դերը, բացահայտելու հարցերը, կոլեգիան մշակել է մի շարք արդյունավետ միջոցառումներ, ուղղված երկրի տարածքում օրինախախտումների դեմ ներքին գործերի մարմինների հետագա կայացրի ուժեղացմանը:
² Տես «Կոլեգիայի նիստում», «02» թերթ, 1998, 12 դեկտեմբերի:

Ընդհանուր առմամբ, չնայած որոշ քանակական աճի, հանցագործության տեմպերը 1997թ. նվազելու միտում ունեին: Այսպես, բարձրագույն զՅ ԵԳՆ արտադրության մեջ գտնվող հանցագործությունների բացառությամբ տոկոսը:

Քրեական հետաքննության կարծիքով այն կազմել է 75,1% (անցյալում 71,6%), այդ թվում ծանր հանցագործությունների գծով 61% (անցյալում 54%):¹

Նշված շրջանում կատարված հանցագործությունները կարելի է բաժանել 50 տեսակների և տարատեսակների, որից 41 տեսակի բացահայտվելությունը աճել է: Դա լուրջ նվաճում էր: Ըստ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարի կարծիքի, իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ մնում էր «բարդ, սակայն ոչ տագնապալի»:²

1997-ին բացահայտվել է քննիչների, դատախազների և դատավորների կաշառակերության 28 դեպք: Բացահայտված են հետախուզության մեջ գտնվող 1667 հանցագործ, որոնցից 1000-ը՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար: Հարկ է նշել, որ նրանցից 207-ը վերադարձվել են ԱՊՀ-ի երկրներից, որի համար էլ ծախսվել է շուրջ 200 հազար ԱՄՆ դոլար:

Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրինապահ մարմինների աշխատակիցներից ոմանք էլ չեն գտնվել իրենց բարձրության վրա: Այդ են վկայում արձանագրված փաստերը՝ նրանք կարողացել են քաջցնել 55 հանցագործություն, որից 18-ը՝ կենտրոնական ծառայությունների, 37-ը՝ ներքին գործերի տարածաշրջանային մարմինների կողմից: Այս առնչությամբ կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 63 աշխատակիցներ, այդ թվում ղեկավար աշխատողներից 16-ը:

Դեռ չեն վերացել ոչ միայն շարքային արարքների դեպքերը, այլ օրինապահ մարմինների աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունները: 1997-ի 10 ամիսների ընթացքում տարբեր արարքների համար պատժվել են համակարգի 1764 աշխատակիցներ, 63-ի նկատմամբ հարուցվել են քրեական գործեր, իսկ 805-ը ազատվել են զբաղեցրած պաշտոններից: Հիմնականում նրանք մեղադրվել են կաշառակերության, ծառայողական դիրքը չարաչափելու համար: Նշված շրջանում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել են 87 դիտավորյալ սպանության և 31 սպանության փորձ, որոնց մեծ մասը երևանում:³

¹ Տես «Հանցագործության հիմնահարցը հարկ է լուծել համալիր» «Գոլոս Արմենի», 1997թ., 13 նոյեմբերի:
² Տես «Կոլեգիայի նիստում», «02» թերթ, 1998, 12 դեկտեմբերի:
³ Տես նույն տեղում:

Հարկ է նշել, որ 22 սպանություն կատարվել է հրազենի, իսկ 20-ը սառը զենքի գործադրմամբ: Հնցագործությունների զգալի մասը կատարվել է տուժողների ազգականների կողմից, կենցաղային հողի վրա ծագած վեճերից՝ շահադիտական նպատակով: 1997թ-ին կանխամտածած սպանությունները անցած տարվա 56,6%-ից աճել է 67,4-ի, բացահայտվել է նախկինում կատարված 9 հանցագործություն:¹

Այդ նույն տարում գրանցվել է 494 տնտեսական հանցագործություն (1996-ի համեմատությամբ՝ 36,8%-ով ավելի, ընդ որում անձնական գույքի խոշոր չափերի հափշտակումների քանակը աճել է 2 անգամ): Հանցագործությունների ոլորտում տնտեսական հանցագործությունները կազմում է 4,8%, բացահայտվելությունը՝ 88,6%: Պետությանը հասցված վնասից վերականգնվել է զրեթե 1 միլիարդ 200 միլիոն դրամ: Նկատելի աճ է արձանագրվում պետական ոլորտում հանցագործ տարրերի ներթափանցման և սովորային տնտեսության կազմակերպիչների հետ դրանց սերտաճի գործում:

Դիտարկվող ժամանակաընթացքում հասարակայնության ամենալայն արձագանքին արժանացան այն հայտնի գործերը, որոնց առանձնացվում էին կապված (2,8 մլն ԱՄՆ դոլ. չափով) չինական վարկի, «Հայքատնտեսություն» պետական ձեռնարկության կողմից համաշխարհային բանկից 10,5 մլն ԱՄՆ դոլարի պետական ձեռնարկության կողմից համաշխարհային բանկից 47 մլն. հնդկական ռուպի վարկի հետ, աղետի գոտու համար նախատեսված 47 մլն. հնդկական ռուպի, յուրացնելու հետ, կեղծ փաստաթղթերով որոշ շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների սեփականաշնորհումը Հայկոռպի վարչության կողմից և այլն: Երևանի «Լույս» արտադրական միավորման գլխավոր լաճպերի գործարանում կատարված ստուգումները բացահայտեցին հափշտակության մի շարք փաստեր և արդյունքը՝ «տարօրինակ տնտեսվարության» հետևանքով 5 մլրդ. դրամ կուտակված պարտքը:²

1997-ի 11 ամիսների ընթացքում գրանցվել է 11052 հանցագործության դեպք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10857-ի դիմաց և աճը՝ 195 դեպք է կան 1,8%, ընդ որում, 1998-ին գրանցված հանցագործությունների ընդհանուր զանգվածի մեջ 2565 հանցագործություն կատարվել են նախորդ տարիներից: Հարկ է նշել, որ 1998թ. 1-ին եռամսյակի, կիսամյակի, 9 ամիսների վերլուծությունները (նախորդ տարվա նույն ժամանակահատվածների հետ համեմատած) ցույց են տալիս, որ

¹ Տես «Կոլեգիայի նիստում», «02» թերթ, 1998, 12 դեկտեմբերի:
² Տես նույն տեղում:

կայուն ձևով նվազում են բոլոր գծերով արձանագրված հանցագործությունների դեպքերը, և սա, ինքնին, դրական երևույթ է:¹

Ջրեական հետախուզության գծով արձանագրված 6355 հանցագործություններից (1997թ. նույն ժամանակահատվածում 5711) 2761-ը ծանր հանցագործություններ են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2573-ի դիմաց, այսինքն՝ ծանր հանցագործություններն աճել են շուրջ 9%-ով, որին զուգընթաց հարկ է փաստել, որ ընթացիկ տարվա 3, 6, 9 ամիսների համեմատական վերլուծությամբ առկա է աճի տեմպերի նվազման միտում: Ավելացնենք նաև, որ քրեական հետախուզության գծով գրանցված հանցագործություններից 1029-ը կատարվել են նախորդ տարիներին:

Չնայելով հանցագործությունների՝ որակ չկազմող ընդհանուր աճին, որոշ կատեգորիայի հանցագործությունների թիվը ջնհարկվող ժամանակահատվածում նվազել է: Այսպես, դիտավորյալ սպանության դեպքերը նվազել են 10-ով (104-94), սպանության փորձերը՝ 7-ով (38-31), բռնաբարությանը և բռնաբարության փորձերը՝ 9 դեպքով, անձնական գույքի խոշոր և ասանձնապես խոշոր չափերի գողությունները՝ 65 դեպքով: 15 դեպքով էլ նվազել են նաև մահվան ելքով մահապարհատրանսպորտային պատահարները:

Գնահատման է արժանի հանցավորության աճի տեմպերի վերլուծությունը: Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված հանցագործությունների որոշ թվական աճով հանդերձ, տեմպերն ընդհանրապես նվազման միտում ունեն, և կարելի է կանխատեսել, որ առաջիկայում այդ զարգացումները կպահպանվեն: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կազմում անձնական ունեցվածքի դեմ ուղղված հանցավոր ոտնձգությունների թիվը կազմել է 1978՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1759-ի դիմաց, աճը կազմել է 219 դեպք կամ 12,4 %, որը մեծամասամբ պայմանավորված է խարդախության միջոցով անձնական ունեցվածքի հափշտակումների դեպքերի աճով, որոնցով արձանագրվել են 60,2 %-ով ավելի հանցադեպեր, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում (284-454), ընդ որում, այստեսակ հանցագործությունների տեսակարար կշիռն ընթացիկ ժամանակամիջոցում անձնական ունեցվածքի գողության կազմում 23 % է 1997-ի նույն ժամանակահատվածի 16 %-ի դիմաց:²

¹ Տես «Հանցավորություն 97» (11 ամիս), թվեր, փաստեր, վերլուծություն.- «02» թերթ, 1997թ. 11 դեկտեմբ.

² Տես նույն տեղում:

Թվային տվյալների այս համադրումը պատահականորեն չի արվում. դեռևս կան բազմաթիվ «քաղաքացիներ» (թվերի աճը հենց դրա մասին է խոսում), ովքեր «բացառիկ» վստահություն են ձեռք բերում և իրենց խարդախանքների տարրոտայնը զցում մարդկանց, որի պատճառով նրանց զգալի մասը կորցնում է իր ապրուստի վերջին ունեցվածքը, հանգամանք, որի վրա էլ բեվեռում ենք մեր հայրենակիցների ուշադրությունը և զգոնությունը: Վստահորեն պետք է արձանագրել, որ խարդախության 454 դեպքը դեռևս շատ հեռու են մեր իրականությունում կատարվող այդպիսի իրողությունների թվական տվյալներից:

Որոշակի ակտիվացում է նկատվում բնրամոլության, բնրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ոլորտում. արձանագրվել է 514 այդպիսի հանցագործություն, որը 16 %-ով ավելի է, քան 1997-ի նույն ժամանակամիջոցում: Սա, իհարկե, այդ ոլորտի պայքարը կազմակերպող և համակարգող նորաստեղծ վարչության և նրա տարածքային օղակների ակտիվ, հաստատական աշխատանքի արդյունքի ասիմանը է:

Միաժամանակ պետք է փաստել, որ այս բնագավառում պայքարի արդյունավետության ցուցանիշների լրիվությունը կարելի է երաշխավորել միայն հանրապետությունում բնրամոլների քանակը գոնե մոտավոր ճշտելու պայմանով (ըստ բնրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության տվյալների՝ այս պահին հաշվառման մեջ է գտնվում 620 անձ):

Նկատելիորեն ակտիվացել է տնտեսության ոլորտում կատարված հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման գործընթացը: Հայտնաբերվել և բացահայտվել են 541 հանցադեպեր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 337-ի դիմաց, աճը կազմել է 204 դեպք, կամ 60,5%: Հաշվի առնելով տնտեսության ոլորտում կատարվող հանցատեսակների ջողարկվածությունը, հանցավորության դեմ պայքարի այս ոլորտում պետք է էլ ավելի նպատակամղված և նպատակալաց աշխատանքներ կազմակերպել, գործընթացը դարձնել էլ ավելի դյուրընթաց:¹

Հասարակությանը լրջորեն անհանգստացնում է տնտեսության ոլորտում կատարվող չարաչափումների դեպքերը, և մենք ակնկալում ենք, որ յուրաքանչյուր անձի քաղաքացիական պարտքը պետք է լինի, օժանդակելու և անձնակարևորը՝ մերկացնելու և վնասագերծելու հանցագործներին ու հանցավոր խմբերին:

¹ Տես նույն տեղում:

